



**Հեղափոխական խմբի ղեկավար՝**

**ԳԱՅԱՆԵ ԱՎԱԳՅԱՆ**

յրնարեսագիտության թեկնածու, դոցենտ

**Հեղափոխական խմբի անդամներ՝**

**ՍԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

յրնարեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ**

յրնարեսագիտության թեկնածու, դոցենտ

**ՔՆԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

յրնարեսագիտության թեկնածու, դոցենտ

**ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

յրնարեսագիտության թեկնածու, ասիստենտ

**ԱԻԴԱ ՄԻՐՈՒՄՅԱՆ**

ՀՊՏՀ ասպիրանտ

**ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՀՊՏՀ «Մակրոյրնարեսական վերլուծություն»

մասնագիտության մագիստրանտ

**ՍԱԹԵՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ՀՊՏՀ ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետի

բակալավրիատի ուսանող

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ  
2010-2021 ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ  
ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

DOI: 10.52174/978-9939-61-265-2

**Ե Ր Ե Վ Ա Ն**

**«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

**2023**

ՀՏԴ 338.43  
ԳՄԴ 65.32  
Գ 680

*Հրապարակության է երաշխավորել  
ՀՊՏՀ գիտական խորհուրդը*

**Մասնագիտական խմբագիր՝**

**Թ. Մկրտչյան**

տ.գ.դ., պրոֆեսոր

**Գրախոսներ՝**

**Ֆ. Մայիլյան**

տ.գ.դ., պրոֆեսոր

**Է. Ղազարյան**

տ.գ.դ., պրոֆեսոր

**Խմբագրական խորհուրդ՝**

**Դ. Գալոյան**

տ.գ.դ., պրոֆեսոր

**Թ. Մկրտչյան**

տ.գ.դ., պրոֆեսոր

**Դ. Հախվերդյան**

տ.գ.դ., պրոֆեսոր

**Գ. Նազարյան**

տ.գ.թ., դոցենտ

**Գյուղատնտեսության ոլորտում 2010-2021 թթ. պետական օժանդակության  
Գ 680 ծրագրերի արդյունավետության գնահատում / Գ. Ավագյան և ուրիշներ.- Եր.:  
Տստեսագետ, 2023.- 180 էջ («Ամբերդ» մատենաշար 62):**

Հետազոտությունը նվիրված է ՀՀ գյուղատնտեսության ոլորտի դինամիկ զարգացումը խոչընդոտող էական գործոնների բացահայտմանը, ոլորտի պետական աջակցության ծրագրերի արդյունավետության գնահատմանը, ոլորտի զարգացման առաջնահերթությունների մատնանշմանը: Վերլուծության մեջ թիրախային են համարվել ինչպես գյուղատնտեսության ոլորտը, այնպես էլ դրա պետական աջակցությունը և պետական քաղաքականությունը գնահատող ամենատարբեր ցուցանիշներ:

Հետազոտության շրջանակում հատկորոշվել են ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի արտադրության և արտահանման ծավալների վրա ազդեցություն ունեցող առանձին գործոններ, տնտեսաչափական մեթոդների կիրառմամբ գնահատվել են այդ գործոնների ազդեցության չափն ու նշանակալիությունը: Պետական աջակցության միջոցների և արդյունքային ցուցանիշների համադրումը հնարավորություն է ընձեռել բացահայտելու ծախսված միջոցների արդյունավետությունն ու աջակցության ծրագրերի նպատակահարմարությունը: Իրականացվել է նաև ոլորտի օժանդակության ծրագրերի անուղղակի գնահատում՝ ծրագրային նպատակադրումներից շեղումների բացահայտման և շահառուների շրջանում կատարված հարցումների ճանապարհով: Վերլուծությունների և գնահատումների հիման վրա ներկայացվել են պետական աջակցության ծրագրերի արդյունավետության մակարդակի բարձրացմանն ուղղված առաջարկություններ:

ՀՏԴ 338.43

ԳՄԴ 65.32

ISBN 978-9939-61-265-2

© «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2023

© «Տստեսագետ» հրատարակչություն, 2023

<b>Ներածություն</b> .....	5
---------------------------	---

**Գլուխ 1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ**

- 1.1. Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող պետական աջակցության արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը..... 9
- 1.2. Գյուղատնտեսության ոլորտում վարվող քաղաքականության միջազգային փորձը և տեղայնացման հնարավորությունները... 22

**Գլուխ 2. ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ, ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- 2.1. ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ցուցանիշների շարժընթացի և կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունը..... 57
- 2.2. ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության վրա ազդող գործոնները

**Գլուխ 3. ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

- 3.1. ՀՀ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերն ու միջոցառումները..... 72
- 3.2. ՀՀ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի արդյունավետության գնահատումը՝ նպատակադրումներից շեղումների մոտեցմամբ..... 81
- 3.3. ՀՀ գյուղատնտեսության պետական օժանդակության ծրագրերի արդյունավետության գնահատումը՝ ոլորտի տնտեսավարողների և փորձագետների շրջանում հարցման միջոցով..... 107

<b>Եզրակացություն</b> .....	123
-----------------------------	-----

<b>Օգտագործված գրականություն</b> .....	129
--	-----

<b>Հավելված</b> .....	135
-----------------------	-----

<b>Համառոտագրեր</b> .....	158
---------------------------	-----



Գյուղատնտեսության ոլորտի նշանակությունը ՀՀ տնտեսության համար մեծ է, քանի որ անընդհատ փոփոխվող աշխարհաքաղաքական վիճակի պայմաններում կարևոր է սննդի հասանելիության և պարենային անվտանգության ապահովումը, որի հիմնական երաշխավորը գյուղատնտեսության ոլորտն է: Գյուղատնտեսությունը, արդյունաբերության և շինարարության հետ միասին, ՀՀ տնտեսության հիմնասյուներից է: Ոլորտի գերակայությունը պայմանավորված է նաև երկրի պարենային անվտանգության, մարզային, հատկապես գյուղական համայնքների բնակչության եկամուտների ստեղծման, կենսամակարդակի ապահովման և այդ բնակավայրերի զարգացման գործընթացում ունեցած դերակատարությամբ:

ՀՀ գյուղատնտեսության որպես ժամանակակից, արագ կերպով զարգացող ոլորտի վերափոխումը կանխում են երկու հիմնական սահմանափակումներ: Նախևառաջ, ըստ վարելահողերի տարածքների, հողի սեփականությունը հատվածական է, որտեղ գերակշռում են տնօրինվող ռեսուրսների և արտադրության փոքր չափերով, մասամբ փակ տնտեսությունները: Երկրորդ՝ առաջադեմ տեխնոլոգիաների և կառավարման փորձի համատարած յուրացման պակասը էականորեն սահմանափակում է ոլորտին դեպի արտահանումն իրապես ավելի կողմնորոշելու և ապրանքներն ու շուկաները բազմազանեցնելու հնարավորությունները: Ճյուղի կայուն զարգացման վրա դեռևս մեծ է բնական աղետների և կլիմայական փոփոխությունների ազդեցությունը, սակայն հենց այստեղ է կարևորվում նշված ռիսկերի կառավարմանն ուղղված արդյունավետ պետական օժանդակության ծրագրերի իրականացումը:

2010-2020 թվականներին ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսության ոլորտին է հատկացվել ընդհանուր ծախսերի միջինում շուրջ 2.5%-ը, որը կազմել է տարեկան շուրջ 32.2 մլրդ դրամ: Ընդ որում, գյուղատնտեսության ոլորտի ծախսերը 2016 թ.-ից հետո զգալիորեն նվազել են՝ 2020 թ. հասնելով ընդհանուր ծախսերի 1.7%-ին: Այդ ժամանակահատվածը հենց համապատասխանում է գյուղատնտեսության ոլորտի ավելացված արժեքի անկման շրջանին: 2021 թ. բյուջեով նախատեսված է եղել գյուղատնտեսության ոլորտի ծախսերի որոշակի աճ՝ հասցնելով դրանք 57 մլրդ դրամի կամ բյուջեի ընդհանուր ծախսերի 2.6%-ին: Վերջինս, սակայն, զգալիորեն ցածր է ուսումնասիրվող ժամանակահատվածի առավելագույն ցուցանիշներից՝ 2010 և 2011 թվականներին արձանագրված 4.2% և 4.3%-ից:

Գյուղատնտեսության ոլորտում առկա հիմնախնդիրները, միջազգային և տարածաշրջանային զարգացումների հետ մեկտեղ, առավել դժվարացրել են պարենային անվտանգության և հետագա տնտեսական աճի ապահովման հնարավորությունները: Ներկա իրողության պայմաններում առավել կարևորվում է ոլորտի հիմնախնդիրներին ՀՀ կառավարության՝ պետական օժանդակության ծրագրերի համապատասխանության գնահատման խնդիրը, քանի որ մի կողմից առաջացել է պետական բյուջեի ռեսուրսների առավել թիրախային օգտագործ-

ման խիստ անհրաժեշտություն (հաշվի առնելով պետական պարտքի գերազանցումն օրենքով սահմանված 60% սահմանային շեմը), իսկ մյուս կողմից՝ մեծացել գյուղատնտեսության ոլորտին աջակցության կարիքը՝ կապված պարարտանյութերի գների աճի և, սպառողական գների աճով պայմանավորված, գյուղական բնակավայրերում ապրող բնակչության սոցիալական խնդիրների սրման հետ:

Այս առումով, սույն հետազոտության շրջանակներում հատկապես կարևորվում են ՀՀ գյուղատնտեսության ոլորտի զարգացման խոչընդոտների բացահայտումը, դրանց հաղթահարման, առկա խնդիրների լուծման, գյուղական համայնքների հնարավորությունների ավելացման հնարավոր տարբերակների առաջարկումը, ՀՀ գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական օժանդակության ծրագրերի արդյունավետության բարձրացման համալիր միջոցառումների մշակումը:

**Հետազոտության նպատակը** ՀՀ գյուղատնտեսության ոլորտում 2010-2021 թթ. իրականացված պետական օժանդակության ծրագրերի արդյունավետության գնահատմամբ ՀՀ գյուղատնտեսության ոլորտում պետական օժանդակության հետագա ծրագրերի արդյունավետության բարձրացմանը միտված համալիր միջոցառումների մշակումն է:

Հետազոտության նպատակի իրագործման տեսանկյունից, կարևորվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել պետական օժանդակության ծրագրերի գնահատման մեթոդաբանությունը, բացահայտել գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական օժանդակության ծրագրերի գնահատման մեթոդական առանձնահատկությունները, ներկայացնել գնահատման մեթոդական մոտեցումներ,
- վերլուծել ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ցուցանիշների շարժընթացը, կառուցվածքային տեղաշարժերը, բացահայտել այդ փոփոխությունները պայմանավորող էական գործոնները,
- SWOT վերլուծությամբ բացահայտել ՀՀ գյուղատնտեսության և գյուղական զարգացման ուժեղ և թույլ կողմերը, մատնանշել ոլորտի հիմնախնդիրները, զարգացման հիմնական խոչընդոտները,
- վերլուծել գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ցուցանիշները, ապրանքային և աշխարհագրական կառուցվածքները,
- բացահայտել գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության վրա ազդող հիմնական գործոնները, գնահատել դրանց ազդեցությունները, գտնել գյուղատնտեսական արտադրանքի արտահանման հնարավորություններ,
- ուսումնասիրել ՀՀ կառավարության՝ գյուղատնտեսության ոլորտում 2010-2021 թթ. իրականացված պետական օժանդակության ծրագրերը, բացահայտել այդ ծրագրերի՝ ոլորտի հիմնախնդիրներին անհամապատասխանության ճեղքը,
- ուսումնասիրել գյուղատնտեսության ոլորտում վարվող տնտեսական քաղաքականության միջազգային փորձը,

- բացահայտել ՀՀ գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական օժանդակության ծրագրերի արդյունավետության բարձրացման հնարավորությունները,
- ներկայացնել ՀՀ գյուղատնտեսության ոլորտում առկա խոչընդոտների հաղթահարմանը, խնդիրների լուծմանը, գյուղական համայնքների հնարավորությունների ավելացմանը միտված քայլեր, մշակել ՀՀ գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական օժանդակության ծրագրերի արդյունավետության բարձրացման համալիր միջոցառումներ:

### **Հետազոտության մեթոդաբանական, տեղեկատվական հիմքերը:**

Հետազոտության մեթոդաբանական հենքը կազմում են հետազոտության առարկայի, այն է՝ գյուղատնտեսության ոլորտում իրականացված պետական օժանդակության ծրագրերի արդյունավետության գնահատման, գյուղատնտեսության զարգացման խոչընդոտների բացահայտման՝ միջազգային փորձում լայնորեն կիրառվող մեթոդները, սկզբունքները և կատեգորիաները: Կիրառվել են ՀՀ գյուղատնտեսության ոլորտի առկա վիճակը բնութագրող վիճակագրական տվյալների խմբավորման, համակարգային, դինամիկ վերլուծության, ընդհանրացման մեթոդները:

Պետական օժանդակության ծրագրերի արդյունավետության գնահատման նպատակով կիրառվել է նպատակադրումներից շեղումների և շահառուների ու փորձագետների շրջանում հարցումների տվյալների վերլուծությունը, ինչը հնարավորություն է տվել գնահատելու պետական քաղաքականության ազդեցությունը գյուղատնտեսության ոլորտի հիմնական ցուցանիշների վրա: Հետազոտության նպատակի իրագործման և հիմնական խնդիրների լուծման համար օգտագործվել են ինչպես տնտեսաչափական (էկոնոմետրիկ) մոդելներ՝ հիմնված վիճակագրական տվյալների միջոցով տնտեսագիտական և վարքագծային կապերի բացահայտման վրա, այնպես էլ կառուցվածքային մոդելներ՝ ուղղված գյուղատնտեսական քաղաքականության միջոցառումների ազդեցությունների ուղղությունների և չափերի գնահատմանը: Մասնավորապես՝ տնտեսաչափական մոդելների կիրառմամբ բացահայտվել են ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության վրա ազդող հիմնական գործոնները:

Վերլուծության ընթացքում թիրախային են համարվել ինչպես գյուղատնտեսության ոլորտը, այնպես էլ դրա պետական աջակցությունը և պետական քաղաքականությունը գնահատող ամենատարբեր ցուցանիշներ: Մասնավորապես՝ հավաքագրվել և մշակվել է ՀՀ գյուղատնտեսության զարգացումները բնութագրող հնարավորինս լայն տեղեկատվական բազա, վերլուծվել են ՀՀ տնտեսության առաջնային հատվածը, գյուղատնտեսության հիմնական ենթաճյուղերի արտադրողականությունը, գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ապրանքային և աշխարհագրական կառուցվածքները բնութագրող ցուցանիշներ: Տվյալների մշակումը և վերլուծությունը իրագործվել են տարբեր ծրագրային փաթեթների կիրառմամբ:

Վերլուծությունների և գնահատումների հիմքում դրվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ կառավարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, հայաստանյան և արտասահմանյան կազմակերպությունների և փորձագետների՝ գյու-

դատնետեսության ոլորտի հիմնախնդիրներին, ոլորտի պետական աջակցությանն առնչվող որոշակի հետազոտություններ, հրապարակված զեկույցներ:

**Հետազոտության շրջանակներում ստացվել են հետևյալ արդյունքները.**

- մասնագիտական հարթակներում, տնտեսագիտական գրականության մեջ և համաշխարհային մի շարք կազմակերպությունների կողմից որպես խորհրդատվություն առաջարկվող՝ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող պետական աջակցության արդյունավետության գնահատման մեթոդաբանական մոտեցումների քննական մեկնաբանմամբ ներկայացվել են ՀՀ-ում կիրառելի մեթոդները,
- ՀՀ գյուղատնտեսության ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշների շարժընթացի վերլուծությամբ, փոփոխությունները պայմանավորող էական գործոնների մատնանշմամբ բացահայտվել են գյուղատնտեսության ու գյուղական զարգացման ուժեղ և թույլ կողմերը, ոլորտի հիմնախնդիրները, զարգացման հիմնական խոչընդոտները,
- բազմաչափ գծային ռեգրեսիայի մոդելների միջոցով գնահատվել են ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ծավալների (ավելացված արժեքի) վրա առանձին գործոնների՝ ՀՀ ՀՆԱ աճի, ՌԴ ՀՆԱ աճի, գյուղատնտեսության ոլորտում պետական ծախսերի, գյուղատնտեսական արտադրանքի գների աճի, ՌԴ գյուղատնտեսական արտադրանքի գների աճի ազդեցությունները,
- բազմաչափ գծային ռեգրեսիայի մոդելների միջոցով գնահատվել են ՀՀ գյուղատնտեսության արտադրանքի արտահանման ծավալների վրա մակրոտնտեսական հիմնական գործոնների, մասնավորապես՝ առաջարկի, պահանջարկի, պետական աջակցության և գների ազդեցությունները, բացահայտվել գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ավելացման հնարավորությունները,
- ՀՀ պետական բյուջեից, օտարերկրյա պետությունների և արտասահմանյան կազմակերպությունների կողմից 2010-2021 թթ. գյուղատնտեսության ոլորտին տրամադրված ծախսերի և ներդրված միջոցների ծավալների և կառուցվածքի շարժընթացի վերլուծության հիման վրա գնահատվել են պետական աջակցության ծրագրերով տրամադրվող օժանդակության չափերի և ուղղությունների փոփոխությունները, ՀՀ կառավարության՝ գյուղատնտեսության ոլորտում իրականացրած պետական օժանդակության ծրագրերի՝ ոլորտի հիմնախնդիրներին համապատասխանությունը, բացահայտվել ոլորտի զարգացման ինստիտուցիոնալ խոչընդոտները և դրանց հաղթահարման միջոցառումների առաջնահերթությունները,
- ՀՀ գյուղատնտեսության ոլորտի հիմնական շահառուների շրջանում հարցման միջոցով հավաքագրված որակական և քանակական տեղեկատվության հիման վրա մատնանշվել են պետական օժանդակության ծրագրերի հիմնական թերությունները և առավելությունները, բացահայտվել դրանց բարելավման հնարավորությունները, ներկայացվել ՀՀ գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերի արդյունավետության բարձրացմանը միտված քայլեր:



**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ.  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ  
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ****1.1 Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող  
պետական աջակցության արդյունավետության  
գնահատման մեթոդաբանությունը**

Գյուղատնտեսության ոլորտում պետական աջակցության արդյունավետության գնահատումը, թերությունների բացահայտումն ու դրանց արդյունքում նոր ուղղությունների մատնանշումը կարևոր խնդիրներ են տնտեսական քաղաքականություն մշակողների համար: Իսկ պետական աջակցության արդյունավետության գնահատման համար էական են մեթոդաբանական մոտեցումների ընտրությունն ու գնահատման ցուցանիշների հաշվարկումը, որոնք կմատնանշեն, թե որքանով է իրականացված քաղաքականությունը նպաստել գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը:

Գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության արդյունավետության գնահատման մոտեցումները այնքան էլ մեծաթիվ չեն և հիմնականում հանգում են արդյունք-ծախսեր հարաբերակցության փոփոխության գնահատմանը: Ուսումնասիրենք մասնագիտական հարթակներում առավել ընդունված մեթոդական մոտեցումները:

ԵՄ հանձնաժողովը կիրառում է ex-post գնահատման մեթոդաբանական ուղեցույցը<sup>1</sup>, որը ներառում է քանակական տարբեր մեթոդներ, որոնք անդամ երկրները կարող են օգտագործել տրամադրած պետական աջակցության պատշաճ ex-post գնահատում կատարելու նպատակով:

Ըստ մեթոդաբանության՝ ex-post գնահատումը ներառում է միայն աջակցության սխեմաներ և ոչ՝ առանձին շահառուներին տրամադրվող աջակցություն:

Աջակցության սխեմայի գնահատման առաջին փուլը ենթադրում է «միջամտության տրամաբանության» հստակ սահմանում՝ նկարագրելով ոլորտի կարիքներն ու խնդիրները, որոնք ծրագրով նախատեսվում է լուծել, ինչպես նաև թիրախային շահառուներին և ներդրումները, աջակցության ծրագրի ընդհանուր և հատուկ նպատակները և ակնկալվող ազդեցությունը: Գնահատման պլանը պետք է սահմանի գնահատման շրջանակը, այսինքն՝ այն

<sup>1</sup> Common methodology for State aid evaluation, Commission Staff Working Document, SWD (2014) 179 final, Brussels, 28.5.2014,  
[https://ec.europa.eu/competition/state\\_aid/modernisation/state\\_aid\\_evaluation\\_methodology\\_en.pdf](https://ec.europa.eu/competition/state_aid/modernisation/state_aid_evaluation_methodology_en.pdf)

պետք է ներառի ճշգրիտ հարցեր, որոնց կարելի է պատասխանել քանակապես և անհրաժեշտ օժանդակ ապացույցներով: Գնահատման այս հարցերը պետք է կենտրոնանան պետական օգնության սխեմայի ազդեցության վրա և կարող են դասակարգվել ըստ հետևյալ երեք մակարդակի<sup>2</sup>.

1. Աջակցության ուղղակի ազդեցությունը շահառուների վրա.
    - Արդյո՞ք օգնությունը էական ազդեցություն է ունեցել շահառուների գործունեության վրա (խթանիչ ազդեցություն):
    - Աջակցությունն ազդե՞լ է շահառուների վիճակի վրա (օրինակ՝ փոխվե՞լ է նրանց մրցակցային դիրքը կամ դեֆոլտի ռիսկը):
    - Որքանո՞վ է օգնությունն ունեցել ակնկալվող ազդեցությունը:
    - Արդյո՞ք շահառուների վրա տարբեր կերպ է ազդել օգնությունը (օրինակ՝ ըստ դրանց չափի, գտնվելու վայրի կամ ոլորտի):
  2. Աջակցության սխեմայի անուղղակի ազդեցությունը.
    - Արդյո՞ք սխեման կողմնակի ազդեցություններ է ունեցել այլ ընկերությունների գործունեության կամ այլ աշխարհագրական տարածքների վրա: Արդյո՞ք օգնությունը խափանել է այլ մրցակիցների ներդրումները կամ ներգրավել հարևան վայրերի ակտիվությունը:
    - Արդյո՞ք սխեման նպաստել է հասնել համապատասխան քաղաքականության նպատակին:
    - Հնարավո՞ր է չափել մրցակցության և առևտրի վրա սխեմայի ընդհանուր ազդեցությունը:
  3. Աջակցության սխեմայի համաչափությունն ու նպատակահարմարությունը.
    - Արդյո՞ք աջակցության սխեման համաչափ էր լուծվող խնդրին: Կարո՞ղ էին նույն ազդեցությունը ձեռք բերել ավելի քիչ օգնության կամ օգնության այլ ձևի դեպքում (օրինակ՝ դրամաշնորհների փոխարեն վարկեր):
    - Արդյո՞ք ընտրվել է աջակցության ամենաարդյունավետ գործիքը: Արդյո՞ք աջակցության այլ գործիքները կամ միջամտության տեսակներն ավելի նպատակահարմար կլինեին խնդրո առարկա նպատակին հասնելու համար:
- Գնահատման համար նախատեսված այս հարցերը պետք է հանգեցնեն արդյունքների այն որոշակի ցուցանիշների ընտրությանը, որոնք պարունակում են քանակական տեղեկություններ պետական օգնության սխեմայով ձեռք բերված արդյունքների վերաբերյալ:

<sup>2</sup> Common methodology for State aid evaluation, Commission Staff Working Document, SWD (2014) 179 final, Brussels, 28.5.2014, pp. 6-7  
[https://ec.europa.eu/competition/state\\_aid/modernisation/state\\_aid\\_evaluation\\_methodology\\_en.pdf](https://ec.europa.eu/competition/state_aid/modernisation/state_aid_evaluation_methodology_en.pdf)

Մեթոդաբանության մեջ առանձնացվում են ցուցանիշներ, որոնք բնութագրում են սխեմայի ուղղակի և անուղղակի, ներառյալ՝ մրցակցության և առևտրի վրա ունեցած հնարավոր ազդեցությունները<sup>3</sup>:

Աղյուսակ 1.1-ում ներկայացված են այն մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս գնահատելու պետական աջակցության ազդեցությունները:

#### Աղյուսակ 1.1

##### *Պետական աջակցության գնահատման պարամետրեր և «Քվազի» փորձարարական մեթոդները<sup>4</sup>*

Պարամետրեր (Randomised experiments)	«Քվազի» փորձարարական մեթոդներ (Quasi-experimental methods)
<ul style="list-style-type: none"> <li>Այս տեխնիկան կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ ծրագրի շահառուներն ընտրվել են պատահականության սկզբունքով:</li> <li>Շահառուների և ոչ շահառուների միջև չկա համակարգային տարբերություն, և արդյունքների տարբերությունը կարող է վերագրվել քաղաքականությանը:</li> <li>Այնուամենայնիվ, այս մեթոդը երբեմն քննադատության է ենթարկվում, քանի որ հակասում է օբյեկտիվ չափանիշների հիման վրա հնարավոր լավագույն շահառուներին ընտրելու նպատակին:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Քաղաքականության ազդեցությունը ex-post տեսանկյունից գնահատելու համար այս մեթոդները կիրառվում են նպատակը՝ օգտագործելու համար միջավայրի էկզոգեն տատանումները, որտեղ գործում են ընկերությունները, ստեղծելու համար փորձերին շատ մոտ իրավիճակներ:</li> </ul>

Գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության գնահատման մեթոդների նկարագրությունն ու դրանց հակիրճ բնութագրերը ներկայացված են աղյուսակ 1.2-ում:

Գյուղատնտեսությանը տրամադրված աջակցության մակարդակի գնահատման նպատակով կիրառվում է գնահատման միջազգային երկու համակարգ.

- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) մեթոդաբանությունը, որը հիմնված է արտադրողին աջակցության գնահատման ցուցանիշի (Producer Support Estimate (PSE)) և մի շարք այլ ածանցյալ ցուցանիշների հաշվարկի վրա,
- Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) մեթոդաբանությունը, որը հիմնված է աջակցության համախառն ցուցանիշի

<sup>3</sup> Common methodology for State aid evaluation, Commission Staff Working Document, SWD (2014) 179 final, Brussels, 28.5.2014, Annex II, pp. 35-39,

[https://ec.europa.eu/competition/state\\_aid/modernisation/state\\_aid\\_evaluation\\_methodology\\_en.pdf](https://ec.europa.eu/competition/state_aid/modernisation/state_aid_evaluation_methodology_en.pdf),

<sup>4</sup> Աղյուսակը կազմել են հեղինակները, աղբյուրը՝ Common methodology for State aid evaluation, Commission Staff Working Document, SWD (2014) 179 final, Brussels, 28.5.2014, Annex I, pp. 19-22 [https://ec.europa.eu/competition/state\\_aid/modernisation/state\\_aid\\_evaluation\\_methodology\\_en.pdf](https://ec.europa.eu/competition/state_aid/modernisation/state_aid_evaluation_methodology_en.pdf), PRO/CNMC/001/16 Methodological guide on the evaluation of state aid, 2016, pp. 37-40, [https://www.cnmc.es/sites/default/files/2767814\\_0.pdf](https://www.cnmc.es/sites/default/files/2767814_0.pdf)

(Aggregate Measurement of Support (AMS)) հաշվարկման և «գունավոր արկղերի» կամ «զամբյուղների» համակարգի վրա<sup>5</sup>:

## Աղյուսակ 1.2

Պնդական աջակցության գնահատման մեթոդները<sup>6</sup>

Մեթոդ	Մեկնաբանություն
«Տարբերության տարբերություն» կամ «կրկնակի տարբերություններ» (Difference in difference)	<ul style="list-style-type: none"> <li>Մեթոդը համեմատում է շահառուների և ոչ շահառուների միջև կատարողականի տարբերությունը՝ նախքան աջակցությունը և աջակցությունից հետո,</li> <li>ապա տարբերության փոփոխությունը վերագրվում է աջակցությանը:</li> </ul>
Գործիքային փոփոխականները (Instrumental variables, «IV»)	<ul style="list-style-type: none"> <li>Գործիքային է այն փոփոխականը, որը կարող է բացատրել աջակցություն ստանալու փաստը, սակայն ուղղակի ազդեցություն չունենալ չափման ենթակա արդյունքի մյուս ոչ դիտարկելի որոշիչների վրա:</li> </ul>
Ռեգրեսիոն ընդհատումը (Regression discontinuity design, RDD)	<ul style="list-style-type: none"> <li>Մեթոդն օգտագործում է փոփոխականի առկայությունը, որն ընդհատվող ազդեցություն ունի քաղաքականության ազդեցության հավանականության վրա:</li> </ul>
Կառուցվածքային գնահատումը	<ul style="list-style-type: none"> <li>Կառուցվածքային գնահատումն օգտագործում է ֆիրմայի վարքագծի միանգամայն հստակեցված տեսական մոդել:</li> <li>Գնահատումը թույլ է տալիս վերականգնել ընկերության վարքագիծը որոշող պարամետրերը:</li> <li>Սա էլ, իր հերթին, թույլ է տալիս գնահատել ընկերությունների անհատական վարքագծի որոշիչ գործոնները և հնարավորություն ընձեռում իրականացնելու այլ գործիքների արդյունավետության մոդելավորում:</li> </ul>

Գյուղատնտեսությանը տրամադրված աջակցության մակարդակի գնահատման նպատակով օգտագործվող AMS և PSE ցուցանիշները լայնորեն կիրառվում են միջազգային փորձում՝ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող պետական աջակցության մակարդակի գնահատման համար: Այս մեթոդները ներառում են և՛ գնային, և՛ բյուջետային աջակցությունը: Սակայն, որոշակի նմանությամբ հանդերձ, դրանք էապես տարբերվում են:

Ըստ ՏՀԶԿ մեթոդի՝ գնահատվում է գյուղատնտեսության ոլորտում տրանսֆերտների ամբողջ ծավալը՝ դասակարգելով համաձայն տրամադրման հերթականության չափանիշի: ԱՀԿ մեթոդաբանությունը ոչ բոլոր

<sup>5</sup> Жилияков, Д.И., Характеристика методик оценки государственной поддержки сельского хозяйства на международном уровне, International agricultural Journal Vol 64 No 1 (2021), стр. 3, <https://cyberleninka.ru/article/n/harakteristika-metodik-otsenki-gosudarstvennoy-podderzhki-selskogo-hozyaystva-na-mezhdunarodnom-urovne/viewer>

<sup>6</sup> Common methodology for State aid evaluation, COMMISSION STAFF WORKING DOCUMENT, SWD (2014) 179 final, Brussels, 28.5.2014, Annex I, pp. 22-30 [https://ec.europa.eu/competition/state\\_aid/modernisation/state\\_aid\\_evaluation\\_methodology\\_en.pdf](https://ec.europa.eu/competition/state_aid/modernisation/state_aid_evaluation_methodology_en.pdf), PRO/CNMC/001/16 Methodological guide on the evaluation of state aid, 2016, p. 41-49, [https://www.cnmc.es/sites/default/files/2767814\\_0.pdf](https://www.cnmc.es/sites/default/files/2767814_0.pdf)

տրանսֆերտներն է հաշվի առնում, օրինակ՝ չի ներառում մաքսային սակագնային միջոցառումների միջոցով տրամադրվող աջակցությունը և տրանսֆերտները դասակարգում է ըստ միջազգային առևտրի խեղաթյուրման աստիճանի: Արդյունքում, PSE-ն առավել լայնորեն է ընդգրկում կառավարության աջակցության տեսակները, մինչդեռ AMS-ը բացառում է բազմաթիվ տեսակներ՝ ԱՀԿ՝ գյուղատնտեսության վերաբերյալ Ուրուգվայի համաձայնագրի համաձայն:

ՏՀԶԿ մեթոդաբանությամբ աջակցության գնահատման ցուցանիշները դասակարգվում են հետևյալ կերպ<sup>7</sup>.

1. արտադրողներին աջակցության ցուցանիշներ (indicators of support to producers),
2. գյուղատնտեսական ընդհանուր ծառայությունների աջակցության ցուցանիշներ (Indicators of support to general services for agriculture),
3. սպառողների աջակցության ցուցանիշներ (indicators of support to consumers),
4. գյուղատնտեսությանն ընդհանուր աջակցության ցուցանիշներ (indicators of total support to agriculture):

ԱՀԿ մեթոդաբանությամբ գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության մակարդակը գնահատող հիմնական ցուցանիշը աջակցության ազդեցացված ցուցանիշն է (AMS), որը ներառում է առևտուրը խեղաթյուրող աջակցության բոլոր ձևերը, որոնք տրամադրվում են գյուղատնտեսական ապրանք արտադրողներին: Այս ցուցանիշը հաշվարկվում է՝ ընդհանուր աջակցության գումարը բաժանելով արտադրության սուբսիդիաների և առանձին գյուղատնտեսական ապրանքների (հացահատիկ, միս, ձու և այլն) գների գծով աջակցության գումարի ու այն աջակցության գումարի վրա, որը կապված չէ որոշակի գյուղատնտեսական ապրանքների արտադրության հետ (արտոնյալ վարկեր և սակագներ, տարբեր տեսակի ծախսերի փոխհատուցում և այլն)<sup>8</sup>:

AMS-ն ներկայացնում է առևտուրը խեղաթյուրող աջակցության բոլոր միջոցառումների ֆինանսավորման այն չափը, որը գերազանցում է աջակցության նվազագույն մակարդակը և տրամադրվում գյուղատնտեսական արտադրանքի արտադրությանը: Նվազագույն մակարդակի կանոնի կիրառու-

<sup>7</sup> OECD'S PRODUCER SUPPORT ESTIMATE AND RELATED INDICATORS OF AGRICULTURAL SUPPORT: Concepts, Calculations, Interpretation and Use (The PSE Manual), TRADE AND AGRICULTURE DIRECTORATE, OECD, March 2016, pp. 17-18, <https://www.oecd.org/agriculture/topics/agricultural-policy-monitoring-and-evaluation/documents/producer-support-estimates-manual.pdf>

<sup>8</sup> Жилияков, Д.И., Характеристика методик оценки государственной поддержки сельского хозяйства на международном уровне, International Agricultural Journal Vol 64, No 1 (2021), с. 3, <https://cyberleninka.ru/article/n/harakteristika-metodik-otsenki-gosudarstvennoy-podderzhki-selskogo-hozyaystva-na-mezhdunarodnom-urovne/viewer>

մը հնարավոր է դարձնում AMS հաշվարկման ժամանակ աջակցության մի մասի բացառումը:

ԱՀԿ անդամ զարգացած երկրներում, նաև ՌԴ-ում և ՀՀ-ում AMS հաշվարկման ժամանակ չեն ներառվում առևտուրը խեղաթյուրող աջակցության այն ծավալները, որոնք.

- գյուղատնտեսական ողջ արտադրանքի արտադրության 5 տոկոսից պակաս են,
- որոշակի ապրանքների արտադրության արժեքային ծավալի 5 տոկոսից պակաս են<sup>9</sup>:

Աջակցության ագրեգացված ցուցանիշը ներառում է շուկայական գների աջակցության միջոցառումները, որոնք ամենաշատն են խեղաթյուրում առևտրային հարաբերությունները, գյուղատնտեսական ձեռնարկությունների կոնկրետ ապրանքների արտադրության վրա կատարած ծախսերը ծածկելու համար տրամադրվող սուբսիդիաները, որոշ գյուղատնտեսական ապրանքների գների հավելավճարները, վարկերի վճարված տոկոսների փոխհատուցումը, գյուղմթերք վերամշակողների աջակցությունը, ողջ գյուղատնտեսության ոլորտին աջակցելուն ուղղված միջոցառումների գծով ծախսերը՝ հաշվի չառնելով աջակցությունն առանձին ապրանքների արտադրությանը, ծախսերի ծածկման սուբսիդիաները, արտոնյալ վարկերը, գյուղատնտեսական ապրանքների տեղափոխման ծախսերի փոխհատուցումը և այլն:

Այս դիտարկման լույսի ներքո կարող ենք եզրակացնել, որ ՏՀԶԿ մեթոդաբանությունը վերլուծական գործիք է, որը հիմնված է համադրելի տվյալների ու մեթոդների վրա և նախատեսված է ընթացիկ պետական աջակցությունը վերլուծելու համար, մինչդեռ ԱՀԿ մեթոդաբանությունն ավելի շատ իրավական գործիք է՝ միտված աջակցությունը նվազեցնելու պարտավորությունների վերլուծությանը և վերահսկմանը: Հավելենք նաև այն, որ գյուղատնտեսությանը որպես աջակցություն տրամադրվող բոլոր տրանսֆերտներն էլ ինչ-որ չափով ազդում են գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների և տնտեսավարման արդյունավետության վրա, հետևաբար՝ ՏՀԶԿ մեթոդով գնահատման մոտեցումն ավելի կիրառական է:

Հաշվի առնելով, որ ագրոպարենային շուկայի պետական կարգավորումը և ագրոարդյունաբերական համալիրի աջակցությունը կարևորագույն խնդիրներ են, քանի որ երկրի պարենային անվտանգությունը և գյուղական բնակչության զբաղվածության սոցիալական խնդրի լուծումը կախված են

<sup>9</sup> Ромашкин, Р.А. Обзор правил предоставления сельскохозяйственных субсидий, перспективы их совершенствования и обязательства России в ВТО в области сельского хозяйства / Р.А. Ромашкин // Торговая политика. 2015, № 2(2), с. 116-124. (с. 118), <https://cyberleninka.ru/article/n/obzor-pravil-predostavleniya-selskokozyaystvennyh-subsidiy-perspektivy-ih-sovershenstvovaniya-i-obyazatelstva-rossii-v-vto-v-oblasti>

գյուղատնտեսական արտադրությունից և ագրոպարենային շուկայի վիճակից՝ ԵԱՏՄ հանձնաժողովը մշակել է ագրոպարենային շուկայի պետական կարգավորման և ագրոարդյունաբերական համալիրի աջակցության միջոցառումների արդյունավետության գնահատման մեթոդաբանություն<sup>10</sup>, որն օգտագործվում է համակարգային վերլուծություններ կատարելու և ագրոարդյունաբերական համալիրի աջակցությանն ու ագրոպարենային շուկայի պետական կարգավորման միջոցառումների արդյունավետության բարձրացմանն ուղղված որոշումներ ընդունելու ժամանակ:

Ագրոպարենային շուկայի պետական կարգավորման և ագրոարդյունաբերական համալիրին աջակցության արդյունավետությունը որոշվում է՝ կախված տնտեսական գործունեության, ապրանքների և ծառայությունների, սպառողների, շուկայի վիճակի, ինչպես նաև ինստիտուցիոնալ միջավայրի վրա ֆինանսական և ոչ ֆինանսական գործիքների (կառուցակարգերի) ազդեցության արդյունավետությունից:

Սույն մեթոդաբանությունը հաշվի է առնում տնտեսության այս հատվածի զարգացման առանձնահատկությունները, ներառյալ՝ գյուղատնտեսության սեզոնային բնույթը, անդամ պետությունների տարածքների աշխարհագրական և կլիմայական պայմանները, որոնք ազդում են գյուղատնտեսական արտադրանքի արդյունավետության վրա և մրցակցային միջավայրին հարմարվելու նրա կարողությունը ներքին և արտաքին շուկաներում՝ դինամիկ զարգացող ինտեգրացիոն գործընթացների համատեքստում:

Պետական կարգավորման արդյունավետության գնահատումն իրականացվում է երեք փուլով:

Առաջին փուլում ագրոարդյունաբերական համալիրի աջակցության նպատակները որոշելու և համակարգելու համար վերլուծվում են ԵԱՏՄ անդամ պետությունների՝ որոշակի ժամանակահատվածում ընդունված նորմատիվ իրավական ակտերը, որոնցով գործողության մեջ են դրվում աջակցության միջոցառումները:

Երկրորդ փուլում ագրոպարենային շուկայի պետական կարգավորման և ագրոարդյունաբերական համալիրի աջակցության միջոցառումների արդյունավետությունը գնահատելու համար ընտրվում են հետևյալ նպատակները՝ պարենային անկախության ապահովում, ֆինանսական կայունության մակարդակի բարձրացում, գյուղական բնակավայրերի կայուն զարգացում, ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում և վերաբ-

<sup>10</sup> Рекомендация N 11. О Методологии оценки эффективности мер государственного регулирования агропродовольственного рынка и поддержки агропромышленного комплекса, Коллегия Евразийской Экономической Комиссии, 2017, Москва, с. 1-18  
[http://www.eurasiancommission.org/ru/act/prom\\_i\\_agroprom/dep\\_agroprom/agr\\_rynok/Documents/%D0%A0%D0%B5%D0%BA%D0%BE%D0%BC%20%D0%9A%D0%BE%D0%BB%D0%B5%D0%B5%D0%B3%D0%B8%D0%B8%20%D0%95%D0%AD%D0%9A%2011.pdf](http://www.eurasiancommission.org/ru/act/prom_i_agroprom/dep_agroprom/agr_rynok/Documents/%D0%A0%D0%B5%D0%BA%D0%BE%D0%BC%20%D0%9A%D0%BE%D0%BB%D0%B5%D0%B5%D0%B3%D0%B8%D0%B8%20%D0%95%D0%AD%D0%9A%2011.pdf)

տադրում, գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնության մակարդակի բարձրացում և իրացման ապահովում, աջակցություն ագրոպարենային շուկայի ենթակառուցվածքների զարգացմանը:

Ագրոարդյունաբերական համալիրին աջակցելու նպատակին հասնելը որոշվում է *արդյունավետության, օպտիմալության, ազդեցության, կայունության, ծախսատարության* չափանիշներով:

Յուրաքանչյուր չափանիշ կարող է բնութագրվել շարժընթացում՝ 1-ից մինչև 3 վիճակագրական ցուցանիշներով:

Երրորդ փուլում համեմատվում են գնահատման օբյեկտի վիճակը բնութագրող ցուցանիշները և դրանց չափանիշները, հաշվարկվում և մշակվում ագրոպարենային շուկայի պետական կարգավորման միջոցառումների և ագրոարդյունաբերական համալիրին աջակցության արդյունավետությունը վերլուծելու համար անհրաժեշտ տվյալները:

Այս մեթոդաբանության մեջ օգտագործվում է 7 ցուցանիշ՝ ֆինանսական դիրքի, արտադրության, ներդրումների, աշխատանքի, գների, արտաքին առևտրի, ինչպես նաև այլ լրացուցիչ ցուցանիշներ, որոնք ներառում են գնահատման 31 ցուցանիշ: Այդ ցուցանիշները պետական կարգավորման յուրաքանչյուր նպատակի համար դասակարգվում են արդյունավետության, օպտիմալության, ազդեցության, կայունության և ծախսատարության չափանիշներին համապատասխան<sup>11</sup>:

Լրացուցիչ ցուցանիշներն առանձնացվում են՝ պայմանավորված այն հանգամանքով, որ որոշ գործակիցներ կարող են միաժամանակ վերաբերել մի քանի տեսակի ցուցանիշների (օրինակ՝ ռեսուրսներում ներմուծման տեսակարար կշիռը կարող է միաժամանակ վերաբերել ինչպես արտադրության, այնպես էլ արտաքին առևտրի ցուցանիշներին):

ՀՀ-ն ԵԱՏՄ անդամ է, հետևաբար՝ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող պետական աջակցության արդյունավետության գնահատման համար կարող է հիմք ընդունվել ԵԱՏՄ հանձնաժողովի կողմից առաջարկվող մեթոդաբանությունը, այն է՝ ագրոպարենային շուկայի պետական կարգավորման և ագրոարդյունաբերական համալիրի աջակցության միջոցառումների արդյունավետությունը գնահատելու համար օգտագործել տարեկան վիճակագրական ծրագրերի տվյալները, անհրաժեշտության դեպքում՝ միջազգային կազմակերպությունների վիճակագրական տվյալները, յուրաքանչյուր ցուցանիշ հաշվարկել շարժընթացում (այսինքն՝ նախորդ տարվա համեմատ) (տոկոսային հարաբերությամբ):

<sup>11</sup> Рекомендация N 11. О Методологии оценки эффективности мер государственного регулирования агропродовольственного рынка и поддержки агропромышленного комплекса, Коллегия Евразийской Экономической Комиссии, 2017, Москва, стр. 11

[http://www.eurasiancommission.org/ru/act/prom\\_i\\_agroprom/dep\\_agroprom/agr\\_rynok/Documents/%D0%A0%D0%B5%D0%BA%D0%BE%D0%BC%20%D0%9A%D0%BE%D0%BB%D0%BB%D0%B5%D0%B5%D0%B3%D0%B8%D0%B8%20%D0%95%D0%AD%D0%9A%2011.pdf](http://www.eurasiancommission.org/ru/act/prom_i_agroprom/dep_agroprom/agr_rynok/Documents/%D0%A0%D0%B5%D0%BA%D0%BE%D0%BC%20%D0%9A%D0%BE%D0%BB%D0%BB%D0%B5%D0%B5%D0%B3%D0%B8%D0%B8%20%D0%95%D0%AD%D0%9A%2011.pdf)



Վիճակագրական ցուցանիշների դիսամիկ վերլուծությունը թույլ է տալիս հետևել կառավարության կարգավորող միջոցառումների արդյունքում գրանցված փոփոխություններին:

Կախված շարժընթացից (բարելավում, վատթարացում կամ փոփոխություն չկա)՝ յուրաքանչյուր վիճակագրական ցուցանիշի տրվում է «դիսամիկ գնահատման» 1 միավոր:

«Դիսամիկ գնահատման» միավորը կարող է ընդունել 3 արժեք՝ «-1» (ցուցանիշի շարժընթացի վատթարացման դեպքում), «0» (ցուցանիշի շարժընթացի անփոփոխության դեպքում), «1» (ցուցանիշի շարժընթացի բարելավման դեպքում):

Արդյունքում, յուրաքանչյուր նպատակի համար ամփոփվում են ամեն մի չափանիշի համար ստացված միավորները:

Այնուհետև հաշվարկվում է նպատակային միավորի ինդեքսը (որը վերլուծվում է նաև շարժընթացում). «դիսամիկ գնահատականի» արդյունքում ստացված միավորը բաժանվում է այս նպատակի առավելագույն հնարավոր միավորի վրա:

Նպատակների գնահատման ինդեքսի շարժընթացի վերլուծությունը բնութագրում է կառավարության միջոցառումների միջոցով սահմանված նպատակներին հասնելու աստիճանը, քանի որ նպատակների գնահատման ինդեքսը կառավարության կարգավորող միջոցառումների արդյունավետությունը գնահատելու գործիք է և ցույց է տալիս ցուցանիշների դրական շարժընթացի մասնաբաժինը ճյուղում՝ կապված պետական կարգավորման միջոցների կիրառման հետ:

Նպատակի գնահատման ինդեքսի շարժընթացը կարող է վերլուծվել ինչպես որոշակի (օրինակ՝ նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ), այնպես էլ մի քանի (օրինակ՝ հաշվի առնելով նախորդ ժամանակաշրջանի շարժընթացը, բազիսային ժամանակաշրջանը և ժամանակաշրջանի միջին արժեքը) ժամանակաշրջանների համար: Կարծում ենք՝ այս մեթոդաբանությունը թույլ է տալիս որոշել, թե որ չափանիշը (ցուցանիշը, նպատակը) հանգեցրեց պետական կարգավորման միջոցառումների արդյունավետության փոփոխությանը, ինչը, իր հերթին, հնարավորություն է ընձեռում ներկայացնելու պետական կարգավորման միջոցառումների արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ:

Մասնագիտական գրականությունում առանձնացվում է պետական աջակցության գնահատման 2 մոտեցում<sup>12</sup>: Գնահատվում է պետական աջակցության ազդեցությունը՝ 1. գյուղատնտեսական արտադրանքի շահութաբե-

<sup>12</sup> Колесников А.В., Эффективность финансирования государственной поддержки и регулирования агп, Modern economy Success, N5, 2019, г. Белгород, стр. 73-74,  
[http://mes-journal.ru/wp-content/uploads/2019/10/mes\\_5.pdf](http://mes-journal.ru/wp-content/uploads/2019/10/mes_5.pdf)

րության մակարդակի վրա, 2. գյուղատնտեսական արտադրության արդյունավետության վրա:

**Առաջին մոտեցման** դեպքում դիտարկվում է շահույթը՝ առանց պետական աջակցության, այնուհետև շահույթը՝ հաշվի առնելով պետական աջակցությունը: Պետական աջակցության և շահութաբերության մակարդակի հարաբերակցությունն արտացոլում է պետական աջակցության բավարար կամ անբավարար լինելը, ինչպես նաև արդյունավետ կամ ոչ արդյունավետ օգտագործումը, սակայն այն ունի թերություններ (օրինակ՝ շահութաբերության մակարդակը հաշվի է առնում միայն իրացված արտադրանքի արժեքը և ոչ թե համախառն արտադրանքը):

**Երկրորդ մոտեցումը** հիմնավորվում է այն հիմքով, որ գործնականում պետական աջակցություն ստանալ չի նշանակում, որ ներդրված միջոցները կապահովեն առավելագույն եկամտաբերություն: Պետական աջակցության և ներդրումների ծավալների ավելացումը պետք է նպաստի գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելի դինամիկ աճին: Այս դեպքում անհրաժեշտ է դիտարկել գյուղատնտեսական ձեռնարկություններն ըստ խմբերի՝ առանձնացնելով դրանք ըստ պետական աջակցության մակարդակի: Այսպիսի վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու գյուղատնտեսական ապրանք արտադրողների առավել արդյունավետ խմբերը:

Ըստ Լ. Ի. Խոբրուժի, Ն. Ա. Կոկորևի և Վ. Ա. Մատչինովի կողմից մշակված պետական աջակցության արդյունավետության հաշվարկման սխեմայի, նախ՝ պետք է հաշվարկել շահույթը գործունեությունից, դրա շարժընթացը, ապա այդ ցուցանիշները համեմատել պետական աջակցության ծավալի հետ<sup>13</sup>:

Հաշվարկվում է պետական աջակցության արդյունավետության գործակիցը<sup>14</sup>: Եթե գործակցի արժեքը 100% և ավելի է, ուրեմն՝ աջակցությունը բացարձակ արդյունավետ է:

Գյուղատնտեսական արտադրության պետական աջակցության օգտագործման արդյունավետությունը կարելի է հաշվարկել՝ ընթացիկ տարում գյուղատնտեսական արտադրանքի արտադրության գծով ստացված շահույթը հարաբերելով նախորդ տարում գյուղատնտեսության արտադրանքի արտադրության գծով ողջ շահույթի և ընթացիկ տարում բյուջեից ստացված աջակցության գումարների/սուբսիդիաների գումարին: Այս ցուցանիշի համար առաջարկվում է արդյունավետության գնահատման հետևյալ սանդղակը.

<sup>13</sup> Петрова С.Ю., Фролова О.А., Оценка экономической эффективности работы сельскохозяйственных организаций с учетом использования государственной поддержки, Вестник Алтайского государственного аграрного университета № 10 (108), 2013

<https://cyberleninka.ru/article/n/otsenka-ekonomicheskoy-effektivnosti-raboty-selskohozyaystvennyh-organizatsiy-s-uchetom-ispolzovaniya-gosudarstvennoy-podderzhki>

<sup>14</sup> Հաշվարկման համար վերլուծվող ժամանակահատվածը նվազագույնը կազմում է 3 տարի:

1. եթե  $ԱԳ \leq 0,3$ , ապա պետական աջակցության օգտագործումը /գյուղատնտեսական ձեռնարկությունների աշխատանքը անարդյունավետ է,
2. եթե  $0,3 < ԱԳ \leq 0,6$ , ապա դա քիչ արդյունավետ է,
3. եթե  $0,6 < ԱԳ \leq 0,9$ , ապա դա միջին արդյունավետություն ունի,
4. եթե  $ԱԳ > 0,9$ , ապա դա բարձր արդյունավետություն ունի:

Արդյունավետության գնահատման ավելի հետևողական մոտեցումն այն է, երբ ոչ փոխկապակցված սուբսիդավորման արդյունավետությունը գնահատվում է այն ծախսերի հիման վրա, որոնք պետք է փոխհատուցվեն<sup>15</sup>: Սուբսիդիան հնարավորություն է տալիս տնտեսվարող սուբյեկտին փոխհատուցելու ոչ միայն իր վերահսկողությունից դուրս գործոնները (բացասական եղանակային և կլիմայական ազդեցություն, տեխնաձին գործոններ), այլև անկայուն բիզնեսի, ոչ արտադրական կորուստների, գործողությունների հետևանքով առաջացած բացասական շեղումները: Սուբսիդիայի օգտագործումը «արդյունավետ» է, եթե այն օգտագործվում է կազմակերպության վերահսկողությունից դուրս գործոններից առաջացող ծախսերը և վնասները ծածկելու համար:

Սուբսիդիաների օգտագործման արդյունավետությունը կարելի է գնահատել՝ օգտագործելով համապատասխան գործակիցը, որը հաշվարկվում է որպես սուբսիդավորման արդյունավետ մասնաբաժնի հարաբերություն ստացված բյուջետային միջոցների ընդհանուր գումարին: Այս գործակիցի աճն արտացոլում է դրական շարժընթացը և վկայում ընկերության կողմից ստացված բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման մասին:

Առաջարկվում են պետական աջակցության արդյունավետության հաշվարկման հետևյալ ցուցանիշները՝ *փաստացի ծախսերի հետգնման գործակից*<sup>16</sup>, *արտադրական գործունեությանը պերական աջակցության գործակից*<sup>17</sup>:

Կարելի է օգտագործել ռեգրեսիոն մոդել, որտեղ որպես արդյունքային ցուցանիշ կլինի սուբսիդիաները հաշվի առնող ծախսերի հետգնման գործակիցը, իսկ գործոններ՝ գյուղատնտեսական հողատարածքների 1 հա-ի հաշվով սուբսիդիաների չափը, տրամադրված միջոցների տեսակարար կշիռն ըստ բյուջետային աջակցության ուղղությունների և այլն:

<sup>15</sup> Andreeva S., Internal Evaluation of the State Subsidies Usage Effectiveness, 18th International Scientific Conference “Problems of Enterprise Development: Theory and Practice”, European Publisher Ltd, London, April 2019, p. 533.

<sup>16</sup> Andreeva S., Internal Evaluation of the State Subsidies Usage Effectiveness, 18th International Scientific Conference “Problems of Enterprise Development: Theory and Practice”, European Publisher Ltd, London, April 2019, p. 533.

<sup>17</sup> Ширококов В. Г., Волкова Н. Н., Грибанов А. А., Методические подходы к оценке эффективности мер государственной поддержки сельского хозяйства, Аудит и финансовый анализ, N3, 2014, стр. 424-425.

Գյուղատնտեսությունում էկոնոմիկայի, աշխատանքի և կառավարման համառոտաստանյան գիտահետազոտական ինստիտուտի գիտնականները մշակել են բյուջեի միջոցների օգտագործման արդյունավետության վերլուծության մեթոդաբանություն: Արդյունավետությունը հաշվարկվում է պետական աջակցության չափի և դրա ֆինանսական արդյունքի հարաբերակցության հիման վրա<sup>18</sup>: Արդյունավետության հաշվարկման այս մեթոդաբանությունը կապված չէ պետական աջակցության չափի հետ, ինչը հեշտությամբ ապացուցվում է մաթեմատիկական ձևափոխումներ և կոնկրետ օրինակներով հաշվարկներ կատարելիս, քանի որ ցուցանիշը՝ պետական աջակցության չափը, արդյունավետության հաշվարկում կրճատվում է, և ստացվում է ծախս-օգուտի ցուցանիշ՝ որպես համախառն արտադրանքի արժեքի և ծախսերի հարաբերակցություն:

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող պետական աջակցության արդյունավետության գնահատման մեթոդաբանական մոտեցումների քննական ուսումնասիրությունն ու մեկնաբանումների ամփոփ ներկայացումը թույլ են տվել եզրակացնել, որ առաջարկվող մեթոդները թեն բազմազան են, սակայն դրանք բոլորն էլ շեշտադրում են պետության՝ աջակցության վրա կատարած ծախսերի և համապատասխան արդյունքի՝ գյուղատնտեսության արտադրության և արտահանման ծավալների ավելացման, ոլորտի արտադրողականության և մրցունակության մակարդակի բարձրացման, հարաբերակցության բարելավումը: Ուսումնասիրելով գրականությունում առկա մեթոդներն ու մեթոդաբանական մոտեցումները, ցուցանիշների համակարգը, այնուամենայնիվ, կարելի է նկատել, որ, ըստ առանձին երկրների, գյուղատնտեսության ոլորտում ոչ բոլորն են կիրառելի՝ պայմանավորված վիճակագրական տվյալների բացակայությամբ: Այդ նպատակով կարող են կիրառվել համախառն արտադրանքի, աշխատանքի արտադրողականության, բերքատվության և մթերատվության, արտահանման ծավալների, զբաղվածության մակարդակի, աշխատավարձի, տարբեր մակարդակների բյուջեների լրացուցիչ հարկային մուտքերի և այլ ցուցանիշներ: Արձանագրվել է, որ ՀՀ-ում կարող է օգտագործել ԵԱՏՄ հանձնաժողովի կողմից առաջարկվող մեթոդաբանությունը: Միաժամանակ, հաշվի առնելով առկա տեղեկատվական բազան, առավել նպատակահարմար ենք համարում արդյունավետության գնահատման արդյունք/ծախսեր բանաձևի կիրառումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աջակցության որոշ ծրագրերի արդյունավետությունը կարող է երևալ միայն համեմատաբար երկար ժամանակահատվածում, առաջարկում ենք ցուցանիշը հաշվարկել արդյունքի և ծախսերի տարեկան, եռամյա և հնգամյա ծավալների հարաբերությամբ, այնուհետև գնահատել այդ

<sup>18</sup> Климова Н.В., Совершенствование методики оценки эффективности государственной поддержки сельского хозяйства, Modern Problems And Ways Of Their Solution In Science, Transport, Production And Education 2013, <https://www.sworld.com.ua/konfer31/189.pdf>

հարաբերության շարժընթացը:

Ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրումը պահանջում է բյուջետային ծրագրերի արդյունավետությունը գնահատել հատկապես շահառուների տեսանկյունից, քանի որ ծրագրերի ակնկալվող և փաստացի արդյունքները լավագույնս զգում են անմիջական շահառուները: Ուստի բյուջետային ծրագրերի արդյունավետության գնահատման համար, ի թիվս մշտադիտարկման այլ ձևերի, նպատակահարմար է շահառուների շրջանում որոշակի պարբերականությամբ ու որոշակի ընտրանքով անցկացնել հարցախույզ և վերլուծել դրա արդյունքները: Այս տեսակետից, որպես պետական աջակցության ծրագրերի արդյունավետության գնահատման առավել կիրառական մեթոդ, առաջարկում ենք շահառուների շրջանում հարցումների անցկացումը և նրանց կարծիքի գնահատումը: Նախկինում կատարված ուսումնասիրությունները<sup>19</sup> ևս վկայում են, որ գյուղատնտեսության ոլորտին հատկացվող բավական համեստ միջոցները, կարծես թե, ուղղորդվում են դեպի ամենաանհրաժեշտ ու կարևոր ծրագրերի իրականացմանը, մինչդեռ այդ հատկացումների արդյունքն անմիջական շահառուների կողմից աներկբա կերպով չի գնահատվում:

## 1.2

### **Գյուղատնտեսության ոլորտում վարվող քաղաքականության միջազգային փորձը և տեղայնացման հնարավորությունները**

Գյուղատնտեսության ոլորտում առկա հիմնախնդիրները, միջազգային և տարածաշրջանային հակամարտությունների հետ մեկտեղ, առավել դժվարացրել են ոլորտի զարգացման և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման հնարավորությունները: ՀՀ պետական բյուջեի ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման և պետական աջակցության ծրագրերի կատարելագործման նպատակով անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրել այդ խնդիրների լուծման միջազգային փորձը, ինչպես նաև տեղայնացման հնարավորությունները:

Գյուղատնտեսությունը Երկիր մոլորակի բնակչությանը պարենով, իսկ սննդի և թեթև արդյունաբերությունը հումքով ապահովող հիմնական ճյուղն է: Ավելին, ըստ Համաշխարհային բանկի տնտեսության զարգացման ծրագրի ավագ տնօրեն Սիմեոն Ջանկովի, գյուղատնտեսության աճը երկու-երեք

<sup>19</sup> Հունանյան Լ. Ս., ՀՀ գյուղատնտեսության բյուջետային ծրագրերի արդյունավետությունը շահառուների գնահատմամբ, «Ֆինանսներ և էկոնոմիկա», Երևան, 2017, №7-8 (203-204):

անգամ ավելի արդյունավետ կերպով է նպաստում աղքատության նվազմանը, քան մյուս ոլորտների աճը: Հաշվի առնելով միջազգային կազմակերպությունների և առանձին երկրների ջանքերը՝ կանխատեսվում է, որ հաջորդ տասնամյակում գյուղատնտեսական արտադրությունը կաճի 20%-ով: Համաշխարհային բանկի դիտարկմամբ. «Գյուղատնտեսության արտադրողականության կայուն ձևով բարձրացումն առաջնահերթություն է պարենային համակարգերի շտկման համար, որպեսզի ֆերմերները կարողանան արտադրել ավելի որակյալ սնունդ, կերակրեն աճող բնակչությանը և բարելավեն իրենց ապրուստը՝ միաժամանակ նվազեցնելով գյուղատնտեսության ազդեցությունը կլիմայի և բնական ռեսուրսների վրա»<sup>20</sup>:

Զարգացած երկրներում ագրոպարենային ոլորտի պետական կարգավորման, առավել ևս՝ պետական աջակցության մեթոդներն ու կառուցակարգերը, լրավճարների ծավալներն ու սուբսիդավորման չափերը դժվարհասանելի են զարգացող կամ անցումային տնտեսություն ունեցող երկրների համար: Այդուհանդերձ, այդ երկրների անցած ուղին և բարեփոխումների ընթացքը չափազանց ուսանելի են, թեկուզև «ուրիշների սխալների վրա սովորելու»՝ միանգամայն ընդունելի տեսանկյունից: Ինչպես վկայում է տնտեսագիտության պատմությունը, այդ ուղին այնքան էլ հարթ չի եղել, և բազմաթիվ խոչընդոտներ հաղթահարելով, վերելքներ ու վայրէջքներ անցնելով են ձևավորվել ներկայիս տնտեսական համակարգերը: Ինչպես ամեն ինչ աշխարհում, դրանք ևս հեռու են կատարյալ լինելուց, ուստի անգամ զարգացած երկրներում տնտեսական հարաբերություններն անընդհատ զարգացման կարիք ունեն, քանի որ փոփոխվող աշխարհում մշտապես ի հայտ են գալիս նոր մարտահրավերներ:

Այդ ամենի հետ մեկտեղ, յուրաքանչյուր երկրի առանձնահատկությունները պահանջում են գյուղատնտեսության պետական աջակցության որոշակի ձևերի և կառուցակարգերի առկայություն: Չինաստանի օրինակը ցույց է տալիս, որ հողի հանրային սեփականության պայմաններում գյուղատնտեսությունը կարող է կտրուկ կերպով վերելք ապրել, եթե ագրարային ոլորտում արմատավորվեն ազատական, բայց կարգավորվող ու պլանավորվող շուկայական կառուցակարգեր: Այստեղ պետությունը ֆինանսական մեծ օժանդակություն է ցույց տալիս հողի բերրիության և բերքատվության մակարդակը բարձրացնելու, գյուղի սոցիալական զարգացումը խթանելու ուղղությամբ:

Պատմականորեն գյուղատնտեսությանն աջակցության տրամադրումը ուղղված է եղել քաղաքականության այն նպատակներին, որոնք «**Եռակի մարտահրավերի**» հիմնական բաղադրիչներն են՝ պարենային անվտանգության ապահովում, ֆերմերների եկամուտներին և ապրուստի միջոցներին

<sup>20</sup> The World Bank Press Release, 47 Countries Make 67 Reforms to Help Farmers Grow Their Business <https://www.worldbank.org/en/news/press-release/2019/10/21/47-countries-make-67-reforms-to-help-farmers-grow-their-business>

աջակցություն, բնապահպանական արդյունքների բարելավում<sup>21</sup>։ Այս նպատակներին հասնելու համար ընտրված գործիքները շատ տարբեր են։ Որոշ երկրներ պարենային անվտանգություն ապահովելու համար հենվում են առևտրի և շուկաների բաց դռների վրա, իսկ մյուսները փորձում են խթանել ներքին արտադրությունը և կայուն պահել ինքնապահովման բարձր ցուցանիշները սուբսիդիաների և առևտրի պաշտպանության միջոցով։ Երկրները տարբերվում են նաև եկամուտներով աջակցումը որպես գյուղատնտեսական քաղաքականության նպատակ ընտրելով և դրա իրականացման համար համապատասխան գործիքներ առանձնացնելով։ Երկրների մեծամասնությունն ունի հատուկ ագրո-բնապահպանական ծրագրեր, սակայն գյուղատնտեսական քաղաքականության բնապահպանական կողմը բխում է առաջին երկու նպատակներին ուղղված քաղաքականության ընտրությունից։

Ճիշտ է, յուրաքանչյուր երկիր ագրարային քաղաքականությունը հարմարեցնում է իր առանձնահատկություններին, սակայն առկա են զարգացման մի շարք ընդհանուր միտումներ։ Առաջին՝ եթե դիտարկենք ընդհանուր միջազգային պատկերը, ապա քաղաքականությունների վերանայման և դրանց մեջ փոփոխություններ կատարելու միտում կա։ Հիմնական պատճառներից մեկը COVID-19 համաճարակն էր, որը գյուղատնտեսության և սննդի քաղաքականության վրա մեծ ազդեցություն է ունեցել։ Մասնավորապես՝ Կոլումբիան ներկայացրել է «Միասին գյուղի համար» (Juntos por el campo) նախաձեռնությունը, որը ներառում է մի շարք նոր ծրագրեր և սուբսիդիաներ գյուղատնտեսական ոլորտում կիրառվող մեքենաների, սարքավորումների և տրանսպորտի համար<sup>22</sup>։ Ինդոնեզիան ներկայացրել է հատուկ ծրագրեր՝ մեծացնելու Կենտրոնական Կալիմանտանի՝ շուրջ 165 000 հեկտար ճահճային հողի արտադրական հզորությունը, ինչպես նաև ընդլայնելու բրնձի, եգիպտացորենի, չիլի պղպեղի ցանքատարածություններն ավելի քան 250 000 հեկտարով։ Ջապոնիան վերանայել է «Պարենի, գյուղատնտեսության և գյուղական տարածքների համար հիմնական պլանը», որով սահմանվում են քաղաքականության ուղղությունները, պարենային ինքնապահովման նպատակները և գյուղմթերքի արտադրության թիրախները հաջորդ տասը տարիների համար։ Վիետնամը հաստատել է մի շարք ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր՝ խթանելու գյուղատնտեսությունը և գյուղական համայնքների զարգացումը։ Մասնավորապես՝ մշակվել են անասնաբուծության զարգացման 2021-2030 թթ. նոր ռազմավարությունը, 2021-2025 թթ. գյուղատնտեսության ոլորտում ներդրումների խթանման ծրագիրը, «Գյուղատնտե-

<sup>21</sup> OECD, Understanding food systems – The triple challenge,  
<https://www.oecd.org/food-systems/understanding/triple-challenge/>

<sup>22</sup> Կոլումբիայի ագրոնախարարության պաշտոնական կայքէջ՝  
<https://www.minagricultura.gov.co/noticias/Paginas/El-programa-%E2%80%9CJuntos-Por-el-Campodel-MinAgricultura-ser-del-agro-opita-.aspx>

սության կայուն զարգացման և կլիմայի փոփոխության հարմարվողակա-  
նություն» մագիստրոսական ծրագիրը Մեկոնգի համալսարանի համար,  
2020-2030 թթ. օրգանական գյուղատնտեսության զարգացման սխեման և  
2030 թ. ոռոգման ռազմավարությունը<sup>23</sup>:

Բացի կորոնավիրուսով պայմանավորված փոփոխություններից, երկրնե-  
րը ներդրել են աջակցության նոր միջոցառումներ և բարեփոխումներ: Օրի-  
նակ՝ Արգենտինան այժմ կիրառում է գյուղմթերքի արտահանման ավելի ակ-  
տիվ սահմանափակումներ՝ վերականգնելով հարկերը, որոնք նվազեցվել  
էին 2015-2018 թթ.-ին: Բրազիլիան ստեղծել է ֆինանսական կառուցակարգեր  
գյուղատնտեսական վարկերի նոր միջոցներ ներգրավելու համար՝ նվազեց-  
նելով Pronaf-ի<sup>24</sup> կողմից տրամադրվող արտոնյալ վարկի տարեկան տոկո-  
սադրույքները: Հարավային Կորեան ստեղծել է ուղղակի վճարումների նոր  
համակարգ՝ միավորելով բրնձի, լեռնային մշակաբույսերի և ոչ բարենպաստ  
տարածքների ուղղակի վճարումները մեկ համակարգի մեջ: Բրնձի համար  
եկամտի փոխհատուցման համակարգը, որը եղել է Կորեայի հիմնական վճար-  
ման ծրագիրը, վերածվել է վճարման առանձին ծրագրի և համապատասխա-  
նեցվել շրջակա միջավայրի կանոնակարգերին<sup>25</sup>: Ֆիլիպինները ստեղծել է  
բրնձի մրցունակության մակարդակի բարձրացման հիմնադրամ (Rice  
Competitiveness Enhancement Fund)՝ աջակցելու մեքենաների և սարքավոր-  
ումների օգտագործմանը, բարձրորակ բրնձի սերմերի սելեկցիային, ներ-  
դրումների ընդլայնմանը<sup>26</sup>: Ռուսաստանը մեծացրել է գյուղատնտեսության  
մեջ ներդրումների աջակցությունը, մասնավորապես՝ ավելացնելով գյուղա-  
տնտեսական տեխնիկայի, գյուղմթերք վերամշակող սարքավորումների քա-  
նակը: Rosagroleasing ընկերությունը մտադիր է մեկ տարվա ընթացքում մա-  
տակարարել ավելի քան 9 000 միավոր սարքավորումներ, ինչը 40%-ով ավելի  
է նախորդ տարվա ցուցանիշից<sup>27</sup>: Հարավային Աֆրիկան ստեղծել է Գյուղա-  
տնտեսության զարգացման գործակալություն՝ աջակցելու հողային բարեփո-  
խումների կայուն ծրագրերի զարգացմանը և նվազեցնելու փոքր ֆերմերային  
տնտեսությունների առևտրայնացման խոչընդոտները:

Ուկրաինան նոր օրենսդրություն է ընդունել, որը դադարեցնում է գյուղա-  
տնտեսական հողերի վաճառքի արգելքը: 2021 թ. հուլիսից Ուկրաինայի քա-  
ղաքացիներին թույլատրվել է գնել մինչև 100 հեկտար հողատարածք:

Գյուղատնտեսության զարգացման մեկ այլ միտում էլ թվային տեխնոլո-  
գիաների մեծ թափով ներդրումն է ոլորտում: Ճապոնիան հրապարակել է

<sup>23</sup> Country Programming Framework For Viet Nam էջեր 4, 5:

<sup>24</sup> Pronaf-ը փոքր ֆերմերային տնտեսությունների համար հիմնական վարկային ծրագիր է  
Բրազիլիայում:

<sup>25</sup> USDA, Foreign Agricultural Service, South Korea: New Direct Payment Program for Korean Rice Producers,  
2020, <https://www.fas.usda.gov/data/south-korea-new-direct-payment-program-korean-rice-producers>

<sup>26</sup> Philippine's Rice Competitiveness Enhancement Fund,  
<https://www.da.gov.ph/rice-competitiveness-enhancement-fund/>

<sup>27</sup> <http://www.investinginrussia.ru/ppp/rosagrolising/>



Smart Agriculture Comprehensive Policy Package-ը (Խելացի գյուղատնտեսության միասնական քաղաքականության փաթեթ), որը նախատեսում է զալիք հինգ տարիների ընթացքում հասնել ոլորտի ինտենսիվության շեշտակի բարելավմանը: Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնաբուծության նախարարությունը նաև սահմանել է DX of Agriculture Initiative-ի հայեցակարգը, որը գյուղատնտեսության թվայնացման ամբողջական ճանապարհային քարտեզ է<sup>28</sup>: Կորեան նույնպես ընդունել է Smart Agriculture Project-ը, որի նպատակն է խթանել նոր տեխնոլոգիաների կիրառումը, երիտասարդ ու նորարար ֆերմերներին ձեռնարկատիրության ոլորտում ներգրավումը: Երիտասարդ ֆերմերները կարող են օգտվել ֆերմերային համալիրներում գյուղատնտեսական օբյեկտների և հողատարածքների արտոնյալ վարձակալությունից, ինչպես նաև այս ծրագրով կիրականացվեն միջոլորտային հետազոտություններ և նոր տեխնոլոգիաների զարգացմանը արտոնյալ վարկավորման բիզնես ծրագրեր<sup>29</sup>: Թուրքիայի կառավարությունը ներկայացրել է գյուղատնտեսության շուկայի թվային հարթակ (DITAP), որը կօգնի զարգացնել մատակարարների կապերը փոքր ֆերմերային տնտեսությունների և սննդի վերամշակման ու մանրածախ առևտրի խոշոր ձեռնարկությունների միջև<sup>30</sup>:

Շատ երկրներ գյուղատնտեսության զարգացման նպատակով կնքել են երկկողմ և տարածաշրջանային առևտրային համաձայնագրեր: Օրինակ՝ 2020 թ.-ի նոյեմբերի 15-ին Ասիայի տասնհինգ երկրների միջև կնքվեց «Տարածաշրջանային համապարփակ տնտեսական գործընկերությունը» (RCEP) համաձայնագիրը: Ըստ այդ համաձայնագրի՝ մասնակից երկրները, ներառյալ՝ Ավստրալիան, Չինաստանը, Ինդոնեզիան, Ճապոնիան, Նոր Զելանդիան, Ֆիլիպինները, Կորեան և Վիետնամը, երկու տասնամյակի ընթացքում 90%-ով կնվազեցնեն ապրանքների մաքսատուրքերը և աշխատանքներ կիրականացվեն ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի, ինչպես նաև արագ փչացող ապրանքների ծագման կանոնների և սահմանային գործընթացների պարզեցման համար: Եվրամիությունը և Մեքսիկան ավարտեցին բանակցությունները ԵՄ - Մեքսիկա նոր առևտրային համաձայնագրի շուրջ, որը հետագայում կվերացնի գյուղատնտեսական մաքսատուրքերի ավելի քան 85%-ը, որ դուրս էր մնացել 2000 թ.-ից գործող ԵՄ - Մեքսիկա գլոբալ համաձայնագրից:

Ըստ ՏՀԶԿ 2021 թ.-ի զեկույցի՝ կառույցում ընդգրկված 54 երկիր 2018-2020 թթ.-ին տարեկան 720 միլիարդ ԱՄՆ դոլարի աջակցություն է փոխանցել

<sup>28</sup> Matsumoto M., Japan's initiatives on Smart Agriculture, 2021, <https://www.eria.org/uploads/media/News-and-Views/2021-ERIA-PPT-Japans-initiatives-on-Smart-Agriculture.pdf>

<sup>29</sup> S. Korea beefs up smart farming to cope with aging population in agriculture.

<sup>30</sup> <https://raillynews.com/2020/05/What-is-the-book-about-the-digital-agriculture-market/>

գյուղատնտեսությանը: Դրան հակադարձել է ֆերմերների անուղղակի հարկումը՝ տարեկան ավելի քան 104 միլիարդ դոլարի չափով: Անհատ արտադրողները տարեկան 540 միլիարդ ԱՄՆ դոլարի աջակցություն են ստացել (գյուղատնտեսությանն ուղղված բոլոր տրանսֆերտների մոտ 75%-ը) տարբեր ծրագրերի միջոցով<sup>31</sup>:

Կառավարությունների աջակցությունը հիմնականում լինում է միջոցառումների միջոցով, որոնք փոփոխում են ներքին գները՝ համաշխարհային շուկայի գների փոփոխության համապատասխան: Այս քաղաքականությունն ինքնին չի հանգեցնում պետական ծախսերի փոփոխությանը, այլ ներկայացնում է շուկայական փոխանցումներ սպառողներից արտադրողներին կամ հակառակը: Ստորև ներկայացված են աջակցության տեսակները և չափերը՝ ըստ ՏՀԶԿ մեթոդաբանության.

- Շուկայական գների աջակցությունը առաջանում է այն պայմաններում, երբ գների ճեղքվածք է ստեղծվում գյուղատնտեսական ապրանքների ներքին շուկայի գների և սահմանային գների միջև: Ներմուծման լիցենզիաները, սակագները, սակագնային դրույքաչափերը և նվազագույն գները այնպիսի միջոցառումների օրինակներ են, որոնք հանգեցնում են սպառողների կողմից վճարվող ավելի բարձր գների (արդյունքում՝ դրական շուկայական գների աջակցություն): Շուկայական գների աջակցությունը 2018-2020 թթ.-ին կազմել է տարեկան 272 միլիարդ ԱՄՆ դոլար:
- Որոշ զարգացող երկրներ (Արգենտինա, Հնդկաստան, Վիետնամ, Հազախստան, Ռուսաստան և Ինդոնեզիա) անուղղակիորեն հարկում են արտադրողներին՝ մի քանի կամ բոլոր գյուղատնտեսական ապրանքների վրա սահմանափակումներ դնելով, ինչպիսիք են արտահանման հարկերը և արտահանման սահմանափակումները՝ այդ ապրանքների ներքին գները ճնշելու նպատակով (արդյունքում՝ բացասական շուկայական գների աջակցություն): Ընդհանուր առմամբ, բացասական շուկայական գների աջակցությունը տարեկան կազմում է ավելի քան 104 միլիարդ ԱՄՆ դոլար:

Մնացած աջակցության միջոցառումները տարեկան 447 միլիարդ ԱՄՆ դոլար են արժենում և տրամադրվում են գյուղատնտեսության ոլորտին ուղղված բյուջետային վճարումների և ծախսերի տեսքով (այսինքն՝ դրանք ներկայացնում են փոխանցումներ հարկատուներից արտադրողներին, սպառողներին կամ ամբողջ ոլորտին):

<sup>31</sup> OECD, Agricultural Policy Monitoring and Evaluation 2021: Addressing the Challenges Facing Food Systems, <https://www.oecd-ilibrary.org/sites/2d810e01-en/1/3/2/5/index.html?itemId=/content/publication/2d810e01-en&csp=af0753aa6f1227099c73c6abb0fd552b&itemIGO=oecd&itemContentType=book>

Արտադրողներին այլ աջակցությունը (տարեկան 202 միլիարդ ԱՄՆ դոլար) ներառում է հողատարածքի, կենդանիների թվաքանակի, եկամուտների և գյուղատնտեսական ապրանքների արտադրության հետ չկապված, ինչպես օրինակ՝ պատմական իրավունքի վրա հիմնված վճարումներ: Օրինակ՝ ԵՄ-ում Ֆերմերները, սովորաբար, ստանում են եկամտային աջակցություն՝ ելնելով իրենց ֆերմայի չափից՝ ըստ հեկտարի: 1 հա-ի համար սահմանված է 210 ԱՄՆ դոլար<sup>32</sup>, ընդ որում, ԱՄՆ-ում՝ 750, ԱՀԿ-ում՝ 450, ՌԴ-ում՝ 35 ԱՄՆ դոլար<sup>33</sup>: Այս սուբսիդիաները համարվում են «ավելի քիչ կապված» արտադրության հետ և հետևաբար՝ ավելի արդյունավետ հողի սեփականատերերին եկամուտ և արտադրական այլ գործոններ փոխանցելու համար: Վճարումները կարող են պայմանավորված լինել նաև բնապահպանական նպատակներին աջակցմամբ: Այս կատեգորիան ներառում է հատուկ վճարումներ՝ նախատեսված ֆերմերներին խրախուսելու համար, որպեսզի վերջիններս օգտագործեն էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաներ և որդեգրեն բնապահպանական գործելաոճ:

- Ներդրումները հետազոտությունների և նորարարության մեջ, ենթակառուցվածքների (ներառյալ՝ արտաֆերմերային ոռոգման համակարգեր, տրանսպորտ և տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների ապահովում) կենսաանվտանգությունը, շուկայավարումը և հանրային բաժնետոմսերի պահպանումը: Այս քաղաքականությունը չափվում է ընդհանուր ծառայություններին աջակցության գնահատմամբ, որը կազմում է տարեկան 102 միլիարդ ԱՄՆ դոլար կամ գյուղատնտեսությանն ուղղված բոլոր դրական փոխանցումների 14%-ը:
- Սպառողների սուբսիդիաները (օրինակ՝ պարենային աջակցության ծրագրեր) կազմել են տարեկան 78 մլրդ ԱՄՆ դոլար կամ գյուղատնտեսությանը ուղղված բոլոր դրական փոխանցումների 11%-ը:

Ընդհանուր աջակցության մասնաբաժինը ՀՆԱ-ում (%), (TSE) ցույց է տալիս գյուղատնտեսական ոլորտի աջակցության արժեքն ընդհանուր տնտեսության համար և տարբեր երկրների աջակցության մակարդակների բազմազանությունը: Այս ցուցանիշը ամենաբարձրն է Ինդոնեզիայում (2,5%), Ֆիլիպիններում (2,5%) և Չինաստանում (1,6%), մասամբ արտացոլելով այն փաստը, որ գյուղատնտեսությունն այս երկրների տնտեսություններում համեմատաբար բարձր կշիռ ունի:

Հետազոտության մեջ, բացի միջազգային միտումներից, ուսումնասիրվել են առանձին երկրների գյուղատնտեսական ոլորտը և վերջիններիս վարած քաղաքականությունը: Ստորև առանձնացրել ենք մի քանի երկրներ,

<sup>32</sup> European Commission, [https://ec.europa.eu/info/food-farming-fisheries/key-policies/common-agricultural-policy/income-support/income-support-explained\\_en#howitworks](https://ec.europa.eu/info/food-farming-fisheries/key-policies/common-agricultural-policy/income-support/income-support-explained_en#howitworks)

<sup>33</sup> Larionova N.P., Government support for agriculture and evaluation of its effectiveness at the macro and micro level, 2019 IOP Conf. Ser.: Earth Environ. Sci. 341(2019) 012211, p. 3, <https://iopscience.iop.org/article/10.1088/1755-1315/341/1/012211/pdf>

որոնք ավելի տարբերակված քաղաքականություն ունեն՝ կապված իրենց առանձնահատկությունների հետ:

Քանի որ ԱՄՆ-ի իշխանությունն ավելի վաղ է գիտակցել գյուղատնտեսության ռիսկային լինելու փաստը, նրա աջակցության ծրագրերը բաժանվում են հետևյալ խմբերի.

- Բուսաբուծության ապահովագրման ծրագրեր: Բուսաբուծության ապահովագրությունը հասանելի էր Միացյալ Նահանգների որոշ մասերում, վերջին 30 տարում այն դարձավ ազգային գյուղատնտեսության հիմնական մասը:
- Ներդրվել են ռիսկերի կառավարման նոր գործիքներ՝ ARC և PLC: ԱՄՆ-ի կառավարությունը մեծ տեղ է տալիս ապահովագրությանը: Ժամանակի ընթացքում փորձ է արվում վերացնելու ֆերմերներին ուղղակի վճարները և դրանք փոխարինելու փոքր կորուստների ապահովագրական ծրագրով: Ծրագիրը թույլ է տալիս արտադրողներին ընտրել իրենց պայմաններին առավել հարմար ձևաչափ: Հիմնական տարբերակները գյուղատնտեսական ռիսկերի ծածկույթն է (ARC), որն ապահովում է եկամուտների ապահովագրություն, և գների կորստի ծածկույթը (PLC), որն ապահովում է գների ապահովագրություն:
- Գյուղատնտեսական վարկեր և վարկերի երաշխիքներ: Այս ծրագիրը գործել է դեռևս 1930 թ.-ից սկսած՝ որպես ֆինանսավորման այլընտրանքային աղբյուր, երբ սնանկացած բանկերը մերժում էին վարկավորել ֆերմերներին: Այժմ USDA-ն հիմնականում երաշխավորում է բանկերի կողմից տրամադրված վարկերի մարումը: Այս ծրագիրն օգնում է սահմանափակ ռեսուրսներ ունեցող մարդկանց ընդլայնել ֆերման՝ դարձնելով դա ավելի կենսունակ արտադրական միավոր<sup>34</sup>:
- Պահպանման պահուստային ծրագիր (CRP): 1985 թ. «Ֆերմերային օրինագծում» նշվում էր սկզբնական դրդապատճառը՝ նվազեցնել շրջակա միջավայրի վնասը էկոլոգիապես զգայուն հողի վրա՝ այն դուրս բերելով արտադրությունից: Իսկ ֆերմերներն արտադրությունը դադարեցնելու դեպքում ստանում էին եկամտի փոխհատուցում: Երկրորդ պատճառն այդ ժամանակ գյուղմթերքի ավելցուկն էր, որն ապակայունացնում էր գները շուկայում: Սա կամավոր ծրագիր է, որը հեռացնում է էկոլոգիապես զգայուն հողն արտադրությունից՝ 10-15 տարի ժամկետով: Եթե ֆերմերը ժամկետից շուտ է օգտագործում հողը, ապա տուգանվում է<sup>35</sup>: Ծրագիրն այժմ էլ գործում է, բայց սահմանափակվում է Կոնգրեսի կողմից:

<sup>34</sup> Farm Credit Administration, History of FCA, <https://www.fca.gov/about/history-of-fca>

<sup>35</sup> ԱՄՆ-ի կառավարության պաշտոնական կայքէջ՝ <https://www.fsa.usda.gov/programs-and-services/conservationprograms/conservation-reserve-program/>

2020 թ.-ին ԱՄՆ-ի կառավարության ընդհանուր աջակցության չափը եղել է 96.8 մլրդ ԱՄՆ դոլար, որից արտադրողներն անհատապես աջակցվել են 40.7 մլրդ-ի չափով<sup>36</sup>:

Եվրոպական միության (ԵՄ) երկրների ագրարային քաղաքականությունն ագրարային տնտեսության ձևավորման և զարգացման հաջող մոդելի օրինակ է: Արևմտաեվրոպական գյուղատնտեսությունը, կարճ ժամանակում հաղթահարելով հետպատերազմյան ավերածությունները, դարձել է աշխարհում սննդամթերքի խոշորագույն արտադրողը:

Եվրոպական միության երկրների ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականությունն (CAP) իրականացվում է 1962 թվականից և ֆինանսավորվում Եվրոպական գյուղատնտեսական կոդմոնոքշման և երաշխիքների հիմնադրամի կողմից, որը գործում է 1964 թվականից: ԵՄ ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականության նպատակն է անդամ երկրներում ապահովել գյուղատնտեսության բարձր արտադրողականություն՝ արտադրության գործոնների, առաջին հերթին՝ աշխատուժի օպտիմալ օգտագործման և տեխնոլոգիական առաջընթացի ներդրման միջոցով, նպաստել ֆերմերային տնտեսությունների եկամուտների մակարդակի բարձրացմանը, շուկայի կայունացման գործիքներով հասնել սպառողներին մատակարարվող ապրանքների ընդունելի գների ապահովման:

ԵՄ ագրարային հատվածի միասնական քաղաքականության ամբողջականությունն ու հաջողությունը որոշվում են հետևյալ հիմնական սկզբունքներով.

- ԵՄ երկրների ներքին շուկայի միասնություն, որը ենթադրում է գյուղատնտեսական ապրանքների ազատ տեղաշարժ՝ առանց սահմանափակումների,
- սանիտարահիգիենիկ և անասնաբուժական ստանդարտների համակարգում,
- ազատ մրցակցության սկզբունքի պահպանում:

ԵՄ գյուղատնտեսական հողերի բարձր արտադրողականությունը պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես՝ խոտհարքների, արոտավայրերի և անտառային տնկարկների որոշակի կառուցվածքով: Էկոլոգիապես հավասարակշռված են համարվում այն գյուղատնտեսական նշանակության հողերը, որտեղ խոտհարքների, արոտավայրերի և անտառային տնկարկների տեսակարար կշիռը տատանվում է 30%-ից մինչև 50%: Եվրոպական միության երկրների գյուղատնտեսական հողերի կառուցվածքում բնական կերային տարածքների տեսակարար կշիռը միջին հաշվով կազմում է 39,3%: Օրինակ՝ Ֆրանսիայում դրանք կազմում են 36,6%, Գերմանիայում՝ 30,4%, Մեծ Բրիտանիայում՝ 63,1%:

<sup>36</sup> OECD, Agricultural Policy Monitoring and Evaluation 2020, Figure 29.1,  
<https://www.oecd-ilibrary.org/sites/2bef8da8-en/index.html?itemId=/content/component/2bef8da8-en>

Քանի որ ոլորտային և տարածքային գործոններն ագրարային տնտեսության մեջ ինտեգրված են մեկ ամբողջության մեջ, ԵՄ ագրարային քաղաքականությունը գյուղատնտեսության խնդիրների լուծումից աստիճանաբար առաջնություն է տալիս տարածքների զարգացման խնդիրներին: Ահավասիկ, ԵՄ երկրներում գյուղատնտեսության վրա դրված են որոշակի ագրոէկոլոգիական պահանջներ, որոնք ներառում են. մաքուր օդ և ջուր, բնական էկոհամակարգերի պահպանում, դաշտերի, ճանապարհների, ջրանցքների երկայնքով բնական բուսականության բուֆերային շերտերի ստեղծում, տեղական նստակյաց և չվող թռչունների գոյության պայմանների ապահովում, լանդշաֆտների էսթետիկ գրավչություն, բնության հուշարձանների, հանգըստի գոտիների պահպանում և դրանց զարգացում, հողերի և դրանց բերրիության պաշտպանություն, ջրհեղեղների, անտառային հրդեհների և այլ բնական աղետների կանխարգելում:

ԵՄ ագրարային քաղաքականության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում բոլոր անդամ պետությունների պարտադիր պայքարը, որն ուղղված է զենեոտիկորեն ձևափոխված մշակաբույսերի և մոնումշակույթների բացառմանը, քիմիական պարարտանյութերի օգտագործման նվազեցմանը կամ վերացմանը, բնական պարարտանյութերի օգտագործման ընդլայնմանը և բնական լանդշաֆտների պահպանմանը:

Նշենք, որ ԵՄ երկրներում ազգային ագրարային քաղաքականությունը միասնական քաղաքականության շարունակությունն է: Այդուհանդերձ, կան որոշակի տարբերություններ ֆինանսավորման ուղղությունների և մեթոդների մեջ: Օրինակ՝ Դանիան, բացի ԵՄ միջոցներից, իր պետական բյուջեի մեկ երրորդի չափով ծախսում է արտադրությանն ու շուկաներին աջակցելու համար: Գրեթե բոլոր երկրներն իրենց ազգային գյուղատնտեսական բյուջեի կեսը հատկացնում են կառուցվածքային քաղաքականությանը (գյուղացիական տնտեսությունների արդիականացում և ընդլայնում, հողերի և գյուղատնտեսական այլ ռեսուրսների բարելավում, ֆերմերների գործառնական գործունեության բարելավում, անբարենպաստ պայմաններով տարածքների զարգացում):

Յուրօրինակ ագրարային քաղաքականություն է իրականացնում Իսրայելը, որին բնորոշ է 5 առանձնահատկություն: Առաջինն արդյունավետ կառավարումն է: Իսրայելը դեռևս պետականության հռչակման առաջին տարիներին իր ազգային բյուջեի 30 տոկոսը հատկացնում էր գյուղատնտեսությանը և ոռոգմանը, ևս 30 տոկոսը՝ կրթությանը: Սա հանգեցրեց ամուր և նպատակաուղղված ագրոարդյունաբերական համակարգի ձևավորմանը, որի առանձին ենթաճյուղեր, ինչպիսիք են մրգերն ու բանջարեղենը, կաթնային տավարաբուծությունն ու ձկնաբուծությունը, մրցունակ են միջազգային շուկաներում:

Երկրորդը ֆերմերների կազմակերպումն է: Ի սկզբանե՝ Իսրայելի կառավարությունը կոոպերատիվներ է ստեղծել, որոնք համախմբել են ֆերմերներին (կիրուցներ և մոշավներ), և որտեղ գործում է հողի, ջրի և արտադրության մյուս միջոցների խնայողական օգտագործման արդյունավետ համակարգ:

Երրորդը շուկայական ուղղվածությունն է: Շուկան ծառայում է որպես ուղղորդիչ պլանավորման, առաջնահերթությունների որոշման և նորարարության խթանման համար: Հատկանշական է, որ ի սկզբանե կանխորոշվել են ինչպես պարենային ինքնաբավության մակարդակի բարձրացման, այնպես էլ արտահանման զարգացման գերակայությունները: Իսրայելի գյուղատնտեսության հետազոտությունը միշտ կենտրոնացած է եղել երկրի մրցակցային առավելությունների բարելավման ուղիների նախանշման վրա: Ահա թե ինչպես է Իսրայելը դարձել աշխարհի առաջատարը բազմաթիվ ապրանքատեսակների, այդ թվում՝ արմավի, նռան, նարնջի և լոլիկի արտադրության մեջ<sup>37</sup>:

Չորրորդ՝ Իսրայելն ունի ֆերմերակենտրոն և նորարարական մոտեցում՝ լուծելու ֆերմերների և մասնավոր հատվածի խնդիրները: Այս մոտեցման բանալին «ոսկի եռանկյունին» է՝ սերտ հարաբերությունները հետազոտողների, գյուղատնտեսության ոլորտի մասնագետների և ֆերմերների միջև:

Հինգերորդ՝ Իսրայելը սփյուռքից եկած հսկայական օգնություններից հատկացրել է նաև գյուղատնտեսությանը: Օրինակ՝ դեռևս 1950-ականներին սփյուռքից օգնություն օգտագործվել է 250-կիլոմետրանոց ջրատար խողովակ կառուցելու համար, մի ծրագիր, որն այն ժամանակ բազմաթիվ ինժեներներ անիրագործելի էին համարում: Գալիլեայի ծովի հյուսիսից մինչև Նեգև անապատ ձգվող այս ցանցը նվազագույն կորուստներով ոռոգման ջուր է մատակարարում: 2019 թ.-ին ընդհանուր աջակցության չափը եղել է 1,7 մլրդ ԱՄՆ դոլար, որից արտադրողներին որպես անհատական աջակցություն է տրամադրվել 1,5 մլրդ դոլարը<sup>38</sup>:

Ավստրալիան առանձնացրել ենք այն պատճառով, որ պետական բյուջեից համեմատաբար քիչ հատկացումներ է տալիս գյուղատնտեսական ոլորտին: Այն ունի մոտ 7,7 միլիոն քառ. կմ հողատարածք, որի 58%-ը հատկացված է գյուղատնտեսությանը: Գյուղարտադրանքը բնակչության սննդի պահանջարկի համեմատ մեծ է, ինչի արդյունքում դրա մեծ մասն արտահանվում է: Մյուս առանձնահատկությունն է երաշտի վտանգը, որը շատ տարածված է այս երկրում, և աջակցության գլխավոր ուղղություններից մեկն էլ հենց երաշտի կանխումն է:

Գյուղատնտեսական քաղաքականության հիմնական նպատակներն են.

<sup>37</sup> How Israel Transformed Its Agriculture Sector: Five Insights for Africa,  
[https://institute.global/advisory/how-israel-transformed-its-agriculture-sector-five-insights-africa?fbclid=IwAR3BWioPEquMZS0wqT9uT8RDMVPBu06XK-SwPLXYkL\\_cw\\_7-3PTpiIHqKFg](https://institute.global/advisory/how-israel-transformed-its-agriculture-sector-five-insights-africa?fbclid=IwAR3BWioPEquMZS0wqT9uT8RDMVPBu06XK-SwPLXYkL_cw_7-3PTpiIHqKFg)

<sup>38</sup> OECD, Agricultural Policy Monitoring and Evaluation 2020, Figure 15.1,  
<https://www.oecd-ilibrary.org/sites/2bef8da8-en/index.html?itemId=/content/component/2bef8da8-en>

- մրցունակության մակարդակի բարձրացում,
- աջակցություն աղետների (երաշտի) հետևանքները վերացնելու համար,
- արտադրողականության աջակցություն հետազոտությունների և զարգացման միջոցով (R&D)<sup>39</sup>:

Ավստրալիան որդեգրել է ազատ առևտրի քաղաքականություն և դրա համար էլ նվազագույնի է հասցրել քաղաքականության միջամտությունները և կարգավորումները՝ խթանելով անհատական ֆերմերային տնտեսությունները և նրանց մրցունակությունը միջազգային շուկաներում:

Ավստրալիան տարեկան 250 մլն ավստրալիական դոլարով (170 մլն եվրո) աջակցում է անհատական ֆերմերներին, հատկացնում 35 միլիոն ավստրալիական դոլար (24 միլիոն եվրո) երաշտի դեմ ենթակառուցվածքային հիմնադրամին և 26 միլիոն ավստրալիական դոլար (18 մլն եվրո)՝ երաշտից տուժած տարածքներում վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարելու համար:

Կանադայում շատ զարգացած է գյուղատնտեսական ռիսկերի կառավարումը: Ռիսկերի կառավարման գործիքներից են.

- AgriInvest-ը, որը ինքնակառավարվող ֆերմեր-կառավարություն խնայողական հաշիվ է, թույլ է տալիս արտադրողներին խնայել գումար կամ ապահովել ներդրումներ, որոնք կարող են օգտագործվել եկամուտների պակասուրդը վերականգնելու, ինչպես նաև ֆերմայում առկա ռիսկերը նվազեցնելու համար: AgriInvest-ի հաշիվը ստեղծվում է այն ժամանակ, երբ ֆերմերը տարեկան ավանդներ է կատարում և ստանում իր ավանդին համարժեք ներդրումներ դաշնային, մարզային կամ տարածքային կառավարություններից: Համապատասխան պետական մոծումների սահմանաչափը տարեկան 15 000 CAD (10 241 եվրո) է: Ծրագիրը գործում է՝ սկսած 2013 թ.-ից, իսկ հաշիվը պահվում է համապատասխան ֆինանսական հաստատություններում<sup>40</sup>:
- AgriStability-ն մարժայի վրա հիմնված ֆերմերային ծրագիր է, որը պաշտպանում է ավելի մեծ եկամուտներից կորուստները, քան «AgriInvest»-ը: Այն, կարելի է ասել, նախատեսված է «խոր» պաշտպանություն ապահովելու համար: Եթե ֆերմերի եկամուտները ցածր են իր կատարած ծախսերի 70%-ից, ապա գործում է AgriStability-ն:

<sup>39</sup> Sterly, S., Jongeneel, R., Pabst, H., Silvis, H., Connor, J., Freshwater, D., Shobayashi, M., Kinoshita, Y., Van Kooten, C., Zorn, A., 2018; Research for AGRI Committee - A comparative analysis of global agricultural policies: the future CAP, European Parliament, Policy Department for Structural and Cohesion Policies, Brussels, [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2018/629183/IPOL\\_STU\(2018\)629183\\_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2018/629183/IPOL_STU(2018)629183_EN.pdf)

<sup>40</sup> Sterly, S., Jongeneel, R., Pabst, H., Silvis, H., Connor, J., Freshwater, D., Shobayashi, M., Kinoshita, Y., Van Kooten, C., Zorn, A., 2018; Research for AGRI Committee - A comparative analysis of global agricultural policies: lessons for the future CAP, European Parliament, Policy Department for Structural and Cohesion Policies, Brussels, [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2018/629183/IPOL\\_STU\(2018\)629183\\_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2018/629183/IPOL_STU(2018)629183_EN.pdf)



30%-ը փոխհատուցում է ագրիինվեստը, իսկ մնացածն արդեն՝ պետությունը:

- AgriRecovery-ն օգնություն է տրամադրում աղետների դեպքում՝ թույլ տալով կառավարություններին լրացնել այն ռիսկերի բացերը, որոնք պետական այլ ծրագրերով չեն ընդգրկված:
- AgriInsurance-ը արտադրողներին պաշտպանում է արտադրության (այսինքն՝ բերքատվության) կորուստներից, որոնք առաջացել են բնական աղետներից, հիվանդություններից, միջատներից և այլն: Այս ապահովագրությունը հասանելի է կանադացի ֆերմերներին 1959 թ.-ից ի վեր, և ապահովագրված ապրանքների ցանկը ժամանակի ընթացքում ավելացել է: «ԱգրիԻնշուրանսը» չի ապահովագրում անասնաբուծական արտադրանք արտադրողներին, բայց նրանք կարող են ապահովագրել իրենց ֆերմայում կերի արտադրությունը<sup>41</sup>:

Կանադայում 2020 թ.-ին ընդհանուր աջակցության չափը եղել է 6,3 մլրդ ԱՄՆ դոլար, որից արտադրողներին, որպես անհատական աջակցություն, տրամադրվել է 4,8 մլրդ դոլարը<sup>42</sup>:

Ճապոնիան մուսոնային երկիր է, և հորդառատ անձրևները բնական են այստեղ: Այն նաև լեռնային երկիր է և, ունենալով լեռնային գետեր, հորդառատ անձրևների ժամանակ մեծանում է ջրհեղեղների և սելավների վտանգը:

Ճապոնիայի կառավարությունը գյուղատնտեսությանն աջակցում է հետևյալ գործիքներով.

1. Հողի բարելավման ծրագրեր (LIP): Սրանք ուղղված են բարձրացնելու գյուղատնտեսության ընդհանուր արտադրողականությունը ռոտզման/դրենաժային կառույցների և հողերի միավորում իրականացնելու միջոցով:

2. Փոխադարձ ապահովագրության սխեմա: Փոխադարձ ապահովագրության սխեման ֆերմերներին տրամադրում է ապահովագրություն բնական աղետներից և ռիսկերից, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և ցրտահարությունները:

3. Ուղղակի վճարումներ լեռնոտ և լեռնային շրջանների ֆերմերներին (DPFHMA): Այս ծրագիրը նպատակ ունի պահպանելու գյուղատնտեսական արտադրությունն անբարենպաստ տարածքներում: Օրինակ՝ զառիթափ վայրերում գտնվող բրնձի դաշտերի մեկ հեկտարի համար սահմանված աջակցության դրույքաչափը 210 000 ճապոնական իեն է (1 657 եվրո):

4. Բազմաֆունկցիոնալ վճարումներ (MP): Կառավարությունն աջակցում է համայնքային գործունեությանը՝ նպատակ ունենալով պահպանելու և

<sup>41</sup> Կանադայի գյուղնախարարության պաշտոնական կայքէջ՝

<https://agriculture.canada.ca/en/agricultural-programs-and-services>

<sup>42</sup> OECD, Agricultural Policy Monitoring and Evaluation 2021 : Addressing the Challenges Facing Food

Systems, [https://www.oecd-ilibrary.org/sites/2d810e01-en/1/3/2/5/index.html?itemId=/content/publication/2d810e01-en&\\_csp=af0753aa6f1227099c73c6abb0fd552b&itemIGO=oecd&itemContentType=book](https://www.oecd-ilibrary.org/sites/2d810e01-en/1/3/2/5/index.html?itemId=/content/publication/2d810e01-en&_csp=af0753aa6f1227099c73c6abb0fd552b&itemIGO=oecd&itemContentType=book)

բարելավելու տեղական ռեսուրսների որակը բազմաֆունկցիոնալ վճարումների միջոցով: Վճարումները դասակարգվում են երկու տեսակի՝ գյուղատնտեսական հողերի պահպանում և ռեսուրսների բարելավում: Առաջինի նպատակն է համայնքային մակարդակով ռոռզման/դրենաժային ջրանցքների և ճանապարհների մաքրմանը և սպասարկմանը աջակցելը: Երկրորդը վերաբերում է լեռնոտ և լեռնային շրջաններում ֆերմերների ուղղակի վճարումներին, և, ի տարբերություն վերոհիշյալ ծրագրի, այս դեպքում վճարումները կատարվում են ֆերմերների խմբերին, այլ ոչ թե անհատ ֆերմերներին:

Աշխարհի ֆերմերների ճնշող մեծամասնությունը 2 հեկտարից պակաս հողատարածք ունեցող փոքր արտադրող է: Բոլոր ֆերմերները միասին արտադրում են պարենի համաշխարհային մատակարարման մոտ 30-34%-ը: Քանի որ փոքր ֆերմերային տնտեսությունները շատ հնարավորություններ չունեն շուկաների (ներքին և արտաքին) հետ կապ հաստատելու, հետևաբար՝ արտադրողականության բարելավման և պարենային համակարգում եկամուտների ամրապնդման քաղաքականությունը պետք է կենտրոնանա փոքր ֆերմերային տնտեսություններին շուկաների հետ կապելու վրա: Նոր տեխնոլոգիաների շնորհիվ նվազել են գործարքային ծախսերը, և բարձրացել է ոլորտի արդյունավետությունը: Թվայնացումը նպաստել է նորամուծական տեխնոլոգիաների և խելացի գյուղատնտեսության կառուցակարգերի ներդրմանը: Թվային տեխնոլոգիաները նաև զգալի ներուժ ունեն սանիտարական և բուսասանիտարական համակարգերում արդյունավետություն ապահովելու համար և կարող են խթանել գյուղատնտեսական ու պարենային ապրանքների առևտուրը: Ուսումնասիրելով մի շարք երկրների գյուղատնտեսության պետական կարգավորման և բարեփոխման փորձը՝ հանգել ենք այն եզրակացության, որ ՀՀ-ում կարող են իրականացվել հետևյալ միջոցառումները.

- Ըստ չափերի դասակարգելով գյուղացիական տնտեսությունները՝ նախատեսել եկամտային աջակցություն 30%-ից մինչև 50%-ի չափով (ԵՄ, ԱՄՆ, Կանադա և այլն):
- Հացահատիկային մշակաբույսերի համար որպես ուղղակի վճար սահմանել 150-200 հազ. դրամը՝ 1 հա հաշվով: 2022 թ. նախատեսվել է վճարել աշնանացան ցորենի համար հավաստագրված սերմերի դեպքում 120 և ոչ հավաստագրված սերմերի դեպքում՝ 70 հազ. դրամ: Սակայն, վճարման ժամկետները և կառուցակարգերը խելամիտ չեն, որը նվազեցնում է այս միջոցառման արդյունավետության մակարդակը:
- ԵՄ օրինակով աջակցություն տրամադրել գյուղական տարածքների ենթակառուցվածքների զարգացմանը և լանդշաֆտների պահպանմանը: Այս միջոցառումն անուղղակի աջակցություն է գյուղի և գյուղատնտեսության զարգացմանը:

- ԱՄՆ-ի և մի շարք երկրների օրինակով գյուղատնտեսական շուկայի կարգավորման համար կիրառել առանձին ապրանքների երաշխավորված կամ նվազագույն գին, վարել շուկայական ինտերվենցիայի քաղաքականություն:
- Իսրայելի օրինակով գործնական փոխհարաբերություն ստեղծել գյուղատնտեսական արտադրողների, ագրոգիտության և ագրոգիտասփյուռ օղակների միջև, ինչպես նաև անցնել ռոտզման փակ համակարգերի ներդրման և ագրոսպասարկման կայանների զարգացման նպատակային ծրագրի մշակմանն ու իրականացմանը:
- Սերտորեն համատեղել գյուղատնտեսության և ագրոգրոսաշրջության ծրագրերը, որոնց համար տրամադրել մրցութային դրամաշնորհներ և արտոնյալ տոկոսադրույքով վարկեր:
- ՀՀ գյուղատնտեսության գիտական ու խորհրդատվական սպասարկման համակարգի արդիականացման նպատակով դիմել միջազգային կազմակերպություններին և նրանց տեխնիկական աջակցությամբ հայտարարել նպատակային ծրագրերի մրցույթ:

**ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ****2.1 ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ցուցանիշների շարժընթացի և կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունը**

ՀՀ տնտեսության համար ագրարային ոլորտն առանձնահատուկ կարևորություն ունի, քանի որ մեր երկրի դեպքում, որը դեպի ծով ելք չունի, այնքան էլ կայուն չեն արտաքին հաղորդակցության ցամաքային ուղիները, և պարենի պակասը լրացնելու ուղղությամբ առկա են լուրջ դժվարություններ: Բացի այդ, գյուղատնտեսության ճյուղում ստեղծվում է ՀՀ ՀՆԱ ավելի քան 11.3%-ը (2021թ.)<sup>43</sup>, իսկ գյուղատնտեսությանը, անտառային տնտեսությանն ու ձկնորսությանը բաժին է ընկնում հանրապետության ընդհանուր զբաղվածների մոտ 21.8%-ը (2021 թ.)<sup>44</sup>: Այդուհանդերձ, հատկապես 2009-2010 թվականներին և 2014 թվականից հետո գյուղատնտեսության ոլորտի արդյունավետությունը նկատելիորեն պակասել է: Դրա վկայությունն են 1 զբաղվածի հաշվով ցածր աշխատանքի արտադրողականությունը և ժամանակակից տեխնիկայով ապահովվածությունը:

Այս տեսանկյունից, հրատապ է ուսումնասիրել հատկապես վերջին տասնամյակում ՀՀ ագրարային ոլորտի զարգացման շարժընթացը, դիտարկել գյուղատնտեսության ճյուղի հիմնական խնդիրները և հիմնավորել պետական աջակցության ծրագրերի անհրաժեշտությունն ու հիմնական թիրախները: Գյուղատնտեսության ոլորտի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը շեշտված է ՀՀ կառավարության ծրագրում<sup>45</sup> և համարվում է ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ռազմավարական յոթ առաջնահերթություններից մեկը<sup>46</sup>:

<sup>43</sup> ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, հունվար-հունիս, [https://www.armstat.am/file/article/f\\_sec\\_2\\_2022\\_1.pdf](https://www.armstat.am/file/article/f_sec_2_2022_1.pdf)

<sup>44</sup> ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2022, <https://www.armstat.am/file/doc/99528083.pdf>

<sup>45</sup> Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության կատարմանն ուղղված 2020-2022 թվականների միջոցառումների ծրագիր, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137852>

<sup>46</sup> Մահմանված է ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137852>

ՀՀ գյուղատնտեսությունը վերափոխումների տարբեր փուլեր է անցել՝ բնութագրվելով ոլորտին հատուկ խնդիրներով, որոնք էլ արտացոլվել են համապատասխան վիճակագրական ցուցանիշների շարժընթացում:

ՀՀ գյուղատնտեսության ոլորտի հիմնախնդիրներն ուսումնասիրել են Ն. Մանասերյանը<sup>47</sup>, Ա. Բայադյանը<sup>48</sup>, Ս. Ավետիսյանը, Հ. Ծպնեցյանը<sup>49</sup>, Ա. Ոսկանյանը<sup>50</sup> և այլ հեղինակներ, որոնց մատնանշած հիմնախնդիրները հիմնականում համընկնում են: Մասնավորապես՝ Ս. Ավետիսյանն առանձնացնում է վարելահողերի և բազմամյա տնկարկների ոչ արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները, որոնց պատճառները հեղինակը շեշտադրում է հետևյալ հաջորդականությամբ. *տնտեսության փոքր չափեր -> հողերի մասնավորություն -> ռոտման համակարգերի անկադրարություն -> արժեշտային հետ կապված խնդիրներ -> հողերի ղեկավարացիա -> բնակչության ծերացում -> միգրացիա -> լքված հողատարածքներ*<sup>51</sup>: Ըստ էության, հեղինակի առանձնացրած փոխանցումային շղթան արտացոլում է գյուղատնտեսության ոլորտում առակա հիմնախնդիրների մեծ մասը, մասնավորապես՝ գյուղացիական տնտեսությունների փոքր չափերի խնդիրը, որը, հողատարածքների անարդյունավետ օգտագործումից բացի, հանգեցնում է նաև գյուղատնտեսության արդյունավետության մակարդակի նվազման: Հեղինակը գյուղատնտեսության ոլորտի նշված խնդիրների լուծումներից մեկը տեսնում է գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման և փոքր գյուղացիական տնտեսությունների միավորման եղանակով<sup>52</sup>:

Գյուղատնտեսության ոլորտի խնդիրներից առանձնացվում է նաև պատշաճ ապահովագրական համակարգի բացակայությունը: Մասնավորապես՝ Հայաստանի ագրարային ոլորտում, եթե բնական ռիսկերի կանխարգելման և հետևանքների մեղմացման առումով որոշակի քայլեր կատարվում են (ռոտման համակարգերի զարգացում, հակահեղեղային միջոցառումներ, ցրտադիմացկուն, երաշտադիմացկուն, հիվանդությունների և վնասատուների դեմ առավել կենսունակ սորտերի և ցեղերի շրջանացում, հակակարկտա-

<sup>47</sup> Մանասերյան Ն., Ագրարային հարցը երեկ և այսօր, Եր. «Տնտեսագետ», 2005, 266 էջ:

<sup>48</sup> Բայադյան Ա. Հ., ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, Եր: ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2013.- 144 էջ:

<sup>49</sup> Ավետիսյան Ս. և ուրիշներ, Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Եր.: «Տնտեսագետ», 2016, -114 էջ («Ամբերդ» մատենաշար), [https://asue.am/upload/files/amberd-economic-policy/S\\_Avetisyan\\_34.pdf](https://asue.am/upload/files/amberd-economic-policy/S_Avetisyan_34.pdf)

<sup>50</sup> Ոսկանյան Ա. Ե., Ոսկանյան Գ. Վ., Հայաստանում գյուղատնտեսության ապահովագրության արդի վիճակը և առկա խնդիրների լուծման ուղիները, «Ագրոգիտություն և տեխնոլոգիա», Հայաստանի ագգային ագրարային համալսարան, N 3 (75)/2021, էջ 254-258, <https://library.anau.am/images/stories/grqer/agro-tex/2021-3/voskanyan.pdf>

<sup>51</sup> Ավետիսյան Ս., ՀՀ գյուղատնտեսական հողերի օգտագործման վերլուծություն, փետրվար, 2019, <https://asue.am/amberd/publications/analysis-of-agricultural-land-use-in-the-ra>

<sup>52</sup> Ավետիսյան Ս., Գյուղատնտեսական կոոպերատիվները՝ որպես փրկօղակ, «Ամբերդ» տեղեկագիր, Երևան, ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, 2020/2 (3), էջ 70-76, <https://asue.am/upload/files/amberd/2020.2.pdf>

յին տեղակայանքների կիրառում և այլն), ապա գյուղատնտեսության ապահովագրության համակարգը դեռևս նոր է ձևավորվում: Իրականությունն այն է, որ ագրարային ոլորտի բարձր ռիսկայնությունը, համապատասխան նորմատիվային հիմքերի և մեթոդաբանության բացակայությունը արգելակում են այս կարևոր գործիքի կիրառումը: Իհարկե, ոչ առանց հիմքի, տիրապետող է այն կարծիքը, որ գյուղատնտեսության ոլորտը, հատկապես բուսաբուծության ճյուղը ապահովագրական ընկերությունների համար բիզնեսի առումով հետաքրքրություն չի ներկայացնում բնական գործոններից ծայրահեղ կախվածության և բարձր ռիսկայնության պատճառով: Այս կարծիքը տիրապետող է ոչ միայն Հայաստանում: Ագրոապահովագրության համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ նման հիմնախնդիր առկա է բազմաթիվ երկրներում<sup>53</sup>:

Պետական աջակցությամբ գյուղատնտեսության ապահովագրության առաջին տարվա արդյունքների վերլուծությանն են անդրադարձել Ա. Ե. Ոսկանյանը և Գ. Ոսկանյանը<sup>54</sup>: Բազմաթիվ հիմնախնդիրներ գոյություն ունեն նաև գյուղատնտեսության տեխնիկական սպասարկման, պարարտանյութերի և թունաքիմիկատների մատչելիության, արտադրանքի իրացման հարցերում<sup>55</sup>:

Գ. Ա. Մելքոնյանը «Գյուղատնտեսության զարգացման հիմնախնդիրները 2020-2021 թթ. ճգնաժամային շրջանում» հոդվածում, բազմակողմանիորեն վերլուծելով նշված տարիներին գյուղատնտեսության ոլորտի առկա հիմնախնդիրները, միաժամանակ, կարևորում է վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի դրական ազդեցությունը<sup>56</sup>:

Գյուղատնտեսության ոլորտի որոշ խնդիրներ են մատնանշվում նաև Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունում<sup>57</sup>: Նշված փաստաթղթում գյուղատնտեսության ոլորտի կարևոր մարտահրավերներից են համարվում անմշակ հողատարածքների (վարելահողերի ավելի քան մեկ երրորդը) և փոքր հողակտորների

<sup>53</sup> Ավետիսյան Ս. և ուրիշներ, Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Եր.: «Տնտեսագետ», 2016, էջեր 17, 66-71, («Ամբերդ» մատենաշար), [https://asue.am/upload/files/amberd-economic-policy/S.\\_Avetisyan\\_34.pdf](https://asue.am/upload/files/amberd-economic-policy/S._Avetisyan_34.pdf)

<sup>54</sup> Ոսկանյան Ա.Ե., Ոսկանյան Գ.Վ., Հայաստանում գյուղատնտեսության ապահովագրության արդի վիճակը և առկա խնդիրների լուծման ուղիները, «Ագրոգիտություն և տեխնոլոգիա», Հայաստանի ազգային ագրարային համալսարան, N 3 (75)/2021, էջ 254-258, <https://anau.am/scientific-journal/>

<sup>55</sup> Եղիազարյան Ա., Հայաստանի տնտեսության կառուցվածքային վերլուծությունը (հատվածային, զբաղվածության և եկամտային ասպեկտներ) «Նորավանք» ԳԿՀ «21-րդ դար», թիվ 3 (55), 2014., էջ 45-50, [http://www.noravank.am/upload/pdf/3.Ashot\\_Yeghiazaryan\\_21\\_DAR\\_03\\_2014.pdf](http://www.noravank.am/upload/pdf/3.Ashot_Yeghiazaryan_21_DAR_03_2014.pdf)

<sup>56</sup> Мелконян Г. А., Основные проблемы развития сельского хозяйства в кризисный период 2020-2021 гг., «Ագրոգիտություն և տեխնոլոգիա», Հայաստանի ազգային ագրարային համալսարան, N 1 (77)/2022, էջ 47-51, [https://anau.am/wp-content/uploads/2022/04/jornal\\_1-2022-2.pdf](https://anau.am/wp-content/uploads/2022/04/jornal_1-2022-2.pdf)

<sup>57</sup> Հայաստանի հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն, ՀՀ կառավարության 2019 թ. դեկտեմբերի 19-ի N1886-Լ որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137852>

տարածվածությունը, ներդրումների ցածր մակարդակը և տեխնիկական խոչընդոտները: Վերջիններս ներառում են մեքենայացման և ոռոգման արդիական համակարգերի ցածր մակարդակը, գյուղատնտեսական խորհրդատվության թերզարգացած համակարգը, ֆինանսների սահմանափակ հասանելիությունը (մասնավորապես՝ ապահովագրություն) և էկոհամակարգում մարդկային ռեսուրսի պակասը: Ի լրումն նշվածների, ռազմավարությունում նշվում են նաև այլ մարատահրավերներ և խնդիրներ, մասնավորապես՝ արտադրողականության և արդյունավետության ցածր մակարդակը, պարենային անվտանգության ապահովումը, սննդամթերքի անվտանգության ցածր մակարդակը, բնական աղետները և կլիմայական ռիսկերը, գյուղատնտեսության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործման անհրաժեշտությունը, գյուղատնտեսության ոլորտում ժամանակակից տեղեկատվական համակարգերի զարգացման խնդիրները, գյուղերի զարգացածության ցածր մակարդակը:

ՀՀ գյուղատնտեսության ոլորտին առնչվող գրականության ուսումնասիրության հիման վրա կարող ենք արձանագրել, որ առկա խնդիրները ընդհանուր գծերով հետևյալն են.


- գյուղատնտեսության ոլորտի ցածր արդյունավետությունը,
- գյուղատնտեսության ոլորտում աշխատանքի արտադրողականության ցածր մակարդակը,
- հողերի մասնատվածությունը և փոքր չափերի գյուղացիական տնտեսությունների գերակշռությունը, որոնք էլ համարվում են գյուղատնտեսության ցածր արդյունավետության հիմնական գործոնը,
- երկրի պարենային և սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացումը,
- ապահովագրական համակարգի գործարկման հետ կապված հարցերը:

Հետագա շարադրանքում՝ վիճակագրական ցուցանիշների վերլուծության համատեքստում, կանդրադառնանք նշված խնդիրներից որոշներին, մասնավորապես՝ ցածր արդյունավետությանը և արտադրողականությանը, ինչպես նաև պարենային անվտանգությանը: Գյուղատնտեսության ռազմավարությունը, ճյուղի արդյունավետության գնահատման տեսանկյունից, կարևորում է մշակաբույսերի բերքատվության, գյուղատնտեսական կենդանիների մթերատվության կամ գյուղատնտեսությունում մեկ զբաղվածի արտադրողականության ցուցանիշները<sup>58</sup>:

Լինելով ՀՀ տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը՝ գյուղատնտեսությունը, ձկնորսության և անտառային տնտեսության հետ միասին, 2010-

<sup>58</sup> Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն, ՀՀ կառավարության 2019 թ. դեկտեմբերի 19-ի N1886-Լ որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137852>

2021 թթ. ՀՆԱ-ի մեջ միջին հաշվով ունեցել է 15.7% տեսակարար կշիռ<sup>59</sup>: 2021 թ.-ի տարեվերջի դրությամբ գյուղատնտեսության, ձկնորսության և անտառային տնտեսության ճյուղի ավելացված արժեքը կազմել է 775.7 մլրդ դրամ՝ ապահովելով հանրապետության ՀՆԱ-ի 11.1%-ը: 2019 թ.-ին ոլորտն անկում է արձանագրել, և 2018 թ.-ի համեմատ համախառն արտադրանքը իրական արտահայտությամբ նվազել է 1,8%-ով: Ոլորտի ավելացած արժեքը կազմել է 757 158 մլրդ ՀՀ դրամ՝ 2018 թ.-ի 838 914 մլրդ ՀՀ դրամի համեմատ: 2020 թ.-ին մոտ 4%-ով նվազելուց հետո 2021 թ.-ին գյուղատնտեսության ոլորտի ավելացված արժեքը աճել է 12%-ով՝ կազմելով 775.75 մլն դրամ (գծապատկեր 2.1): Մինչդեռ մինչգնաժամային ժամանակահատվածում գյուղատնտեսության կշիռը ՀՆԱ-ում բավական մեծ է եղել՝ 2000-2007 թթ. կազմելով միջինում 21.6%:



#### Գծապատկեր 2.1


*Գյուղատնտեսություն, ձկնորսություն և անտառային տնտեսություն ճյուղի ավելացված արժեքի շարժընթացը<sup>60</sup>*

Մինչև 2009 թ. գյուղատնտեսությունը, թեկուզև տատանումներով, սակայն որոշակի չափով պայմանավորել է ՀՀ տնտեսական աճը, իսկ ճգնաժամից հետո գյուղատնտեսության, ձկնորսության և անտառատնտեսության նպաստումը տնտեսական աճին սկսել է նվազել, և այդ միտումը պահպանվում է մինչ օրս: Մասնավորապես՝ 2011-2015 թթ. տնտեսական աճին դրական նպաստումը միջինում կազմել է 1.8 տոկոսային կետ, մինչդեռ 2016 թ.-ից սկսած՝ այն ունեցել է բացասական նպաստում՝ 2016-2021 թթ. միջինում կազմելով 0.7 տոկոսային կետ (գծապատկեր 2.2):

<sup>59</sup> ՀՀ ՎԿ, Վիճակագրական տվյալների բազա, ՀՆԱ արտադրությունը, <https://www.armstat.am/am/?nid=202>

<sup>60</sup> ՀՀ ՎԿ, Վիճակագրական տվյալների բազա, ՀՆԱ արտադրությունը, <https://www.armstat.am/am/?nid=202>





## Գծապատկեր 2.2


Տարևադարձային առանձին ճյուղերի նպաստումը տնտեսական աճին<sup>61</sup>

Տարբեր տարիներին ճյուղի իրական աճի տեմպերի կտրուկ տատանումներն էլ հենց վկայում են գյուղատնտեսության ճյուղի հիմնական առանձնահատկությունների՝ ցածր արտադրողականության և բնական գործոններից բարձր կախվածության մասին: Չնայած գյուղատնտեսության ճյուղում զբաղվածության բարձր մակարդակին (2006-2008 թթ. զբաղվածների կշիռը գյուղատնտեսության ոլորտում միջինում կազմել է 45.4%, 2010-2015 թթ.՝ միջինում 36.8%, իսկ 2016-2021 թթ.՝ 26.1%<sup>62</sup>), իրական հատվածի այլ ճյուղերի համեմատ այն համարվում է ամենացածր արտադրողական ճյուղը:

Համաշխարհային բանկի վիճակագրական տվյալները վկայում են, որ ՀՀ գյուղատնտեսություն, ձկնորսություն և անտառային տնտեսություն ճյուղի կշիռը ՀՆԱ-ում դիտարկվող ժամանակահատվածում կրկնակի կամ եռակի մեծ է եղել միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների համապատասխան ցուցանիշից: Այս ցուցանիշով Հայաստանը դիտարկվող երկրներից ավելի մոտ է եղել ԵԱՏՄ անդամ Դրոգստանի ցուցանիշին՝ 14.3%: Մինչդեռ ՌԴ-ում այն կազմել է 3.5%, Բելառուսում՝ 7.3%, Ղազախստանում՝ 4.6%, Վրաստանում՝ 7.6%, Ադրբեջանում՝ 5.6% և Թուրքիայում՝ 7.0% (գծապատկեր 2.3):

<sup>61</sup> ՀՀ ՎԿ, Վիճակագրական տվյալների բազա, ՀՆԱ արտադրությունը, <https://www.armstat.am/am/?nid=202>

<sup>62</sup> ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011, էջ 57, <https://armstat.am/file/doc/99466628.pdf>, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2015, էջ 61-62, <https://armstat.am/file/doc/99493603.pdf>, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2019, էջ 79-80, <https://armstat.am/file/doc/99516743.pdf>, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2022, էջ 91-92, <https://armstat.am/file/doc/99533253.pdf>



### Գծապատկեր 2.3


Գյուղատնտեսություն, ձկնորսություն և անասնապահի տնտեսություն  
 ճյուղի ավելացված արժեքի կշիռը ՀՆԱ-ում, %<sup>63</sup>

Այժմ առավել մանրամասն ներկայացնենք ՀՀ գյուղատնտեսության ճյուղի զարգացման միտումները 2010-2021 թթ.: Գծապատկեր 2.4-ի տվյալներից երևում է, որ ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2010-2014 թթ. կայուն կերպով աճել է, այնուհետև՝ մինչև 2020 թ., հիմնականում նվազման միտում է ցուցաբերել:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2021 թ. կազմել է 933 մլրդ ՀՀ դրամ, որի 50.3%-ը (469.4 մլրդ դրամ) ձևավորվել է բուսաբուծական, 49.7%-ը (463.6 մլրդ դրամ)՝ անասնաբուծական արտադրանքից: Գյուղատնտեսության ճյուղի համախառն արտադրանքը 2017-2020 թթ. զգալի անկում է ունեցել: 2020 թ.-ին անկումը 2017 թ.-ի նկատմամբ կազմել է գրեթե 8.3%, իսկ 2021 թ. նախորդ տարվա նկատմամբ աճել է գրեթե 12%-ով: ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում գերակշիռ է բուսաբուծությունը՝ բացառությամբ 2018-2020 թթ.: Գյուղատնտեսության կառուցվածքում 2010-2020 թթ. բուսաբուծության կշիռը միջինում կազմել է 55.7%, իսկ անասնաբուծությանը՝ 44.3%: Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը 2021 թվականին հետևյալն է. բուսաբուծություն՝ 50.3%, անասնաբուծություն՝ 49.7%, 2010 թ. համապատասխանաբար՝ 61,7 և 38,3%-ի դիմաց:

2010-2014 թթ. բուսաբուծության ենթաճյուղի համախառն արտադրանքը անընդհատ աճի միտում է դրսևորել, սակայն 2015 թ.-ից սկսած՝ նվազել է: Իսկ անասնաբուծության ենթաճյուղը հիմնականում աճի միտում է ունեցել:

<sup>63</sup> The World Bank, Data, <https://data.worldbank.org/indicator/NV.AGR.TOTL.ZS>



#### Գծապատկեր 2.4

*Գյուղատնտեսության համախառն արտադրանքի, բուսաբուծության և անասնաբուծության շարժընթացը<sup>64</sup>*

2022 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին գյուղատնտեսության համախառն արտադրանքը նախորդ տարվա հունվար-սեպտեմբեր ամիսների նկատմամբ որոշակի նվազում է դրսևորել (0.7%)՝ պայմանավորված անասնաբուծության համախառն արտադրանքի 4,1%-ով կրճատմամբ: Ընդ որում, տարեսկզբից համախառն արտադրանքն աճել է. ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է երրորդ եռամսյակում: Ընդհանուր առմամբ, 2022 թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսներին բուսաբուծության համախառն արտադրանքն աճել է 1.8%-ով, իսկ անասնաբուծության համախառն արտադրանքը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ՝ նվազել 4.1%-ով<sup>65</sup>:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի անկման հետ միասին, նկատվում է նաև հավաքված բերքի քանակի նվազում: Գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքի անկումն ուղեկցվում է նաև դրանց ցանքատարածությունների նվազեցմամբ:

Վիճակագրական տվյալները վկայում են, որ 2010-2016 թթ. ՀՀ ցանքատարածությունների մակերեսն աճում է, որից հետո՝ կտրուկ նվազում: Ընդ որում, նույն միտումն են ցուցաբերել գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերը. ցանքատարածությունների աճին զուգընթաց, աճել է նաև հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի համախառն բերքը, այնուհետև՝ համապատասխանաբար նվազել:

<sup>64</sup> ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2015, էջ 290,

<https://armstat.am/file/doc/99493653.pdf>,


Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2019, էջ 318, <https://armstat.am/file/doc/99516793.pdf>,

Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2021, էջ 351, <https://www.armstat.am/file/doc/99526883.pdf>,

ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 23,

[https://armstat.am/file/article/sv\\_12\\_21a\\_122.pdf](https://armstat.am/file/article/sv_12_21a_122.pdf)

<sup>65</sup> ՀՀ ՎԿ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-սեպտեմբերին, էջ 22-23, [https://armstat.am/file/article/sv\\_09\\_22a\\_122.pdf](https://armstat.am/file/article/sv_09_22a_122.pdf)



### Գծապատկեր 2.5

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքը  
2010-2021 թթ., %<sup>66</sup>

Կարտոֆիլի ցանքատարածությունը 2021 թ. 2010 թ.-ի նկատմամբ կրճատվել է 29.2%-ով՝ կազմելով 20.1 հզ. հա կամ ընդհանուր ցանքատարածությունների 8.8%-ը: Բանջարեղենի ցանքատարածությունները և համախառն բերքը կրճատվել են համապատասխանաբար՝ 17% և 28.8%-ով: Նույն ժամանակահատվածում խաղողի այգիների տարածությունը կրճատվել է 5.2%-ով, իսկ համախառն բերքն ավելացել 6.4%-ով: Մինչդեռ պտղի և հատապտուղների տարածությունը 2021 թ.-ին 2010 թ.-ի նկատմամբ ավելացել է 18.6%-ով, իսկ համախառն բերքը՝ 151.4%-ով (հավելված 1):

2022 թ. հունվար-սեպտեմբերին գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերից միայն հացահատիկ և հատիկաբնդեղենային մշակաբույսերի աճ է գրանցվել (նախորդ տարվա նկատմամբ աճել է 59,7%-ով), իսկ մնացած մշակաբույսերի գծով համախառն բերքի նվազում է դիտվել: Սակայն, անհրաժեշտ է նշել, որ այդ նվազումը կարող է պայմանավորված լինել հաշվետու ժամանակաշրջանում տվյալ գյուղատնտեսական մշակաբույսերի աճի ու զարգացման (վեգետացիայի տվյալ փուլի) դանդաղեցմամբ նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ<sup>67</sup>:

Գյուղատնտեսության զարգացման մակարդակը բնութագրող կարևոր ցուցանիշ է վարելահողերի օգտագործումը: Տվյալ դեպքում նկատի ունենք

<sup>66</sup> ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2015, էջ 290,

<https://armstat.am/file/doc/99493653.pdf>,

Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2019, էջ 318, <https://armstat.am/file/doc/99516793.pdf>,

Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2021, էջ 351, <https://www.armstat.am/file/doc/99526883.pdf>,

ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 23,

[https://armstat.am/file/article/sv\\_12\\_21a\\_122.pdf](https://armstat.am/file/article/sv_12_21a_122.pdf)

<sup>67</sup> ՀՀ ՎԿ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, 2022 թվականի հունվար-սեպտեմբեր, էջ 23, [https://armstat.am/file/article/sv\\_09\\_22a\\_122.pdf](https://armstat.am/file/article/sv_09_22a_122.pdf)

սույս վարելահողերի նպատակային օգտագործումը, այսինքն՝ զբաղեցումը գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերով (աղյուսակ 2.1): Իսկ ընդհանուր առմամբ, վարելահողերի օգտագործման տնտեսական արդյունավետությունը որոշվում է մի շարք կարևոր ցուցանիշներով, ինչպիսիք են միավոր տարածության հաշվով համախառն և ապրանքային արտադրանքը, զուտ եկամուտը, հիմնական մշակաբույսերի բերքատվությունը և այլն:

## Աղյուսակ 2.1

ՀՀ վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը, 2010-2021 թթ.<sup>68</sup>

Տարիներ	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Վարելահողեր, հազ. հա	448.5	449.2	448.4	448.2	447.0	446.7	446.4	446.0	445.6	444.0	444.0	444.0
Ցանքատարածություններ, հազ. հա	283.6	286.7	304.2	318.1	324.2	337.5	353.4	294.5	242.3	227.9	222.7	227.2
Վարելահողերի օգտագործման մակարդակ, %	63.2	63.8	67.8	71.0	72.5	75.6	79.2	66.0	54.4	51.3	50.1	51.2

Աղյուսակ 2.1-ի տվյալների հիման վրա կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ 2010-2021 թթ. միջին հաշվով ցանքի տակ է դրվել առկա վարելահողերի սույս 63.9%-ը (ընդամենը ցանքեր՝ 3427.3 հազ. հա/ ընդամենը վարելահողեր՝ 5360 հազ. հա x 100%): Հայաստանի նման սակավահող հանրապետության համար սա չափազանց ցածր ցուցանիշ է, որը բնավ չի համապատասխանում բնակչության պարենային ինքնաբավության պահանջներին:

Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում, բացառությամբ մրգի և խաղողի, մյուս մշակաբույսերի բերքատվությունը նվազել է: Իհարկե, 2013-2016 թթ. կայուն բարձր բերքատվության ցուցանիշների հիմքը գյուղատնտեսության նախարարություն-մարզպետարաններ-համայնքապետարաններ «համագործակցությամբ» ցանքատարածության ու բերքատվության հավելագրումների արդյունք է, որի դիմաց համայնքներին սուբսիդավորված սերմերի, պարարտանյութերի և դիզվառնիքի լրացուցիչ չափաքանակ էր տրամադրվում: Սա էլ, իր հերթին, հանգեցրել է ցուցանիշների շարժընթացի վայրիվերումների: Մյուս պատճառը կարող է կապված լինել 2017 թ. սեպտեմբերին ներկայացված ճշգրտված տվյալների հետ: Իհարկե, տվյալների ճշգրտումից հետո ենթադրվում էր, որ ականատես կլինենք աճի, սակայն 2021 թ. վերջին և 2022 թ.-ին դեռ նոր տեսնում ենք աճի դրսևորումները<sup>69</sup>:

<sup>68</sup> Աղյուսակը կազմել են հեղինակները՝ Հայաստանի վիճակագրական տարեգրքի 2010-2020 թթ. և ՀՀ ՎԿ «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը» հրապարակման համապատասխան տարիների տվյալների հիման վրա:

<sup>69</sup> ՀՀ ՎԿ, Հայաստանի սոցիալ տնտեսական վիճակը 2017 թ. հունվար-դեկտեմբերին, [https://armstat.am/file/article/sv\\_12\\_17a\\_122.pdf](https://armstat.am/file/article/sv_12_17a_122.pdf)

Գյուղատնտեսական մշակաբույսերի քերքառվությունը 2010-2021 թթ.,  
ցնականներ՝ 1 հա-ից<sup>70</sup>

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Հացահատիկա- յին և հատիկա- լնդեղենային մշակաբույսեր	20.7	27.9	26.5	30.8	31.8	31.3	30.7	19.8	26.1	16.9	20.5	12.9
Կարտոֆիլ	170.1	194.3	206.7	214.3	231.6	217.8	209.8	214.9	187.3	199.2	212.8	179.3
Բանջարեղեն	294.2	306.7	325.0	333.7	350.5	334.0	301.8	286.3	258.6	265.0	280.8	271.8
Բոստանային մշակաբույսեր	296.0	313.8	399.9	388.5	421.4	423.4	325.1	316.8	276.3	300.6	317.1	291.6
Պտուղ և հա- տապտուղ	39.2	73.5	97.0	95.0	80.8	103.0	66.1	93.5	87.7	76.2	71.4	82.5
Խաղող	151.5	158.0	151.3	149.8	157.7	188.2	110.0	141.4	120.1	146.1	189.3	157.9

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների մար-  
զային վիճակագրությունը վկայում է, որ հացահատիկային և հատիկալնդե-  
ղենային մշակաբույսերի ցանքատարածություններն ավելի շատ են Շիրակի,  
Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում: Կարտոֆիլի ցանքատարածու-  
թյուններով առաջատար են Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերը: Ինչ  
վերաբերում է բանջարանոցային և բոստանային մշակաբույսերի ցանքատա-  
րածություններին, ապա դրանք հիմնականում կենտրոնացած են Արմավիրի  
մարզում, իսկ պտղի և հատապտղի, ինչպես նաև խաղողի տնկարկները տե-  
ղաբաշխված են Արմավիրի, Արարատի և Արագածոտնի մարզերում (հավել-  
ված 2):

Ինչ վերաբերում է համախառն բերքի մարզային բաշխվածությանը,  
ապա ցանքատարածություններին համապատասխան հացահատիկային և  
հատիկալնդեղենային մշակաբույսերի համախառն բերքի գերակշիռ մասը  
2018-2021 թթ. արտադրվել է Շիրակի մարզում: Սակայն, անհրաժեշտ է նշել,  
որ 2019 թ.-ին Շիրակի մարզում հացահատիկային և հատիկալնդեղենային  
մշակաբույսերի համախառն բերքը նախորդ տարվա նկատմամբ կտրուկ  
նվազել է՝ 59.3%-ով, չնայած նրան, որ ցանքատարածությունները չեն կրճատ-  
վել: Մինչդեռ կարտոֆիլի համախառն բերքով առաջատար Գեղարքունիքի  
մարզում կարտոֆիլի համախառն բերքը 2018-2020 թթ. աճել է, իսկ ցանքա-

<sup>70</sup> ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2015, էջ 293, 300,

<https://armstat.am/file/doc/99493653.pdf>,

Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2019, էջ 320, 328, <https://armstat.am/file/doc/99516793.pdf>,

Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2021, էջ 353, 362,

<https://www.armstat.am/file/doc/99526883.pdf>,

ՀՀ ՎԿ, Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկնե-  
րի տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2021 թվականին, (վիճակա-  
գրական տեղեկագիր), <https://armstat.am/am/?nid=80&id=2467>

տարածություններն անընդհատ կրճատվել են: Բանջարանոցային և բոստանային մշակաբույսերի, պտղի և հատապտղի, ինչպես նաև խաղողի համախառն արտադրանքի համեմատաբար մեծ ծավալներով աչքի են ընկնում Արմավիրի և Արարատի մարզերը (հավելված 3):

Դիտարկված երկու կարևոր ցուցանիշներին զուգահեռ, կարևոր է բացահայտել նաև բերքատվության ցուցանիշը տարբեր մարզերում (հավելված 4): Չնայած նրան, որ հացահատիկային և հատիկալնդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունների և համախառն բերքի ցուցանիշներով առաջատարը Շիրակի մարզն էր, սակայն արդյունավետությունը բնութագրող բերքատվության ցուցանիշով առաջատարը Արարատի և Արագածոտնի մարզերն են: Նույն պատկերն է դիտվում նաև կարտոֆիլի դեպքում: Բանջարանոցային և բոստանային մշակաբույսերի, պտղի և հատապտղի, խաղողի տնկարկների բերքատվության ցուցանիշով, ինչպես նաև նախորդ երկու ցուցանիշներով առաջատարները Արարատի, Արմավիրի և Արագածոտնի մարզերն են:

Գյուղատնտեսության մյուս կարևոր ենթաճյուղը՝ անասնաբուծությունը, նույնպես ուսումնասիրվող ժամանակահատվածում որոշակի զարգացում է ունեցել: Այսպես՝ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 2010-2016 թթ. անընդհատ աճել է և 2016 թ. 2010 թ. նկատմամբ ավելացել 22.9%-ով: Ընդ որում, կովերի գլխաքանակը այդ նույն ժամանակահատվածում ավելացել է 16.3%-ով, ոչխարներինը և այծերինը՝ 52.2%-ով, խոզերինը՝ 55.2%-ով, ձիերինը՝ 5.6%-ով: Թռչունների գլխաքանակը, բացառությամբ 2016 և 2017 թվականների, մյուս տարիներին աճել է:

2016 թ.-ից հետո գլխաքանակի անկում է նկատվում: Այսպես՝ 2021 թ.-ին 2016 թ.-ի համեմատ կովերի գլխաքանակը նվազել է 16.6%-ով, մանր եղջերավորներինը (ոչխարների և այծերի)՝ 7.7%-ով (աղյուսակ 2.3):

### Աղյուսակ 2.3

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը 2010-2021 թթ., հազ. գլուխ<sup>71</sup>

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Խոշոր եղջերավոր	570.6	571.4	599.2	661	677.6	688.6	701.5	655.8	590.6	571.9	579.3	613.4
այդ թվում՝ կովեր	273.9	272.6	283.3	303.3	309.6	313.9	318.6	296	266.8	254	251.7	265.8
Ոչխարներ և այծեր	511	532.3	590.2	674.7	717.6	745.8	778.1	727.1	660.1	638.3	662.5	717.8
Խոզեր	112.6	114.8	108.1	145	139.8	142.4	174.8	175.5	166.8	197.9	223.3	200.2
Ձիեր	10.8	10.1	9.9	10.8	11.7	11.4	11.4	10.6	10	10.7	11.4	13.1
Թռչուններ	4134.6	3642.5	4023.5	4050	4101.2	4145.5	3942.8	3814.2	4406.4	4152.1	4396.3	4203.8

<sup>71</sup> ՀՀ ՎԿ, Վիճակագրական տվյալների բազա,

[https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank\\_6%20Agriculture,%20forestry%20and%20fishing/AF-1-2020.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb](https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank_6%20Agriculture,%20forestry%20and%20fishing/AF-1-2020.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb)

Կենդանիների գլխաքանակի նվազման հետ միասին, նվազել է նաև կաթի և բրդի արտադրությունը, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների և թռչունների իրացումը: Աղյուսակ 2.4-ում ներկայացված են ՀՀ անասնաբուծական ապրանքների արտադրության 2010-2021 թթ. վիճակագրական ցուցանիշները, համաձայն որոնց՝ կաթի արտադրությունը մինչև 2017 թ. աճել է, որը կարող ենք պայմանավորել կովերի գլխաքանակի աճով, ինչպես նաև կենդանիների կաթնատվության ավելացմամբ:

Անասնաբուծության արտադրանքը 2010-2021 թթ.<sup>72</sup>

Աղյուսակ 2.4

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Միս (սպանդային քաշով), հազ. տ.	69.5	71.7	73.9	83.4	93.1	100.4	106.1	109	108.2	107.3	107.7	110.6
Կաթ, հազ. տ.	600.9	601.5	618.2	657	700.4	728.6	754.2	758.2	697.7	667.9	654.3	670.6
Ձու, մլն հատ	702.2	633.6	658.1	615.2	641.8	659.8	694.6	683	726.8	720.6	754.6	701.9
Բուրդ (ֆիզիկական քաշով), տ.	1188	1230	1280	1426	1477	1571	1641	1385	1032	981	1048	1083

2018-2021 թթ. ընթացքում կաթի արտադրության ծավալներով առաջատար են Գեղարքունիքի, Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերը: Նույն ժամանակահատվածում սպանդի համար իրացված անասունի և թռչնի արտադրության ծավալներով առաջատար են Գեղարքունիքի և Շիրակի մարզերը: Իսկ ինչ վերաբերում է ձվի արտադրության ծավալներին, ապա այստեղ առաջատար են Արմավիրի և Կոտայքի մարզերը:

Գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ցուցանիշներում ուսումնասիրվող ժամանակաշրջանում էական փոփոխություններ չեն նկատվում: Մեկ կովի միջին կաթնատվությունը 2010-2021 թթ. կազմել է 2305.2 կգ, մեկ ոչխարի միջին բրդատվությունը՝ 2.2 կգ, միջին տարեկան ձվատվությունը՝ 233.2 հատ:

<sup>72</sup> ՀՀ ՎԿ, Վիճակագրական տվյալների բազա,  
[https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank\\_6%20Agriculture,%20forestry%20and%20fishing/AF-3-2021.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb](https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank_6%20Agriculture,%20forestry%20and%20fishing/AF-3-2021.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb)



Աղյուսակ 2.5

Ասասնաբուժական հիմնական արտադրանքի արտադրությունը  
ըստ մարզերի<sup>73</sup>

	Իրացվել է գյուղատնտեսական կենդանի և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով), հազ. տոննա				Կաթ, հազ. տոննա				Չու, մլն. հապ			
	2018	2019	2020	2021	2018	2019	2020	2021	2018	2019	2020	2021
ք. Երևան	5.3	4.4	4.6	4.5	2.7	2.4	1.8	1.9	8.1	7.4	8.6	8.3
Արագածոտն	19.1	19.9	20.4	19.9	81.7	80.9	76.3	78.8	83.9	76.4	81.0	73.4
Արարատ	13.4	13.4	13.3	13.9	41.1	40.0	37.5	39.1	64.3	59.5	64.3	64.1
Արմավիր	20.6	21.6	20.7	20.8	46.3	39.6	39.7	40.9	158.9	175.5	178.6	159.9
Գեղարքունիք	29.8	28.9	27.8	28.8	125.6	122.4	114.4	117.7	64.1	55.7	58.5	58.0
Լոռի	20.8	20.3	20.9	23.7	84.9	82.1	83.4	85.9	51.0	47.9	44.3	45.5
Կոտայք	19.8	20.5	22.0	20.5	69.1	67.2	67.6	68.3	125.1	135.9	171.6	156.8
Շիրակ	24.9	24.7	24.7	25.2	110.7	101.1	100.2	102.7	45.5	45.6	42.8	38.4
Սյունիք	20.4	19.0	18.9	19.1	71.0	68.9	69.0	68.5	44.8	40.1	37.7	34.4
Վայոց ձոր	5.8	5.8	5.9	6.2	24.5	23.9	23.7	24.7	30.3	28.4	20.9	19.7
Տավուշ	10.4	10.2	10.4	10.5	40.1	39.4	40.7	42.1	50.8	48.2	46.3	43.4

Գյուղատնտեսության ոլորտի արդյունավետությունը բնութագրող կառուցվածից է մեկ զբաղվածի արտադրողականությունը: Ինչպես տեսնում ենք զծապատկեր 2.6-ից, ՀՀ գյուղատնտեսության ոլորտը դիտարկվող ժամանակահատվածում ամենացածր արտադրողական ճյուղն է: Մինչդեռ ծառայությունների ոլորտի արտադրողականությունը գրեթե 2 անգամ գերազանցում է գյուղատնտեսության ճյուղի ցուցանիշը: Դեռ ավելին՝ արդյունաբերության արտադրողականությունը՝ 2-3 անգամ, իսկ 2020 թ.-ին՝ շուրջ 5.5 անգամ բարձր է գյուղատնտեսության արտադրողականությունից: 2020 թ. արդյունաբերության ճյուղի արտադրողականության կտրուկ աճը պայմանավորված է ստեղծված ավելացված արժեքի մեծ աճով, ինչն էլ, իր հերթին, պայմանավորված է մետաղական հանքաքարի արդյունահանման աճով:

Ի դեպ, 2021 թ.-ին 2010 թ.-ի նկատմամբ գյուղատնտեսությունում 1 զբաղվածի տարեկան արտադրողականությունն աճել է 2.5 անգամ՝ կազմելով 3334.8 մլն դրամ: Ճյուղի արտադրողականության աճը պայմանավորված է ավելացված արժեքի կտրուկ աճով (1.3 անգամ), որն էլ, իր հերթին, պայմանավորված է բուսաբուծության ենթաճյուղում ստեղծված համախառն արտադրանքի աճով: Արտադրողականության աճը, մյուս կողմից, պայմանավորված է ճյուղում զբաղվածների թվի նվազմամբ՝ շուրջ 2 անգամ:


<sup>73</sup> ՀՀ ՎԿ, Տարածքային վիճակագրություն, <https://armstat.am/am/?nid=130>,

ՀՀ ՎԿ, Հայաստանի հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 24, [https://armstat.am/file/article/sv\\_12\\_2la\\_122.pdf](https://armstat.am/file/article/sv_12_2la_122.pdf)

Աղյուսակ 2.6

Գյուղատնտեսական կենդանիների և թռչնի մթերատվությունը 2010-2021 թթ.<sup>74</sup>

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Մեկ կովի միջին կաթնատվությունը, կգ	2035	2035	2036	2054	2102	2144	2192	2260	2310	2365	2398	2435
Մեկ ոչխարի միջին տարեկան բրդատվությունը, կգ	2.3	2.3	2.2	2.2	2.2	2.2	2.2	2.2	2.2	2.2	2.2	2.2
Ածան հավերի միջին տարեկան ձվատվությունը, հատ	230	227	181	226	257	241	254	254	258	258	258	2262



Գծապատկեր 2.6


Աշխատանքի արտադրողականություն (1 զբաղվածի արեղծած ավելացված արժեքը) ըստ տնտեսության ճյուղերի, մլն դրամ<sup>75</sup>

Համաշխարհային բանկի համապատասխան վիճակագրական տվյալները վկայում են, որ 1 զբաղվածի արտադրողականության ՀՀ ցուցանիշը դիտարկվող ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ, համապատասխանել է միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների համապատասխան ցուցանիշին, կրկնակի անգամ գերազանցել է Վրաստանի, Ադրբեջանի և

<sup>74</sup> ՀՀ Վ.Կ. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2015, էջ 305, <https://armstat.am/file/doc/99493653.pdf>, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, էջ 332, <https://armstat.am/file/doc/99516793.pdf>, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2021, էջ 366, <https://www.armstat.am/file/doc/99526883.pdf>, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2022, էջ 366, <https://armstat.am/file/doc/99533308.pdf>

<sup>75</sup> ՀՀ Վ.Կ. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2015, էջ 61-62, <https://armstat.am/file/doc/99493603.pdf>, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, էջ 65-66, <https://armstat.am/file/doc/99510748.pdf>, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2021, էջ 85-86, <https://armstat.am/file/doc/99528083.pdf>, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2022, էջ 91-92, <https://armstat.am/file/doc/99533253.pdf>, ՀՀ Վ.Կ. Վիճակագրական տվյալների բազա, ՀՆԱ արտադրությունը, <https://www.armstat.am/am/?nid=202>, հաշվարկն իրականացրել են հեղինակները:

Ղրղզստանի համապատասխան ցուցանիշը, սակայն կրկնակի կամ եռակի անգամ զիջել ՌԴ-ի և Թուրքիայի ցուցանիշին:




#### Գծապատկեր 2.7

Գյուղատնտեսություն, ձկնորսություն և անտառային տնտեսություն  
ճյուղում 1 զբաղվածի սրեղծած ավելացված արժեքը, ԱՄՆ դոլար<sup>76</sup>

Ի դեպ, ՀՀ զբաղվածության կառուցվածքում ծառայությունների ոլորտից հետո գերակշռում են գյուղատնտեսության ոլորտում զբաղվածները: Սակայն, այս ոլորտում զբաղվածների մեծ կշիռը, հետևաբար և աշխատանքի ցածր արտադրողականությունը վկայում են գյուղատնտեսության ոլորտում ոչ բավարար չափով ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրման մասին:

Ինչպես տնտեսության կառուցվածքն է ի հաշիվ գյուղատնտեսության և շինարարության ճյուղերի անցում կատարել դեպի ծառայությունների ոլորտ, նույնն էլ տեղի է ունեցել զբաղվածության կառուցվածքում: Զբաղվածության կառուցվածքում գյուղատնտեսությունում զբաղվածների տեսակարար կշիռը 2010-2021 թթ. միջինում կազմել է 31.5%, արդյունաբերությունում զբաղվածներինը՝ 12.2%, շինարարությունում զբաղվածներինը՝ 6.4%, ծառայություններում զբաղվածներինը՝ 50%:

<sup>76</sup> The World Bank, Data, <https://data.worldbank.org/indicator/NV.AGR.EMPL.KD>



### Գծապատկեր 2.8

Ջրաղվածներն ըստ տնտեսական գործունեության տեսակների, % <sup>77</sup>

Գյուղատնտեսության ոլորտը պատմականորեն առանձնացել է ոչ ֆորմալ զբաղվածության բարձր մակարդակով, մասնավորապես՝ եթե 2021 թվականին ՀՀ-ում ոչ ֆորմալ զբաղվածության ընդհանուր մակարդակը կազմել է 35.2%, ապա գյուղատնտեսության ոլորտում այն կազմել է 95.6%, մինչդեռ ոչ գյուղատնտեսական ոլորտում ցուցանիշը 18.1% է<sup>78</sup>։ Ոչ ֆորմալ զբաղվածության բարձր մակարդակը վկայում է, որ ՀՀ-ում ոլորտը ներկայացված է չգրանցված կազմակերպություններում, արտադրական կոդերատիվներում կամ տնային տնտեսություններում աշխատողների (վարձու կամ անվճար), ինքնազբաղվածների տեսքով։ Այս պարագայում տրամաբանական է, որ ՀՀ գյուղատնտեսության ոլորտում նորարարության տարածման շրջանակները


<sup>77</sup> ՀՀ ՎԿ, Վիճակագրական տվյալների բազա, <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb>

<sup>78</sup> ՀՀ ՎԿ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզը թվերով, 2021, էջ 50, <https://armstat.am/file/doc/99527413.pdf>,  
Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանը թվերով, 2021, էջ 55, <https://armstat.am/am/?nid=405>,  
Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզը թվերով, 2021, էջ 58, <https://armstat.am/file/doc/99527788.pdf>,  
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզը թվերով, 2021, էջ 57, <https://armstat.am/file/doc/99527763.pdf>,  
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզը թվերով, 2021, էջ 57, <https://armstat.am/file/doc/99527668.pdf>,  
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզը թվերով, 2021, էջ 61, <https://armstat.am/file/doc/99527793.pdf>,  
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզը թվերով, 2021, էջ 59, <https://armstat.am/file/doc/99527618.pdf>,  
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզը թվերով, 2021, էջ 62, <https://armstat.am/file/doc/99527583.pdf>,  
Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզը թվերով, 2021, էջ 64, <https://armstat.am/file/doc/99527423.pdf>,  
Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզը թվերով, 2021, էջ 51, <https://armstat.am/file/doc/99527783.pdf>,  
Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզը թվերով, 2021, էջ 56, <https://armstat.am/file/doc/99527768.pdf>։

չափազանց սահմանափակ են՝ ոլորտում զբաղվածների ճնշող մեծամասնության արտադրանքը նախատեսված է բացառապես վերջնական սպառման համար, արտադրանքը շուկա չի մտնում և չկա մրցակցություն: Հետևաբար՝ նորարարությունն ունի տարածման նեղ շրջանակ, որը սահմանափակվում է գլխավորապես բիզնես ոլորտով: Այդուհանդերձ, պետք է արձանագրենք, որ առևտրային կազմակերպությունների գյուղատնտեսական նշանակության արտադրանքի մասնաբաժինն ընդհանուրի նկատմամբ գրեթե կրկնապատկվել է: Եթե 2016 թվականին մասնաբաժինը կազմել է 3.2 տոկոս, ապա արդեն 2021 թվականին այն հասել է մինչև 5.8 տոկոսի: Սա պայմանավորված է նրանով, որ, 2017 թվականից սկսած, բնակչության տնտեսությունների արտադրության ծավալները շարունակաբար նվազել են, իսկ առևտրայիններինը՝ կտրուկ աճել:

2010-2021 թթ. գյուղացիական ընտանեկան տնտեսությունների բաժինը միջինում կազմել է 96%, իսկ 4%-ը բաժին է ընկել գյուղատնտեսական առևտրային կազմակերպություններին: Ընդ որում, առևտրային կազմակերպությունների կողմից արտադրվող արտադրանքում գերակշիռ մասը բաժին է ընկնում անասնաբուծությանը:

Առևտրային կազմակերպությունների բուսաբուծության համախառն արտադրանքը մինչև 2019 թ.-ը կայուն աճել է, սակայն 2020 թ.-ին համընդհանուր անկման խորապատկերում՝ նվազել 19.4%-ով: Առևտրային կազմակերպությունների բուսաբուծության համախառն արտադրանքը 2010-2017 թթ. միջինում կազմել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի 0.5%-ը, իսկ 2018-2020 թթ. կշիռն աճել է՝ կազմելով 2.8%: Սակայն, 2021 թ.-ին նկատվում է կտրուկ աճ՝ շուրջ 17.4%-ով:



#### Գծապատկեր 2.9

Գյուղատնտեսության արտադրանքի կառուցվածքն ըստ տնտեսական կազմակերպությունների, %<sup>79</sup>

<sup>79</sup> ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2015, էջ 291,  
<https://armstat.am/file/doc/99493653.pdf>

Ինչ վերաբերում է անասնաբուծությանը, ապա այստեղ 2017 թ.-ին գրանցվել է ամենամեծ աճը՝ 12.1%՝ նախորդ տարվա նկատմամբ, սակայն 2019-2020 թթ. նորից նվազել է: Մինչդեռ առևտրային կազմակերպությունների անասնաբուծության համախառն արտադրանքը 2010-2017 թթ. միջինում կազմել է 24.7%, իսկ 2018-2021 թթ.՝ 38.8%:

Ինչ վերաբերում է արտադրողականությանը, ապա բնակչության տնտեսությունները զգալիորեն զիջում են առևտրային կազմակերպություններին: Հատկանշական է, որ երկու տնտեսությունների արտադրողականությունների միջև լազը վերջին տարիներին մեծանում է, մասնավորապես՝ եթե 2016 թվականին դրանց հարաբերությունը կազմել է 3.68, ապա արդեն 2021 թ. այն հասել է 4.2-ի: Սա պայմանավորված է նրանով, որ բնակչության տնտեսություններում ցուցանիշը գրեթե նույն է մնացել, այնինչ առևտրային կազմակերպություններում՝ կրկնապատկվել:

Սա հստակ ազդանշան է, որ բնակչության տնտեսությունների շրջանակում անհրաժեշտ է իրականացնել նորարարության տարածման ժողովրդավարացում՝ այն հասանելի դարձնելով հնարավորինս շատ սուբյեկտների: Լուծումներից մեկն օրինակ՝ ՀՀ մարզերում, գյուղատնտեսական համայնքներում ոլորտում նորարարական տեխնոլոգիաների տարածմամբ զբաղվող նորարարական հաբերի հիմնադրումն է: Դրանց գերնպատակը պետք է լինի առաջին հերթին երիտասարդների շրջանում հետաքրքրվածության մակարդակի բարձրացումը, ինչպես նաև ավանդական ոչ արդյունավետ մեթոդների փախարհումը նորով: Իսկ որպես թիրախ՝ պետք է ընտրվեն գյուղատնտեսական ոլորտում ոչ ֆորմալ զբաղվածության բարձր մակարդակ ունեցող մարզերն ու համայնքները:

*Գյուղատնտեսության համախառն արտադրանքն ու արտադրողականությունն ըստ տնտեսությունների<sup>80</sup>*

Աղյուսակ 2.7

	Բնակչության տնտեսություններ					
	2016	2017	2018	2019	2020	2021
Ընթացիկ գներով, մլրդ դրամ	850.8	876.5	847.7	800.6	783.8	880.1
1 000 հա	350.3	291.9	239.1	224.8	219.5	223.9
մլրդ դրամ/1 000 հա	2.43	3.00	3.55	3.56	3.57	3.9
	Առևտրային կազմակերպություններ					
	2016	2017	2018	2019	2020	2021
Ընթացիկ գներով, մլրդ դրամ	27.7	32.1	45.2	52.7	49.5	54.3
1 000 հա	3.1	2.6	3.2	3.1	3.2	3.3
մլրդ դրամ/1 000 հա	8.94	12.35	14.13	17.00	15.47	16.5

Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2019, էջ 318, <https://armstat.am/file/doc/99516793.pdf>

Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2021, էջ 352, <https://www.armstat.am/file/doc/99526883.pdf>

Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2022, էջ 352, <https://armstat.am/file/doc/99533308.pdf>

<sup>80</sup> ՀՀ Վ.Կ., Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2021, էջ 350-353,

<https://armstat.am/file/doc/99526883.pdf>

Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2022, էջ 352-353, <https://armstat.am/file/doc/99533308.pdf>

Նմանօրինակ նպատակով է, որ դեռևս 2004 թվականից գործում է Ագրո-բիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնը՝ ICARE-ը: Այն իրականացնում է տարատեսակ վարպետաց դասեր, նորարարական մրցույթներ և, որ ամենակարևորն է, հաստատությունը հայկական նորարարական գյուղատնտեսական տեխնոլոգիաների (անգլ.՝ AgroTech) ոլորտի հիմնաքարային ներկայացուցիչներից է: Սակայն, այն իր հիմնական գործունեությունն իրականացնում է Երևանում, որտեղ գյուղատնտեսական ոլորտում ոչ ֆորմալ զբաղվածությունն ՀՀ այլ մարզերի նկատմամբ անհամեմատ փոքր է:

Ճյուղային խնդիրներից է նաև այն, որ ՀՀ գյուղօլորտը պակաս ունի ոչ միայն նորարարության, այլև երիտասարդների ներգրավման: Ասվածի վառ օրինակը համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ոլորտին առաջարկվող կրթական ծրագրերում ընդունված ուսանողների քանակն է: Այն տարիներ շարունակ ոչ մեծ թիվ է կազմել, ավելին՝ վերջին չորս տարիների ընթացքում ուսանողների և՛ թվաքանակը, և՛ մասնաբաժինը ուսանողների ընդհանուր թվաքանակի մեջ մոտ երեք անգամ նվազել է<sup>81</sup>:

Գյուղատնտեսության ոլորտը ՀՀ պարենային անվտանգության հիմնական երաշխիքն է: Երկրի պարենային անվտանգության գնահատման համար առավել կարևոր ցուցանիշ է պարենամթերքի ինքնաբավության մակարդակը: Աղյուսակ 2.8-ի տվյալների համաձայն՝ պարենային ինքնաբավության համեմատաբար բարձր մակարդակ է գրանցվել հետևյալ ապրանքների գծով. կարտոֆիլ՝ միջինում 103.8%, բանջարեղեն՝ 103.8%, միրգ՝ 107.0%, ձու՝ 99.4%, կաթ՝ 86.4%, տավարի միս՝ 90.1%, ոչխարի և այծի միս՝ 116.4%, ձուկ՝ 123.2%, խաղող՝ 105.9%: Իսկ մնացած ապրանքների գծով ինքնաբավության աստիճանը ցածր է, ինչը բացատրվում է առկա ռեսուրսների սղությամբ՝ հանգեցնելով տվյալ ապրանքների մեծ ծավալով ներմուծմանը:

Միջազգային փորձում երկրների պարենային անվտանգության դիրքը գնահատվում է Պարենային անվտանգության գլոբալ ինդեքսով (լույս է տեսնում The Economist պարբերականում), որը հրապարակվում է յուրաքանչյուր տարի և բնութագրում երկրների պարենամթերքի մատչելիությունը, հասանելիությունը, որակը և անվտանգությունը<sup>82</sup>: Նշված ինդեքսում ՀՀ-ն ներառված չէ, սակայն ընդգրկված են ԵԱՏՄ անդամ երկրները, Ադրբեջանը և Թուրքիան: Անհրաժեշտ է նշել, որ թվարկված երկրները, ըստ վարկանշավորման, բավական բարձր դիրքերում են գտնվում:

<sup>81</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Կրթություն և մշակույթ, էջ 168, 2021:

<sup>82</sup> <https://foodsecurityindex.eiu.com/>

*Առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների ինքնաբավության  
ապրիմանը 2017-2021 թթ., %<sup>83</sup>*

	2017	2018	2019	2020	2021
Ցորեն	33.2	31.5	25.9	24.4	23.2
Կարտոֆիլ	102.6	102.6	101.1	101.1	111.7
Բանջարեղեն և բոստան	102.5	104.7	102.4	103.9	105.6
Միրգ և հատապտուղ	109.7	108.9	104.0	98.2	114.4
Հատիկաբլիթային մշակաբույսեր	49.7	38.6	38.2	37.3	37.3
Բուսական յուղ	4.3	2.2	1.5	0.9	0.6
Շաքար	65.2	68.6	73.0	38.0	33.9
Ձու	98.2	99.5	100.0	100.3	98.8
Կաթ	91.2	86.8	84.3	82.0	87.7
Տավարի միս	91.5	89.2	90.4	87.3	92.2
Խոզի միս	58.0	53.3	55.5	45.1	53.2
Ոչխարի և այծի միս	138.9	128.6	113.8	100.4	100.4
Թռչնի միս	22.5	26.6	21.7	23.9	26.7
Ձուկ	101.8	109.0	113.1	148.4	143.7
Խաղող	106.4	104.8	103.6	108.0	106.7

Ըստ 2021 թ.-ի վարկանշի՝ Ռուսաստանը 113 երկրների շարքում 23-րդն է, Բելառուսը՝ 36-րդը, Ղազախստանը՝ 41-րդը, Ադրբեյջանը՝ 56-րդը, Թուրքիան՝ 48-րդը:

Մատնանշելով ՀՀ գյուղատնտեսության ոլորտում առկա հիմնախնդիրները և դիտարկելով վիճակագրական ցուցանիշների շարժընթացը՝ բացահայտել ենք, որ գյուղատնտեսության ճյուղում 2010-2021 թթ.-ի ընթացքում շարունակական անկում է գրանցվել. նվազել է համախառն արտադրանքը, այդ թվում՝ բուսաբուծության և անասնաբուծության ենթաօլորտներում: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի անկման հետ միասին, նկատվում է նաև հավաքված բերքի քանակի նվազում: Գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքի անկումն ուղեկցվում է դրանց ցանքատարածությունների նվազեցմամբ, իսկ գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը համահունչ է եղել ցանքատարածությունների և համախառն բերքի շարժընթացին:

2010-2021 թթ. գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի փոփոխությունը, իր հերթին, պայմանավորել է կաթի և բրդի արտադրության փոփոխությունը, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների և թռչունների իրացումը:

<sup>83</sup> ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2020 թ. հունվար-դեկտեմբեր, էջ 68-76, [https://armstat.am/file/article/f\\_sec\\_4\\_2020\\_3.pdf](https://armstat.am/file/article/f_sec_4_2020_3.pdf)  
 Պարենային ապահովություն և աղքատություն, 2021 թ. հունվար-դեկտեմբեր, էջ 68-76, [https://armstat.am/file/article/f\\_sec\\_4\\_2021\\_3.pdf](https://armstat.am/file/article/f_sec_4_2021_3.pdf)



ՀՀ գյուղատնտեսության խնդիրներից է համախառն արտադրանքում սեփական կարիքների համար ստեղծված արտադրանքի մեծ մասնաբաժինը: Դրա բարձր կշռի մասին է վկայում այն փաստը, որ դիտարկվող ժամանակահատվածում գյուղատնտեսության համախառն արտադրանքի բացարձակ գերակշռող մասը բաժին է ընկնում գյուղացիական մանր տնտեսություններին:

ՀՀ գյուղատնտեսության համար շարունակում են խնդրահարույց մնալ արդյունավետությունը բնութագրող ցուցանիշները՝ մշակաբույսերի բերքատվության, գյուղատնտեսական կենդանիների մթերատվության և գյուղատնտեսությունում մեկ զբաղվածի արտադրողականության մակարդակները: Այս ցուցանիշների մակարդակների բարձրացման առումով, կարևոր է գյուղացիական տնտեսությունների տեխնիկական ապահովվածությունը: Մինչդեռ ներկայում ՀՀ-ում առկա գյուղատնտեսական տեխնիկական և մեքենաները բնութագրվում են ցածր արդյունավետությամբ, ծախսատարությամբ, բարձր մաշվածությամբ, սարքիչության ցածր մակարդակով և վերանորոգման համար անհրաժեշտ հավելյալ ծախսերով:

Սակայն, անհրաժեշտ է ընդգծել գյուղատնտեսության ոլորտի կարևորությունը ՀՀ տնտեսության համար, քանի որ անընդհատ փոփոխվող աշխարհաքաղաքական վիճակի պայմաններում կարևոր է սննդի հասանելիության և պարենային անվտանգության ապահովումը, որի հիմնական երաշխիքը գյուղատնտեսության ոլորտն է, ի տարբերություն տնտեսության մյուս ճյուղերի: Ճիշտ է, ճյուղի զարգացման վրա դեռևս մեծ է բնական աղետների և կլիմայական փոփոխությունների ազդեցությունը, անկատար են դրանց հետևանքները վերացնելու կառուցակարգերը, առկա են տեխնիկական հագեցվածության, արտադրողականության և արդյունավետության խնդիրներ, սակայն հենց այստեղ է կարևորվում նշված ռիսկերի կառավարմանն ուղղված արդյունավետ պետական օժանդակության ծրագրերի իրականացումը:

## 2.2

### ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության վրա ազդող գործոնները

Գյուղատնտեսական արտադրանքի մրցունակությունը կարևորվում է ինչպես արտաքին շուկաներում դրա ներկայացվածության և արտահանման ծավալների աճի, այնպես էլ ներքին շուկայում ներմուծվող ապրանքների հետ մրցակցությանը դիմակայելու տեսանկյունից:

Մասնագիտական գրականությունում առկա մրցունակության գնահատման առաջարկվող մեթոդաբանությունները հիմնականում հանգում են արտադրանքի արտահանման և ներմուծման հարաբերակցությունների, ինչպես

նաև գործընկեր երկրների շուկաներում արտադրանքի արտահանման ծավալների շարժընթացի ուսումնասիրությանը: Գյուղատնտեսական արտադրանքի պարագայում նույնպես կարևորվում են և՛ արտահանման ու ներմուծման հարաբերակցությունների շարժընթացը, և՛ դրանց ծավալների՝ արտադրող և ներմուծող երկրների ՀՆԱ-ների նկատմամբ կշիռները:

Արդյունքում, գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության տեսանկյունից, էական է նաև ուսումնասիրել արտահանման ծավալների վրա ազդող գործոնները և գնահատել դրանց ազդեցության չափն ու ուղղությունները:

Գյուղատնտեսական արտադրանքի միջազգային առևտրի վրա ազդող գործոնների շարքում մասնագիտական գրականությունում առանձնացվում են հետևյալները.<sup>84</sup>

1. գնային գործոններ, որոնք բացատրում են արտադրանքի գինը միջազգային շուկաներում և դրա հարաբերական դիրքը մրցակից երկրների ապրանքների համեմատությամբ,
2. գործընկեր երկրներում եկամուտների և բնակչության աճ, ինչը կարող է հանգեցնել արտահանման ծավալների աճին,
3. պետական կառավարման միջամտություն՝ ուղղված արտահանման խթանմանը, որը կարող է ներառել.
  - առևտրային քաղաքականություն,
  - ներքին գյուղատնտեսության խթանում՝ սուբսիդիաների և աջակցության այլ տեսակների միջոցով,
  - պետական կարգավորման ծախսեր (կապված սննդի անվտանգության միջոցառումների հետ),
  - այլ պետական աջակցություն (օրինակ՝ գյուղատնտեսական արտադրանքի համար ենթակառուցվածքների կառուցում և արդիականացում),
4. առաջարկի գործոններ (օրինակ՝ եղանակային պայմաններ, ռոտզման հասանելիություն, աշխատուժի որակական և քանակական հատկանիշներ և այլն):

Առանձին վերլուծության առարկա են գյուղատնտեսական ապրանքների գնային գործոնները, որոնք էական ազդեցություն կարող են ունենալ արտահանման ծավալների վրա: Մասնավորապես՝ գյուղատնտեսության արտադրանքի գինը միջազգային շուկաներում պայմանավորում են հետևյալ գործոնները<sup>85</sup>.

1. արտադրանքի գինը սահմանը հատելու պահին, որի վրա ազդում են ինչպես ներքին շուկայում աշխատավարձերի մակարդակը, այնպես էլ

<sup>84</sup> Snell W., (2020). “Economic Factors Affecting Agricultural Trade”, Agricultural Economics, University of Kentucky.

<sup>85</sup> Նույն տեղում:

գյուղատնտեսության ոլորտում աշխատանքի արտադրողականությունը, տեխնոլոգիական հազեցվածությունը, եղանակային պայմանները և այլ գործոններ,

2. ճանապարհաձախսը դեպի նշանակման վայր, որը ՀՀ-ի նման երկրների դեպքում էական խոչընդոտ կարող է հանդիսանալ,
3. ներմուծող երկրում մաքսատուրքերը, ներմուծման հարկերը և այլ պարտադիր վճարները,
4. փոխարժեքը:

Մասնագիտական շրջանակներում մեծ է նաև շեշտադրումը փաստացի արդյունքների վրա: Առկա են գյուղատնտեսության ոլորտի ապրանքների արտահանման գործոնների վերաբերյալ մի շարք էմպիրիկ (փորձառական) հետազոտություններ:

Էմպիրիկ հետազոտությունները հիմնականում հիմնվում են, այսպես կոչված, «ձգողականության մոդելների» (gravity models) մեթոդաբանության վրա, որն առաջին անգամ կիրառվել է 20-րդ դարի կեսերին<sup>86</sup>: Տասնամյակների ընթացքում այն բավական զարգացրել և տեսականորեն հիմնավորել են բազմաթիվ հեղինակներ<sup>87</sup>: «Ձգողականության մոդելների» հիմքում դրված է այն գաղափարը, որ արտաքին առևտրի ծավալները և դրանց փոփոխությունը համամասնական են առևտուր անող երկրների տնտեսությունների ծավալներին, դրանց փոփոխություններին, ինչպես նաև երկու երկրների միջև առևտրային անկատարություններին (օրինակ՝ սակագնային և ոչ սակագնային սահմանափակումներ):

Զարգացող երկրների (Իրան, Հնդկաստան, Մալայզիա, Պակիստան, Թաիլանդ, Թուրքիա, Բրազիլիա, Ինդոնեզիա, Քենիա, Վենեսուելա, Թունիս, Ռումինիա) տվյալների հիման վրա վերոնշյալ մեթոդով իրականացված էմպիրիկ վերլուծությունը թույլ է տվել նշանակալի և դրական կապ հայտնաբերել ներմուծող երկրում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի և գյուղատնտեսական արտադրանքի ներմուծման ծավալների միջև: Միևնույն ժամանակ գյուղատնտեսական արտադրանք արտահանող զարգացող երկրի մեկ շնչին ընկնող ՀՆԱ աճը բացասաբար է ազդում արտահանման ծավալների վրա, ինչը նշանակում է, որ տնտեսական զարգացումն ուղեկցվում է գյուղատնտեսական արտադրանքի արտահանման դանդաղմամբ: Ինչ վերաբերում է փոխարժեքին, ապա էմպիրիկ վերլուծությունը ցույց է տվել, որ փոխարժեքի տատանողականության աճը բացասական ազդեցություն է ունենում գյուղատնտեսական արտադրանքի միջազգային առևտրի վրա, ինչը բացատրվում է փոխարժեքի

<sup>86</sup> Tinbergen, J. (1962). Shaping the World Economy. Suggestion for an International Economic Policy, New York: The Twentieth Century Fund.

Pöyhönen, P (1963). A Tentative Model for the Volume of Trade between Countries. Weltwirtschaftliches Archiv, 90, 93-99.

<sup>87</sup> Helpman, E., Krugman, P. R. (1985). Market Structure and Foreign Trade: Increasing Returns, Imperfect competition, and the International Economy. Cambridge: MIT Press.

տատանողականության պայմաններում անորոշության աճով<sup>88</sup>:

Մեկ այլ էմպիրիկ վերլուծություն, իրականացված Թուրքիայի 1994-2012 թթ. եռամսյակային տվյալներով, ցույց է տվել, որ գյուղատնտեսական արտադրանքի միջազգային առևտրի տեսանկյունից, առավել կարևոր գործոններ են իրական փոխարժեքը, իրական ՀՆԱ-ն և գյուղատնտեսության արտադրանքի գները: Հետազոտության հեղինակները հավաստում են, որ ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը և արտադրողականությունը բարձրացնող նոր տեխնոլոգիաների ներդրումը դրականորեն են ազդում գյուղատնտեսական արտադրանքի առևտրային հաշվեկշռի վրա<sup>89</sup>:

Էմպիրիկ վերլուծություններ իրականացվել են նաև Նիգերիայի տնտեսության օրինակով՝ կիրառելով փոքրագույն քառակուսիների մեթոդով գնահատված ռեգրեսիոն մոդելներ: Այս դեպքում, որպես գյուղատնտեսական արտադրանքի արտահանման վրա էական նշանակալի ազդեցություն ունեցող գործոններ, առանձնացվել են ներքին արտադրության աճը, արտադրության գները, փոխարժեքը, ներքին սպառումը և տոկոսադրույքը<sup>90</sup>:

Որոշ հեղինակներ ուսումնասիրել են գյուղատնտեսական առանձին ապրանքատեսակների արտահանման վրա ազդող գործոնները:

Այս համատեքստում Գաբետնկոմը և Կիանը, ըստ Կամերունի տվյալների, կիրառելով փոքրագույն քառակուսիների մեթոդը, ուսումնասիրել են կապայի, սուրճի և բանանի արտահանման վրա ազդող գործոնները՝ բացահայտելով, որ նշված ապրանքների արտահանման ծավալների վրա նշանակալի դրական ազդեցություն են ունենում հարաբերական գների փոփոխությունը՝ հոգուտ Կամերունի տնտեսության, միջազգային հաղորդակցման ուղիների (ճանապարհային ցանցի) բարելավումը, ինչպես նաև արտադրողներին տրամադրված վարկերի աճը: Ընդ որում, հեղինակները որպես ճանապարհային ցանցի բարելավման ցուցանիշ են ընդունել ճանապարհների երկարության ավելացումը, ներառյալ՝ ինչպես ասֆալտապատ, այնպես էլ ոչ ասֆալտապատ ճանապարհները: Դրական կապ է արձանագրվել նաև այնպիսի գործոններից, ինչպիսիք են եղանակային պայմանները (անձրևների առատությունը) և պետական քաղաքականության միջոցառումները<sup>91</sup>:

Հարավային Աֆրիկայի գյուղատնտեսական շուրջ 10 ապրանքատեսակների (արտահանման ծավալներով՝ ամենախոշորների) արտահանման վրա ազդող գործոններն ուսումնասիրելու նպատակով հեղինակները մոդելնե-


<sup>88</sup> Khiyavi P. K., Moghaddasi R., Yazdani S. (2013) "Investigation of Factors Affecting the International Trade of Agricultural Products in Developing Countries", Life Science Journal, January 2013.

<sup>89</sup> Sertoglu K., Dogan N., Agricultural Trade and its Determinants: Evidence from Bounds Testing Approach for Turkey, International Journal of Economics and Financial Issues, Vol 6, Issue 2, 2016.

<sup>90</sup> Abolagba E.O., Onyekwere N.C., Agbonkpolor and Umar H.Y. (2010), Determinants of Agricultural Exports, Journal of Human Ecology, 29(3): 181-184 (2010).

<sup>91</sup> Gbetnkomp D., Khan S.A. (2002), Determinants of agricultural exports: The case of Cameroon, African Economic Research Consortium Research Paper 120, August 2002.

րում ներառել են առավել լայն գործոններ, ներառյալ՝ ՀՆԱ ցուցանիշն արտադրող և ներմուծող երկրներում, տնտեսությունների միջև ֆիզիկական հեռավորությունը և զարգացածության հեռավորությունը (մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ների տարբերությունը), ընդհանուր սահման ունենալու և տնտեսական միություններում լինելու հանգամանքը և այլն: Ընդ որում, հետազոտությունն իրականացվել է արտահանման ծավալներով ամենախոշոր 10 գյուղատնտեսական ապրանքատեսակների համար՝ առանձին: Արդյունքները ցույց են տվել, որ, կախված ապրանքատեսակից, արտահանման ծավալները բացատրող գործոնները տարբերվում են: Այնուամենայնիվ, ապրանքատեսակների մեծամասնության համար առավել նշանակալի գործոններ են եղել բնակչության, ինչպես նաև Հարավային Աֆրիկայի և գործընկեր երկրների ՀՆԱ աճերը<sup>92</sup>:



**Աղբյուրը՝** ՀՀ վիճակագրական կոմիտե, հեղինակների հաշվարկներ

**Գծապատկեր 2.10**

Գյուղատնտեսական արտադրանքի ծավալները 2000-2021 թթ.

**Գծապատկեր 2.11**


Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման միջուկները և գյուղատնտեսության կշիռը ՀՆԱ-ում, %

Գյուղատնտեսության ոլորտի զարգացումները վերջին տարիներին բավական ուշագրավ են: Բացի 2010 թվականից, գյուղատնտեսության ոլորտում գրանցվել են բարձր աճեր 2001-2015 թվականների ընթացքում՝ միջինում շուրջ 8.3%-ի չափով, ինչի արդյունքում 2015 թ. գյուղատնտեսության արտադ-

<sup>92</sup> E. Idsardi (2010) “The Determinants of Agricultural Export Growth in South Africa”, Contributed Paper presented at the Joint 3rd African Association of Agricultural Economists (AAAE) and 48th Agricultural Economists Association of South Africa (AEASA) Conference, Cape Town, South Africa, September 19-23, 2010.

րանքի իրական ծավալը եղել է շուրջ 2.5 անգամ ավելի մեծ, քան 2000 թ.-ին: Այնուհետև 2016-2021 թվականներին գյուղատնտեսությունն անկում է ապրել տարեկան միջինում շուրջ 4.5% տեմպով:

Այդ պայմաններում գյուղատնտեսության կշիռը ՀՆԱ-ում վերջին տասը տարիներին էականորեն նվազել է՝ հասնելով 11.3%-ի՝ 2012 թվականի 17.9%-ի համեմատ: Միաժամանակ, գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալներն աճել են: ՀՆԱ-ի նկատմամբ գյուղատնտեսական արտադրանքի արտահանման կշիռը 2021 թ. հասել է 2.1%-ի, իսկ ընդհանուր արտահանման ծավալների նկատմամբ՝ 9.7%-ի՝ 2012 թ. համապատասխանաբար՝ 0.6 և 4.9 տոկոսից: Նման շարժընթացը վկայում է այն մասին, որ գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունն աճել է ՀՀ տնտեսության համեմատ դանդաղ տեմպերով, սակայն դրա կառուցվածքում մեծացել է արտահանվող մասը: Այդ մասին է վկայում նաև այն, որ գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալի և ոլորտի թողարկման ծավալների հարաբերակցությունը էականորեն աճել է վերջին տարիներին (տե՛ս գծապատկեր 2.11): Դրա հետ մեկտեղ, աճել են նաև գյուղատնտեսական արտադրանքի ներմուծման ծավալները, և այս ապրանքատեսակների զուտ արտահանումը մնացել է բացասական տիրույթում: Դա նշանակում է, որ թեև գյուղատնտեսական արտադրանքի արտահանման աճն էականորեն գերազանցում է ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների աճը, այնուամենայնիվ, դրա մրցունակությունը ներմուծվող ապրանքների նկատմամբ չի բարելավվում:



**Աղբյուրը՝** ՀՀ վիճակագրական կոմիտե, հեղինակների հաշվարկներ

**Գծապատկեր 2.12**

Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման կշիռը գյուղատնտեսության թողարկման նկատմամբ, %

**Գծապատկեր 2.13**

Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման և ներմուծման ցուցանիշները

Արտադրանքի արտաքին շուկաներում մրցունակության վերաբերյալ դատողություններ անելու համար կարևորել ենք գյուղատնտեսական արտադրանքի արտահանման աշխարհագրության ուսումնասիրությունը: Ըստ վիճակագրական տվյալների՝ ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի արտահանման հիմնական ուղղությունը պատմականորեն եղել է Ռուսաստանի Դաշնությունը, որին բաժին է ընկնում ՀՀ-ից արտահանման ավելի քան 80%-ը: Ընդ որում, այդ կշիռը վերջին տարիներին ավելացել է՝ մոտենալով 90%-ին: Այլ երկրներից նշանակալի կշիռ ունեն Իրաքը, Քուվեյթը, Վրաստանը, դեպի ուր արտահանումը 2015-2021 թվականներին տատանվել է միջինում 2.4, 0.7, 4.4 տոկոսների շրջանակում:

## Աղյուսակ 2.9

Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ուղղությունները,  
%՝ ընդհանուր արտահանման նկատմամբ<sup>93</sup>


Երկրները	2015	2016	2017	2018	2019	2020	2021
ՌԴ	79.5	81.5	72.7	81.2	84.1	89.2	87.8
Իրաք	1.6	0.6	4.7	0.8	2.8	2.2	4.2
Քուվեյթ	0.0	0.4	0.1	0.2	0.4	1.4	2.1
Վրաստան	11.4	6.1	4.8	2.9	2.6	1.3	1.8
Սուրինամ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	1.0
ԱՄՆ	0.8	0.4	0.5	0.9	1.0	0.8	0.8
Կատար	0.0	0.0	1.2	0.7	1.0	2.3	0.6
Լիբանան	1.6	0.0	0.0	0.0	0.2	0.8	0.4
Հորդանան	0.0	0.0	0.0	0.0	0.5	0.4	0.3
Բելառուս	0.2	0.3	0.3	0.2	0.2	0.5	0.2
Ֆրանսիա	0.0	0.1	0.2	0.3	0.2	0.2	0.1
ԱՄԷ	0.1	0.6	1.0	1.1	0.7	0.3	0.1
ԻԻՀ	3.4	9.3	14.1	11.0	5.6	0.1	0.1

Հատկանշական է, որ դեպի Իրանի Իսլամական Հանրապետություն արտահանումը էական կշիռ է ունեցել 2016-2018 թվականներին՝ միջինում շուրջ 11.5%, սակայն կտրուկ նվազել է 2020-2021 թվականներին՝ կազմելով 0.1%:

Նման վիճակագրության պայմաններում դեպի ՌԴ շուկա ՀՀ գյուղատնտեսության արտադրանքի արտահանման շարժընթացի ուսումնասիրությունը հնարավորություն կտա պատկերացում կազմելու դրա մրցունակության փոփոխության վերաբերյալ: Արտահանման ծավալների հիման վրա երկրի մրցունակության փոփոխության վերաբերյալ դատողություն անելու հիմնական տրամաբանությունն այն է, որ եթե արտահանման ծավալներն աճում են, ապա մրցունակության մակարդակը բարձրանում է: Գծապատկեր 2.14-ում ներկայացված են գյուղատնտեսական ապրանքների արտահանման, ՀՀ ընդհանուր արտահանման և ՌԴ անվանական ՀՆԱ դուրապյին ինդեքսները, որից երևում է, որ ՀՀ-ից դեպի ՌԴ գյուղատնտեսական ապրանքների արտահանման ծավալները 2000-2021 թթ. աճել են շուրջ 120 անգամ, մինչդեռ

<sup>93</sup> Աղբյուրը՝ ՀՀ ՊԵԿ մաքսային վիճակագրություն, հեղինակների հաշվարկներ:

ՌԴ տնտեսությունն աճել է շուրջ 6.4 անգամ, իսկ ՀՀ-ից ընդհանուր արտահանումը՝ շուրջ 10 անգամ:



**Գծապատկեր 2.14**

Անվանական ծավալների ինդեքս (արտահայտված ԱՄՆ դոլարով), 2000 = 100<sup>94</sup>

Վերջին 10 տարիների ընթացքում գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների առաջանցիկ աճի միտումը պահպանվել է: Այսպես՝ ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալը դեպի ՌԴ 2012-2021 թվականներին աճել է շուրջ 4.4 անգամ, այն դեպքում, երբ ՀՀ-ից ընդհանուր արտահանումը դեպի ՌԴ աճել է ընդամենը 2.2 անգամ, իսկ ՌԴ անվանական ՀՆԱ-ն, արտահայտված ԱՄՆ դոլարով, կրճատվել է շուրջ 19%-ով: Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման արագ աճի տեմպը, բնականաբար, դրական երևույթ է և կարող է դիտարկվել որպես մրցունակության բարձրացման չափորոշիչ: Սակայն, անհրաժեշտ է բացահայտել նաև այն հիմնական գործոնները, որոնք նպաստել են ՀՀ արտադրանքի մրցունակության աճին հիմնական արտահանման շուկայում, որպեսզի հնարավոր լինի ապահովել մրցունակության հետագա աճին միտված քաղաքականություն:

### **Գյուղատնտեսության արտադրանքի արտահանման ծավալների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատումը:**

Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքները հաշվի առնելով՝ ՀՀ գյուղատնտեսության արտադրանքի արտահանման միտումների ուսումնասիրության համար սույն հետազոտությունում կիրառվել է «ձգողականության մոդելների» մեթոդաբանությունը: Այսինքն՝ ուսումնասիրվել է, թե որքանով են գյուղատնտեսական արտադրատեսակների արտահանման ծավալները փոխկապակցված ՀՀ և գործընկեր երկրների տնտեսությունների չափերի և դրանց փոփոխությունների հետ, ինչպես նաև ինչ ազդեցություն են

<sup>94</sup> Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, ՌԴ վիճակագրության դաշնային ծառայություն, հեղինակների հաշվարկներ:



ունենում առևտրային պայմանների և այլ գործոնների փոփոխությունները գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների և մրցունակության վրա: Հետևաբար, որպես գյուղատնտեսական արտադրանքի արտահանման և մրցունակության միտումների բացատրող փոփոխականներ, ընտրվել են հետևյալները.

- ներքին արտադրանքի աճ,
- գյուղատնտեսության արտադրանքի ներքին գներ,
- գյուղատնտեսության արտադրանքի գներ արտահանման երկրներում,
- իրական ՀՆԱ աճ ՀՀ-ում,
- իրական ՀՆԱ աճ գործընկեր երկրներում,
- գյուղատնտեսության ոլորտին տրամադրված վարկեր,
- գյուղատնտեսության ոլորտում պետական աջակցության ծրագրեր:

Նշված գործոնների ազդեցությունները գնահատելու համար նախ՝ ուսումնասիրվել են գյուղատնտեսական ապրանքների արտահանման և ներմուծման պատմական միտումներն ըստ առանձին ապրանքատեսակների, դրանց փոփոխությունները վերջին տարիներին: Գնահատումն իրականացվել է փոքրագույն քառակուսիների մեթոդի կիրառմամբ՝ ռեգրեսիոն հավասարումների միջոցով:

Սույն հետազոտությունում իրականացվել է գյուղատնտեսական արտադրանքի արտահանման և թողարկման ծավալների վրա մի շարք գործոնների ազդեցության գնահատում այն ենթադրությամբ, որ արտահանմանը նպաստող գործոնները նաև բարձրացնում են մրցունակության մակարդակը:

Վերջիններիս ընտրությունը հիմնված է մասնագիտական գրականության վերլուծության վրա: Մասնավորապես՝ առանձնացվել են արտահանման ծավալների վրա նշանակալի ազդեցություն ունեցող գործոնները՝ գնահատելով դրանց դերն արտահանման աճի գործում: Ընտրված գործոնները կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

- **Գնային գործոններ**, որոնք պայմանավորում են արտահանվող ապրանքների գնային մրցունակությունը: Այդպիսի գործոններ են փոխարժեքը, գյուղատնտեսական ապրանքների իրացման գները ՀՀ-ում և ՌԴ-ում:
- **Առաջարկի գործոններ**, որոնք ցույց են տալիս արտադրության սահմանափակումները: Որպես առաջարկի գործոններ՝ հետազոտությունում կիրառվել են ՀՀ ՀՆԱ աճը, գյուղատնտեսական արտադրանքի թողարկման և ավելացված արժեքի աճերը:
- **Պահանջարկի գործոններ**, որոնք ցույց են տալիս արտահանման շուկայում, այս դեպքում՝ ՌԴ շուկայում իրավիճակի փոփոխությունը:
- **Պետական աջակցություն**, որը ցույց է տալիս, թե պետության իրականացրած միջոցառումներն ինչ չափով են ազդել գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների վրա: Այս խմբում են ներառվել

պետական բյուջեի ծախսերը գյուղատնտեսության ոլորտում և աջակցության միջոցառումների տարբեր ուղղությունները:

Նշված գործոնների ազդեցության չափը գնահատելու նպատակով կառուցվել են առանձին երկչափ ռեգրեսիայի հավասարումներ, որպեսզի հնարավոր լինի դիտարկել ցուցանիշներից յուրաքանչյուրի ազդեցության չափը և նշանակալիությունը գյուղատնտեսական արտադրանքի արտադրության և արտահանման գործում: Ռեգրեսիայի հավասարման ամփոփ արդյունքները ներկայացված են աղյուսակ 2.10-ում և 2.11-ում:

Ցուցանիշների միջև կապերը գնահատելու նպատակով օգտագործվել են եռամսյակային ժամանակային շարքեր: Ընդ որում, շարքերի երկարությունը տարբեր է՝ կախված տվյալների հասանելիությունից: Օրինակ՝ գյուղատնտեսության ոլորտի վարկերի գծով տեղեկատվությունը հասանելի է եղել 2014 թվականից, հետևաբար՝ գնահատվել է այդ տարիների ազդեցությունը, իսկ, օրինակ, ՌԴ ՀՆԱ աճի ցուցանիշների ազդեցությունը ՀՀ գյուղատնտեսության արտադրանքի արտահանման աճի վրա գնահատվել է 2001-2021 թվականների տվյալներով:

Ցուցանիշների ստացիոնարությունը գնահատվել է վիճակագրական թեստերի միջոցով (Augmented Dickey-Fuller, Phillips-Perron, KPSS), որոնք ցույց են տվել, որ ցուցանիշները մակարդակներով ստացիոնար չեն: Հետևաբար՝ ռեգրեսիոն վերլուծության համար կիրառվել են ցուցանիշների աճերը՝ յուրաքանչյուր եռամսյակի աճը նախորդ տարվա համապատասխան եռամսյակի նկատմամբ:

Ընդհանուր առմամբ, որպես գյուղատնտեսական արտադրանքի արտահանման և գյուղատնտեսության ոլորտի ավելացված արժեքի վրա ազդեցություն ունեցող գործոններ, դիտարկվել են ՀՀ ՀՆԱ աճը, գյուղատնտեսության ոլորտի վարկերը, գյուղատնտեսության ոլորտում պետական ծախսերը, ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը, ՌԴ իրական ՀՆԱ աճը, ՌԴ բուսական ծագման արտադրանքի գների աճը, բեռնափոխադրման ծախսերը, գյուղատնտեսական արտադրանքի գները ՀՀ-ում (ներառյալ՝ բուսական և կենդանական ծագման առանձին ապրանքների գները), գյուղատնտեսական արտադրանքի գները ՌԴ-ում (ներառյալ՝ բուսական և կենդանական ծագման առանձին ապրանքների գները), իրական արդյունավետ փոխարժեքը, անվանական արդյունավետ փոխարժեքը, ՀՀ դրամի անվանական փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ, ՀՀ դրամի անվանական փոխարժեքը ՌԴ ռուբլու նկատմամբ:

Աղյուսակ 2.10-ում ներկայացված է ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների վրա վերոնշյալ գործոնների ազդեցությունների գնահատման արդյունքները: Ընդ որում, աղյուսակում ներկայացվել են միայն նշանակալի կապերը: Այսինքն՝ հետազոտության շրջանակներում գնահատվել են բոլոր ցուցանիշների ազդեցություններն արտահանման ծավալ-

ների վրա, սակայն դրանցից շատերի մասով նշանակալի ազդեցություն չի հայտնաբերվել: Ավելին, գնահատվել է ոչ միայն մեկ լազի, այլև յուրաքանչյուր ցուցանիշի մինչև 8-րդ լազի ազդեցությունը:

**Աղյուսակ 2.10**  
*Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների վրա որոշակի գործոնների ազդեցությունների գնահատման ամփոփումը (ստավել մանրամասն տե՛ս հավելված 5-ում)*

Ցուցանիշը	Ազդեցության գործակիցը	Մեծի ուղղությունը	Է-փնտախազությունը	Նշանակալիությունը (p-value)	R <sup>2</sup>	Գնահատման ժամանակահատվածը
Գյուղատնտեսության ոլորտում պետական ծախսեր	-0.209	-2	-2.108	0.040	0.082	2009-2021
Ռուսիո նկարմամբ ՀՀ դրամի փոխարժեք	-0.591	0	-1.926	0.059	0.062	2008-2021
ՌԴ բուսական ծագման արտադրանքի գների աճ	0.690	0	2.115	0.040	0.096	2011-2021
Բեռնափոխադրման ծախսեր	-1.625	0	-2.710	0.009	0.120	2008-2021

Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների վրա նշանակալի ազդեցություն է բացահայտվել դիտարկված գործոններից որոշ-ների մասով, այն էլ՝ հստակ ժամանակահատվածում, ինչն էլ ներկայացված է աղյուսակ 2.10-ում: Սակայն, բացի նշանակալի լինելու հանգամանքից, կարևոր են նաև ազդեցության չափը և ուղղությունը: Այսպես, օրինակ, գյուղատնտեսության ոլորտում պետական աջակցության ծրագրերի ազդեցությունը գյուղատնտեսական արտադրանքի արտահանման վրա բացասական է, ինչը նշանակում է, որ գյուղատնտեսության ոլորտում պետական բյուջեից կատարվող ծախսերի աճը հանգեցնում է այդ ոլորտի արտադրանքի արտահանման նվազմանը երկու եռամսյակ հետո: Այսպիսի արդյունքը կարող է բացատրվել այն հանգամանքով, որ գյուղատնտեսության ոլորտում ծախսերի աճը տեղի է ունեցել անբարենպաստ տարիներին, երբ կառավարությունը փոխհատուցում է տրամադրել գյուղատնտեսությամբ զբաղվողներին եղանակային կամ այլ խնդիրների հետևանքով բերքի կորստի համար: Մնացած գործոններն ունեն առավել տրամաբանական կապեր և էական նշանակալի ազդեցություն են ունենում գյուղատնտեսության արտադրանքի արտահանման վրա: Ինչպես նշվեց, ներկայացված գործակիցները ստացվել են երկչափ ռեգրեսիաների արդյունքում, և գործակիցների կայունությունը ստուգելու համար գնահատվել է նաև բազմաչափ ռեգրեսիան, որտեղ գնահատվել են գյուղատնտեսական արտադրանքի արտահանման վրա նշված գործոնների ազդեցությունները մեկ հավասարման մեջ: Վերջինս ունի հետևյալ տեսքը տես-

քը (մոդելի մանրամասն արդյունքները ներկայացված են հավելված 6-ում)。

$$Exp_t^{agr} = \beta_1 GDP_t^{Rus} + \beta_2 P_t^{Rus} + \beta_3 Tr_t + \beta_4 G_{t-2}^{agr} + \beta_5 RUB_t + \varepsilon,$$

որտեղ՝

$Exp_t^{agr}$ -ը գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների աճն է,

$GDP_t^{Rus}$ -ը ՌԴ ՀՆԱ-ի իրական աճն է,

$P_t^{Rus}$ -ն ՌԴ-ում բուսական ծագման արտադրանքի գների աճն է,

$Tr_t$ -ն բեռնափոխադրման ծառայությունների սակագների աճն է,

$G_{t-2}^{agr}$ -ը ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսության ոլորտի ծախսերն են («t-2»-ը նշանակում է ծախսերի երկու եռամսյակ հետո ազդեցությունը),

$RUB_t$ -ը ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի փոփոխությունն է (աճը նշանակում է արժևորում),

$\beta_1$ -ից  $\beta_5$ -ը գործակիցներն են, որոնք բնութագրում են կախյալ փոփոխականի վրա ( $Exp_t^{agr}$ ) հավասարման մեջ ներառված գործոնների ազդեցության չափը և ուղղությունը:

Վերոնշյալ բանաձևը փոքրագույն քառակուսիների մեթոդով գնահատելուց հետո կունենա հետևյալ տեսքը.

$$Exp_t^{agr} = 2.22 * GDP_t^{Rus} + 0.52 * P_t^{Rus} - 1.728 * Tr_t - 0.01 * G_{t-2}^{agr} - 0.74 * RUB_t \\ (3.394)^{***} (2.072)^{***} (-3.142)^{***} (-0.108) (-2.777)^{**}:$$

Ստացված արդյունքները բավական մոտ են գործոնների առանձին գնահատականներին, ինչը ցույց է տալիս, որ երկչափ ռեգրեսիայի միջոցով ստացված գործակիցները կայուն են: Սակայն, որոշ կարևոր գործոնների ազդեցության չափը և նշանակալիությունը էականորեն տարբերվում են: Մասնավորապես՝ երկչափ ռեգրեսիայի միջոցով գնահատելու պարագայում պարզվում է, որ ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսության ոլորտի ծախսերի աճը բացասական ազդեցություն է ունենում արտադրանքի արտահանման ծավալների վրա: Մինչդեռ հավասարման մեջ գյուղատնտեսական արտադրանքի աճը բացատրող այլ գործոնների ներառման պարագայում բյուջեի ծախսերի ազդեցությունը դառնում է ոչ նշանակալի: Դրանից կարելի է եզրակացնել, որ պետական բյուջեի ծախսերի աճը նշանակալի ազդեցություն չի ունենում գյուղատնտեսական արտադրանքի արտահանման աճի վրա, հետևաբար, մրցունակության տեսանկյունից, նշանակալի չէ:

Մեկ այլ ցուցանիշ, որի ազդեցության չափը բնութագրող գործակիցը տարբեր արժեքներ է ընդունում երկչափ և բազմաչափ ռեգրեսիայի պարագայում, ՌԴ իրական ՀՆԱ աճն է: Երկչափ ռեգրեսիայի գնահատման պարագայում վերջինս նշանակալի ազդեցություն չի ունենում գյուղատնտեսական

արտադրանքի արտահանման աճի վրա: Դա կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ ՌԴ իրական ՀՆԱ-ն բացատրում է գյուղատնտեսական արտադրանքի արտահանման տատանողականության շատ փոքր մասը, և առանց այլ գործոնների ներառման՝ մոդելին չի հաջողվում բացահայտել գոյություն ունեցող կապը: Սակայն, լրացուցիչ գործոններ ավելացնելու պարագայում ՌԴ իրական ՀՆԱ ազդեցությունը դառնում է նշանակալի՝ ունենալով էական բարձր գործակից: Դա տրամաբանական է՝ հաշվի առնելով ՌԴ տնտեսության չափերը ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների համեմատ:

Ընդհանուր առմամբ, կարող ենք նշել, որ գյուղատնտեսական արտադրանքի արտահանման վրա մշտապես նշանակալի ազդեցություն ունեցող գործոնները շատ չեն: Դրանցից երկուսը՝ ՌԴ իրական ՀՆԱ աճը և ՌԴ-ում գնային գործոնները, պետք է դիտարկել որպես էկզոգեն գործոններ, մինչդեռ ՀՀ-ում բեռնափոխադրումների գները և ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը որոշ չափով կրում են պետական քաղաքականության ազդեցությունը և էականորեն անդրադառնում գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների վրա: Հետևաբար՝ մրցունակության բարձրացման գործում անհրաժեշտ է ջանքեր գործադրել այդ գործոնների բարելավման ուղղությամբ:

#### **Գյուղատնտեսության ոլորտի վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատումը:**

Գյուղատնտեսության վրա ազդող գործոնների ավելի համապարփակ ուսումնասիրության համար սույն հետազոտությունում գնահատվել են նախ՝ գյուղատնտեսության ավելացված արժեքի վրա տարբեր գործոնների ազդեցությունները: Քանի որ գյուղատնտեսության ոլորտը վերջին տարիներին շարունակաբար անկում է գրանցել, ուստի անհրաժեշտ է բացահայտել այն մակրոտնտեսական գործոնները, որոնք որոշ չափով բացատրում են այդ անկումը:

Դրա իրականացման համար կիրառվել են նույն գործոնները, ինչ գյուղատնտեսական արտադրանքի արտահանման վրա ազդեցությունները գնահատելիս, քանի որ ենթադրվում է, որ այս ոլորտի ընդհանուր արդյունքը պայմանավորված է հենց այդ գործոնների շարժընթացով: Աղյուսակ 2.11-ում ներկայացված են այն գործոնների գնահատման արդյունքները, որոնք նշանակալի ազդեցություն են ունենում գյուղատնտեսության ոլորտի զարգացումների վրա: Մնացած գործոնների ազդեցությունները նույնպես գնահատվել են, սակայն նշանակալի կապ չի բացահայտվել որևէ սպեցիֆիկացիայի<sup>95</sup> պայմաններում:

<sup>95</sup> Նկատի են առնվում տարբեր լազերի և ցուցանիշների տարբեր վերափոխումների պայմաններում իրականացված գնահատումները:

Գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ծավալների (ավելացված արժեքի) վրա առանձին գործոնների ազդեցությունների գնահատման ամփոփումը (ստավել մանրամասն տե՛ս հավելված 7-ում)

Ցուցանիշը	Ազդեցության գործակիցը	Ազդեցության լսադր	t-վիճակագրությունը	Նշանակալիությունը (p-value)	R <sup>2</sup>	Գնահատման ժամանակահատվածը
ՀՀ ՀՆԱ աճ	0.556	0	4.367	0.000	0.187	2001-2021
ՌԴ ՀՆԱ աճ	0.664	0	2.783	0.007	0.085	2001-2021
Գյուղատնտեսության ոլորտում պետական ծախսեր	-0.052	-3	-2.082	0.043	0.072	2009-2021
Գյուղատնտեսական արտադրանքի գների աճ	0.379	-1	4.124	0.000	0.168	2001-2021
ՌԴ գյուղատնտեսական արտադրանքի գների աճ	0.266	-2	1.855	0.070	0.076	2011-2021

Ըստ գնահատման արդյունքների՝ գյուղատնտեսության ոլորտի ավելացված արժեքի վրա նշանակալի ազդեցություն են ունենում ՀՀ ՀՆԱ աճը, գյուղատնտեսական արտադրանքի գների աճը ՀՀ-ում, գյուղատնտեսական արտադրանքի գների աճը ՌԴ-ում և գյուղատնտեսության ոլորտում պետական ծախսերի աճը: Նկատենք, որ գյուղատնտեսության ոլորտում պետական ծախսերի ազդեցությունն այս դեպքում նույնպես ունի բացասական նշան, ինչը նշանակում է, որ բյուջեից ոլորտին ուղղվող ծախսերի աճը հանգեցնում է ստեղծված արդյունքի նվազմանը: Սակայն, ինչպես նախորդ դեպքում, պետական ծախսերի ազդեցության գործակիցը և նշանակալիությունը չեն պահպանվում՝ մոդելում այլ փոփոխականների ավելացման պարագայում: Հատկանշական է, որ ՌԴ գյուղատնտեսական արտադրանքի գների աճը նշանակալի ազդեցություն ունի և՛ գյուղատնտեսական արտադրանքի արտադրության, և՛ արտահանման ցուցանիշների վրա:

Ամփոփելով կարող ենք նշել, որ գյուղատնտեսության ոլորտի ծավալների՝ վերջին տարիներին շարունակաբար նվազման պայմաններում արձանագրվել է գյուղատնտեսական արտադրանքի արտահանման էական աճ՝ հիմնականում դեպի ՌԴ շուկա: Ընդ որում, արտահանման աճի տեմպը էականորեն գերազանցել է ՌԴ տնտեսության աճի տեմպերը: Թողարկված արտադրանքի կառուցվածքում արտահանման կշիռն էականորեն մեծացել է: Միաժամանակ, մեծացել են նաև գյուղատնտեսական արտադրանքի ներմուծման ծավալները, ինչի արդյունքում զուտ արտահանման ծավալը մնացել է գրեթե նույն մակարդակում: Դա նշանակում է, որ թեև արտադրանքի մրցունակությունն աճել է արտաքին շուկաներում, ներքին շուկայում դեռևս չի հաջողվում դուրս մղել ներմուծվող ապրանքները:

Մակրոտնտեսական գործոնների շարքում ինչպես արտահանման, այնպես էլ թողարկման ծավալների համար էական նշանակություն ունի գյուղատնտեսական ապրանքների գների փոփոխությունը: Հետևաբար՝ կարելի է եզրակացնել, որ գնային գործոններն առավել մեծ նշանակություն ունեն գյուղատնտեսության զարգացման համար, և նման մոտեցումը պետք է հիմք հանդիսանա պետական քաղաքականության միջոցառումների մշակման և արդյունավետության բարձրացման առումով: Կարելի է նաև առանձնացնել բեռնափոխադրման ծախսերի կարևորությունն արտադրանքի արտահանման համար, ինչպես նաև ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի նշանակալի ազդեցությունը: Այս գործոնները, մյուս մակրոտնտեսական գործոնների համեմատ, առավել մեծ ազդեցություն են ունենում գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության, հետևաբար նաև արտահանման ծավալների վրա, ինչը նշանակում է, որ պետական քաղաքականության միջոցառումները պետք է ներառեն այս գործոնների բարելավմանն ուղղված դրույթներ: Իհարկե, փոխարժեքի կարգավորման և դրա վրա ազդեցության կառուցակարգերն ավելի սահմանափակ են՝ հաշվի առնելով փոխարժեքի վրա ազդող բազմաթիվ գործոնները, ինչպես նաև փոխարժեքի՝ տնտեսության այլ հատվածների վրա ազդեցությունները, սակայն բեռնափոխադրումների սակագների վրա հնարավոր կլինի ազդել պետական քաղաքականության գործիքակազմով, օրինակ՝ սուբսիդավորման միջոցով:

**ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

**3.1 ՀՀ գյուղատնտեսության ոլորտի պետական  
աջակցության ծրագրերն ու միջոցառումները**

ՀՀ տնտեսության համար գյուղատնտեսության զարգացումն առանցքային նշանակություն ունի, ուստի ոլորտի խթանմանն ուղղված միջոցառումները մշտապես քաղաքականության մշակողների ուշադրության կենտրոնում են: Միաժամանակ, այդ միջոցառումների գիտական վերլուծությունն էապես կարևոր է՝ դրանց հետագա բարելավման և արդյունավետության բարձրացման տեսանկյունից: Այդ նպատակից ելնելով՝ ամփոփվել և դասակարգված կերպով ներկայացվել են ՀՀ գյուղատնտեսության ոլորտում վերջին տասներկու տարիներին իրականացված բոլոր, այդ թվում՝ միջազգային գործընկերների ֆինանսավորմամբ, պետության համաֆինանսավորմամբ և պետական աջակցությամբ իրականացվող ծրագրերը:

Հայաստանում, գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թթ. ռազմավարության համաձայն, նախատեսվում է առաջիկա տասնամյակում ունենալ կայուն զարգացող, նորարարական, բարձր ավելացված արժեք ստեղծող, բնական պաշարների նկատմամբ հոգատար և շրջակա միջավայրի հետ ներդաշնակ, էկոլոգիապես մաքուր արտադրանք ստեղծող և գյուղում բնակվող մարդու բարեկեցությունը երաշխավորող գյուղատնտեսություն:<sup>96</sup>

Գյուղատնտեսության ոլորտի առանձնահատկությունների հաշվառումը, բացահայտված բոլոր խնդիրների լուծման հրատապության գիտակցումը, երկրի պարենային անվտանգության և գյուղական տարածքների զարգացման առաջնահերթության կարևորումը հիմնավորում են գյուղատնտեսության ոլորտի պետական կարգավորման մոտեցումների բազմազանեցման, մասնավորապես՝ պետական ակտիվ աջակցության ու միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը: Պետական աջակցությունը, առաջին հերթին, պետք է նպաստի գյուղատնտեսության ոլորտում ապրանք արտադրողների գործունեության համար բարենպաստ պայմանների ապահովմանը, ոլորտի հողային, մարդկային, տեխնոլոգիական ռեսուրսային ներուժի հնարավորինս ամբողջական ու արդյունավետ օգտագործմանը, գյուղատնտեսության ենթակառուցվածքների զարգացմանը, գյուղատնտեսության ոլոր-

<sup>96</sup> Ռազմավարություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների, 2020-2030 թվականներ, <https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf>



տին անհրաժեշտ ներմուծվող ապրանքների մատչելիության ապահովմանը, արտահանման ուղղվածություն ունեցող գյուղատնտեսական մթերքների արտադրության և մրցունակության բարձրացման խթանմանը, արդիական տեխնոլոգիաներով վարվող գյուղատնտեսության ներդրմանը, մասնագիտական խորհրդատվության, սննդամթերքի անվտանգության, գյուղմթերքների իրացման համակարգերի առաջխաղացմանը:

2010-2021 թթ.-ին ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ՀՀ պետական բյուջեի, միջազգային տարբեր կազմակերպությունների, այլ աղբյուրների (օրինակ՝ կառավարության պահուստային ֆոնդի) ֆինանսավորմամբ իրականացվել են գրեթե 310 ծրագրեր և միջոցառումներ, որոնց հիմնական մասը շարունակվել է մեկից ավելի տարիներ: Դրանց համակարգումն ու դասակարգումն ըստ անունների թույլ է տվել արձանագրել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում գյուղատնտեսության ոլորտում իրագործվել են առանձին անվանումներով 53 ծրագիր և միջոցառում, որոնցից 20-ը՝ արտաքին ֆինանսավորմամբ, նույնքան էլ պետական աջակցության ծրագրեր և պետական բյուջեի հաշվին ֆինանսավորվող 13 անվանմամբ նպատակային ծրագրեր ու միջոցառումներ, որոնք գրեթե մշտական բնույթ ունեն:

**Աղյուսակ 3.1**  
*Գյուղատնտեսության ոլորտում իրականացված ծրագրերն ու միջոցառումները<sup>97</sup>*

	Գյուղատնտեսության ոլորտին կապարված հարկացումների հաշվին իրականացված ընդամենը ծրագրեր և միջոցառումներ, թիվ	Այդ թվում՝ պետական աջակցության ծրագրեր և միջոցառումներ	Արտաքին աջակցության ֆինանսավորված վարկային և դրամաշնորհային ծրագրեր
2010	27	1	12
2011	25	1	9
2012	25	2	7
2013	26	2	10
2014	28	2	10
2015	29	2	10
2016	26	2	8
2017	20	5	5
2018	26	11	5
2019	26	14	5
2020	29	15	5
2021	21	15	4

<sup>97</sup> Հաշվարկի ու դասակարգումը հեղինակների՝ ՀՀ բյուջեի կատարման հաշվետվությունների հիման վրա, [https://minfin.am/hy/page/hashvetvutyunner\\_byuje\\_e\\_kataroghakan/](https://minfin.am/hy/page/hashvetvutyunner_byuje_e_kataroghakan/)

Միջին հաշվով գյուղատնտեսության ոլորտում յուրաքանչյուր տարի իրականացվել են 25-26 ծրագիր և միջոցառում, ընդ որում, ամենաքիչը՝ 2017 թ.-ին՝ 20 և ամենաշատը՝ 2015 թ.-ին և 2020 թ.-ին՝ 29: Պետական աջակցության ծրագրերի և միջոցառումների թիվը սկսում է ավելանալ 2017 թ.-ից ի վեր՝ 5, հաջորդող տարիներին՝ 11, 14 և 2020-2021 թթ.-ին՝ 15-ական: Միաժամանակ, նվազում է արտաքին աջակցությամբ ֆինանսավորված վարկային և դրամաշնորհային ծրագրերի թիվը:

Գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության, ինչպես նաև արտաքին ֆինանսավորմամբ ծրագրերի և միջոցառումների նպատակները գրեթե միշտ ձևակերպված են ծրագրային փաստաթղթերի նախաբանում և դրանք ընդունող պետական ինստիտուտի համապատասխան որոշումներում:

- գյուղացիական տնտեսություն վարելու նոր՝ ավելի արտադրողական վարքագծի ներդրումը,
- ոլորտում կապիտալ ներդրումների ծավալների ավելացումը,
- արտադրական հզորությունների ընդլայնումը,
- արդիական տեխնոլոգիաների ներդրումը,
- ոլորտի տնտեսավարողների եկամուտների կայունացումը:

Ուսումնասիրելով գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության, ինչպես նաև արտաքին ֆինանսավորմամբ ծրագրերը, առանձնացրել, համախմբել և ամփոփ ձևով ներկայացրել ենք այն հիմնական նպատակներն ու ենթանպատակները, որոնց ձեռքբերմանն են ուղղված իրականացվող միջոցառումները:

**1. Ընդհանրական բնույթի նպատակներ,** մասնավորապես՝ գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի, հիմնական շահառու խմբի, գյուղական անապահով համայնքների բնակիչների կենսամակարդակի բարելավում, աղքատության մակարդակի նվազեցում, տնտեսական աճի ապահովում, տնտեսական ներուժի առավել արդյունավետ կիրառությանն օժանդակություն և այլն:

**2. Հիմնական նպատակը՝ դրան հասնելու ճանապարհի մատնանշմամբ,** մասնավորապես՝ աջակցություն Հայաստանի փոքր և միջին գյուղական ձեռնարկությունների զարգացմանը՝ ֆերմերների ու գյուղական ձեռնարկատերերի համար շուկաներն առավել մատչելի դարձնելու և գյուղական շրջաններում ներդրումները խթանելու միջոցով, աջակցություն սննդամթերքի անվտանգության ապահովման ժամանակակից համակարգի ստեղծմանը՝ հիմնվելով միջազգային չափանիշների և լավագույն փորձի վրա և այլն:

**3. Վերականգնում և կառուցում.** սոցիալական ենթակառուցվածքների վերականգնում, օժանդակություն հասարակական ենթակառուցվածքների կառուցմանն ու վերականգնմանը, առավելապես լեռնային՝ առավել անապահով համայնքներում օժանդակություն հասարակական ենթակառուցվածքներին՝ ջրամատակարարման, գազամատակարարման և ջրահեռաց-

ման համակարգերի, ինչպես նաև գյուղական ճանապարհների և օժանդակ կառույցների կառուցմանն ու վերականգնմանը և այլն:

**4. Խորհրդատվական ծառայությունների մատուցում, տեխնիկական օժանդակության և ուսուցման տրամադրում.** Խորհրդատվական ծառայությունների մատուցում համայնքների զարգացման գծով միջազգային մասնագետների կողմից, ֆերմերներին ուսուցման տրամադրում գործարար և ֆինանսական պլանավորման, գյուղատնտեսական առաջավոր փորձի և տեխնոլոգիաների ներդրման նպատակով և այլն:

**5. Աջակցություն արտադրությունների ստեղծմանը և ձեռնարկությունների աճին:**

**6. Վարկերի տրամադրում.** ֆերմերային տնտեսություններին՝ զարգացման, ՓՄՁ-ներին՝ ներդրումային վարկերի, գյուղական բաժնետիրական ֆինանսավորման պահանջարկը բավարարող ներդրումային գործիքների և հարակից ֆինանսական միջոցների տրամադրում:

**7. Գործարարության զարգացմանը նպաստող ծրագրերի իրականացում,** մասնավորապես՝ գյուղական բիզնեսի կառավարման բարելավմանը, կատարելագործմանը և բիզնեսի լավագույն փորձի զարգացմանն ու տարածմանը, գյուղատնտեսական ոլորտում կոոպերացիայի զարգացմանը, շուկայական կապերի ընդլայնմանը և ամրապնդմանը, գյուղատնտեսական մթերքի իրացման խնդիրների լուծմանը, ՀՀ տարածաշրջանների կամ մարզերի կտրվածքով գյուղատնտեսական արտադրանքի նոր տեսակների ու նոր տեխնոլոգիաների ներդրմանը, տարածմանը և զարգացմանը նպաստող և այլ ծրագրերի իրականացում:

**8. Գնումների իրականացում.** գյուղտեխնիկայի, տոհմային անասնազլխաքանակի, սերմացուի, պարարտանյութի և այլնի գնումներ:

**9. Այլ նպատակներ:**

Մասնագիտական գրականության մեջ ընդհանրապես պետական աջակցության, իսկ մասնավորապես՝ գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի արդյունավետությունը գնահատելու համար կարևորվում են տվյալ տարվա համար ծրագրային /պլանային խնդիրների լուծումը, նախատեսված ծախսերի կատարումը, իսկ դրանց ամբողջական չլուծման կամ ծախսերի թերակատարման դեպքերում՝ պատճառների բացահայտումը: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ հետազոտվել են գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի կատարման ժամկետներից շեղումների և ցածր կատարողականի փաստացի պատճառները, որոնք դասակարգվել են հետևյալ խմբերում.

1. տնտեսումներ, խնայողություններ, ապրանքների՝ ցածր գնով ձեռքբերում,
2. ծրագրի հետ կապված խնդիրներ,
3. ծրագրի դանդաղ ընթացքի պատճառներ,

4. ինստիտուցիոնալ բնույթի խնդիրներ,
5. ծրագրի շահառուների համար առաջարկված դժվարամատչելի պայմաններ,
6. այլ պատճառներ:

2010-2021 թթ.-ին ՀՀ գյուղատնտեսության ոլորտում օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ կյանքի են կոչվել մեծաթիվ վարկային, դրամաշնորհային ծրագրեր, որոնց իրականացման նվազագույն ժամանակահատվածը 1 տարի է, առավելագույնը՝ 6:

*Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված վարկային և դրամաշնորհային ծրագրերը*

**Աղյուսակ 3.2**

Ծրագրի գործելու ժամանակահատված	Ծրագրի անվանումը
2010-2013 թթ.	ՕՊԵԿ աջակցությամբ՝ «Շուկայավարման հնարավորություններն» վարկային ծրագիր:
2010-2013 թթ.	Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԳԶՄՀ) աջակցությամբ՝ «Շուկայական հնարավորություններն» վարկային ծրագիր + նույն կազմակերպության դրամաշնորհ:
2011-2016 թթ.	Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ՝ «Գյուղական կարողությունների ստեղծում» վարկային ծրագիր:
2012-2016 թթ.	ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ՝ «Գյուղական կարողությունների ստեղծում» վարկային ծրագիր:
2011-2019 թթ.	Համաշխարհային բանկի աջակցությամբ՝ համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության վարկային 1-ին և 2-րդ ծրագրեր:
2016-2021 թթ.	Համաշխարհային բանկի աջակցությամբ՝ համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության 1-ին և 2-րդ ծրագրերի շրջանակներում տրանսֆերտների տրամադրում գյուղական ենթակառուցվածքների վերականգնման և/կամ զարգացման նպատակով:
2010 թ.	Համաշխարհային բանկի աջակցությամբ՝ գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագիր, որը նախատեսվել է որպես լրացուցիչ ֆինանսավորում գյուղական համայնքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացման համար, նաև համաֆինանսավորման մաս կազմող ճապոնական դրամաշնորհ:
2010 թ.	Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԳԶՄՀ) և Նավթ արտահանող երկրների կազմակերպության (ՕՊԵԿ) աջակցությամբ՝ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման վարկային ծրագիր»:
2010 թ.	Ճապոնիայի կառավարության աջակցությամբ՝ «Իրամաշնորհային աջակցություն սակավ ապահով ֆերմերներին» ծրագրի շրջանակներում՝ Տավարաբուծության զարգացման ծրագրի ֆինանսավորում:
2010 թ.	Ճապոնիայի կառավարության աջակցությամբ՝ «Պարենային արտադրության ան» ծրագիր:
2010-2014 թթ.	Դանիական թագավորության աջակցությամբ՝ «Շուկայավարման հնարավորություններն» դրամաշնորհային ծրագիր:

<b>2010-2011 թթ.</b>	ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագիր:
<b>2013-2015 թթ.</b>	Համաշխարհային բանկի աջակցությամբ՝ «Մանդի անվտանգության կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագիր»:
<b>2016-2020 թթ.</b>	ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ՝ «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» վարկային ծրագիր:
<b>2018-2021 թթ.</b>	Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ «Գյուղատնտեսության ոլորտում քաղաքականության մոնիթորինգի և գնահատման կարողությունների զարգացման» դրամաշնորհային ծրագիր:
<b>2018-2019 թթ.</b>	ԱՄՆ-ի կառավարության աջակցությամբ՝ «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագիր:
<b>2017-2020 թթ.</b>	Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ՝ «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» վարկային ծրագիր:
<b>2018-2021 թթ.</b>	Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ՝ «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» դրամաշնորհային ծրագիր:
<b>2017-2021 թթ.</b>	Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի աջակցությամբ՝ «Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում» դրամաշնորհային ծրագիր:
<b>2017-2021 թթ.</b>	ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ՝ «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» վարկային ծրագրի շրջանակներում ոռոգման և ջրամատակարարման համակարգերի վերակառուցման ծրագիր:

Բացի աղյուսակ 3.2-ում ներառվածից, քննարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվել են ևս մի շարք վարկային ծրագրեր և դրամաշնորհներ, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ՝ թոչնագրիային հակազդելու վարկային, թոչնագրիային հակազդելու ճապոնական դրամաշնորհային ծրագրերը, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության կողմից տրամադրվող դրամաշնորհային ծրագիրը՝ գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստական աշխատանքների կազմակերպման և անցկացման համար, ԳԶՄՀ աջակցությամբ՝ «Գյուղական կարողությունների ստեղծում» վարկային ծրագիրը և այլն:

2010-2021 թթ.-ին գյուղատնտեսության զարգացումը խթանելու և ֆերմերներին տարբեր ուղղություններով օժանդակելու նպատակով իրականացվել են պետական աջակցության մի շարք ծրագրեր ու միջոցառումներ, որոնցից առանձնացնենք հողօգտագործողներին պետական աջակցության տրամադրումը, գյուղատնտեսության ոլորտին, գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ խաղողի, պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար

տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը, գյուղատնտեսական տեխնիկայի, ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցությունը, գյուղատնտեսության արդիականացմանը, անասնաբուծության զարգացմանը տրամադրվող պետական աջակցությունը:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվությունների<sup>98</sup> 2010-2021 թթ.-ին գյուղատնտեսության ոլորտում տարեկան կտրվածքով իրականացվել են պետական աջակցության 1-ից մինչև 15 ծրագրեր և միջոցառումներ, որոնք, ըստ տարիների, բաշխվել են այսպես՝ 2010-2011 թթ.-ին՝ 1-ական, 2012-2016 թթ.-ին՝ 2-ական, 2017 թ.-ին՝ 6, 2018 թ.-ին՝ 11, 2019 թ.-ին՝ 14, 2020-2021 թթ.-ին՝ 15: Եթե մինչև 2018 թ.-ը գյուղատնտեսության ոլորտի բոլոր ծրագրերի թվում պետական աջակցության ծրագրերի բաժինն առավելագույնը եղել է 25%՝ 2017 թ.-ին, ապա 2020 թ.-ին դա դարձել է ավելի քան 50%, իսկ 2021 թ.-ին՝ 71%:

Գյուղատնտեսության պետական աջակցության 15 ծրագրից 2-ն իրականացվել է գրեթե 10 տարի շարունակ, առանց ընդհատումների, 7-ը՝ սկսած 2017-2018 թթ.-ից, 2-ը՝ 2019 թ.-ից, իսկ 4 նոր ծրագրեր՝ սկսած 2020 թ.-ից: Միաժամանակ, 2019-2021 թթ.-ին պետական աջակցություն է ցուցաբերվել մի շարք միջոցառումների գծով:

Աշխարհի զարգացած պետությունների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետության և մասնավոր հատվածի համագործակցությունն արդյունավետ է, եթե բազմազանեցվում են գյուղատնտեսության վարման ընթացքում ծագող ռիսկերը, այսինքն՝ դրանք ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորմամբ բաշխվում են գյուղատնտեսությունում տնտեսավարողների, պետության և վարկավորող ինստիտուտի միջև:

Աղյուսակ 3.3-ից երևում է, որ գյուղատնտեսության դասի ծախսերի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ ուսումնասիրվող ժամանակահատվածի 12 տարիների ընթացքում երկու անգամ հատել է 2 անգամի սահմանը՝ 2015 թ.-ին 2014 թ.-ի նկատմամբ ավելացել է 109.4%-ով և 2021 թ.-ին նախորդ տարվա նկատմամբ՝ 109.8%-ով: Եվ սա այն պարագայում, երբ պետական բյուջեի ծախսերն ավելացել են համապատասխանաբար՝ 14%-ով և մոտ 6%-ով:

<sup>98</sup> Պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ (2010-2021թթ.),  
[https://www.minfin.am/hy/page/petakan\\_byujei\\_hashvetvutyun](https://www.minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun)

### Աղյուսակ 3.3

#### Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի և միջոցառումների գծով ծախսերի փոփոխությունները<sup>99</sup>

	Պետական բյուջեի ծախսերը՝ ընդամենը, փաստացի, մլրդ դրամ	Գյուղատնտե- սության դա- սի ծախսերը, փաստացի, մլրդ դրամ	Գյուղատնտեսու- թյան դասի ծախ- սերի փոփոխու- թյունը նախորդ տարվա նկատ- մամբ, %	Պետական բյուջեի ծախսերում գյու- ղատնտես. դասի վրա կատարված ծախսերի տեսա- կարար կշիռը, %	Գյուղատնտեսու- թյան դասի վրա կատարված ծախ- սերում պետական աջակցության ծախսերի բաժինը, %
2010	954.316	7.171	-	0.75	0.1
2011	986.509	5.808	81	0.6	24.1
2012	1006.102	9.106	156.8	0.9	12.9
2013	1142.890	9.333	102.5	0.8	12.2
2014	1235.053	9.651	103.4	1.78	14.7
2015	1408.996	20.209	209.4	1.4	18.8
2016	1449.064	27.087	134.0	1.9	13.3
2017	1504.802	10.517	39	0.7	19.8
2018	1447.083	9.576	91	0.7	27.3
2019	1629.4	8.101	85	0.5	49.6
2020	1,894.6	11.331	140	0.6	65.4
2021	2,004.3	23.773	209.8	1.2	75.0

Գյուղատնտեսության դասի վրա կատարված ծախսերում պետական աջակցության ծախսերի տեսակարար կշիռը 2010-2018 թթ.-ին միջինում կազմել է մոտ 13 տոկոս: Սկսած 2017-2021 թթ.-ից՝ նկատում ենք ցուցանիշի կայուն աճ՝ 19.8, 27.3, 49.6, 65.4 և 75.0%: 2021 թ.-ին 2020 թ.-ի նկատմամբ գյուղատնտեսության դասի վրա կատարված ծախսերը բացարձակ արտա-հայտությամբ ավելացել են 12.44 մլրդ դրամով, իսկ պետական աջակցության ծախսերը՝ 2021 թ.-ը 2020 թ.-ի նկատմամբ՝ 10.4 մլրդ դրամով:

Կարևորել ենք պետական աջակցության ծրագրերի և միջոցառումների սահմանային ծախսերի հաշվարկումը<sup>100</sup> (աղյուսակ 3.4): Բնականաբար, ուսումնասիրվող բոլոր տարիների համար հաշվարկ կատարել հնարավոր չէ, քանի որ այն տարիներին, երբ գյուղատնտեսության համախառն արտադ-րանքը նախորդ տարվա նկատմամբ նվազել է, ապա տնտեսագիտորեն ճիշտ արդյունք ստանալ չենք կարող:

<sup>99</sup> Հաշվարկները կատարել են հեղինակները՝ ՀՀ պետական բյուջեի տարեկան հաշվետվությունների (2010-2021 թթ.) հիման վրա, [https://www.minfin.am/hy/page/petakan\\_byujei\\_hashvetvutyun](https://www.minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun)

<sup>100</sup> Այս ցուցանիշը ցույց է տալիս, թե աջակցության ծախսերի մեկ դրամով ավելացումը քանի դրամով է ավելացնում գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը:

Պերական աջակցության ծրագրերի և միջոցառումների  
սահմանային ծախսերը<sup>101</sup>

	Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, մլրդ դրամ	Գյուղատնտեսության համախառն արտադրանքի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ, %	Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելացումը <sup>+</sup> , նվազումը <sup>-</sup> (բացարձակ արտահայտությամբ) մլրդ դրամ	Պերական աջակցության ծրագրերի և միջոցառումների ծախսերը, մլրդ դրամ	Պերական աջակցության ծրագրերի և միջոցառումների ծախսերի ավելացումը <sup>+</sup> , նվազումը <sup>-</sup> (բացարձակ արտահայտությամբ) մլրդ դրամ	Պերական աջակցության ծրագրե- րի և միջոցառումների սահմանային ծախսերը դրամ $\Delta$ համախառն արտադրանք $\Delta$ աջակցության ծախսեր
2010	636.7	-	-	0.008	-	-
2011	795.0	125	158.3	1.4	1.39	113.9
2012	841.5	106	46.5	1.17	-0.23	-
2013	919.1	109	77.6	1.18	0.01	7760
2014	983.3	107	64.2	1.42	0.24	267.5
2015	945.4	96	-37.9	3.8	2.38	-
2016	878.5	93	-66.9	3.6	-0.2	-334.5
2017	908.6	103	30.1	2.17	-1.43	-
2018	892.9	98	-15.7	2.62	0.45	-
2019	853.3	96	-39.6	4.02	1.4	-
2020	833.3	98	-20	7.41	3.39	-
2021	933	112	99.7	17.84	10.43	9.56

Այս հանգամանքը հաշվի առնելով՝ 5 տարիների համար ստացել ենք հետևյալ ցուցանիշները: 2011 թ.-ին աջակցության սահմանային ծախսը կազմել է 113.9 դրամ, 2013 թ.-ին՝ 7760 դրամ, և այսպիսի ավելացումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ տվյալ տարում գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալն ավելացել է 9%-ով, իսկ աջակցության ծախսերն ընդամենը՝ 0.85%-ով. նույն տարում գյուղատնտեսության դասի ծախսերի ավելացումը նախորդ տարվա նկատմամբ կազմել է ընդամենը 2.5%:

2021 թ.-ին առաջին անգամ հնարավոր է եղել հաշվարկել աջակցության սահմանային ծախսը 2015 թ.-ից հետո ընկած ժամանակահատվածում, որն էլ կազմել է 9.56 դրամ: Եթե հաշվի առնենք, որ 2021 թ.-ին 2020 թ.-ի նկատմամբ

<sup>101</sup> Հաշվարկները կատարել են հեղինակները՝ ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2015, էջ 290, <https://armstat.am/file/doc/99493653.pdf>, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2019, էջ 318, <https://armstat.am/file/doc/99516793.pdf>, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2021, էջ 351, <https://www.armstat.am/file/doc/99526883.pdf>, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 23, [https://armstat.am/file/article/sv\\_12\\_21a\\_122.pdf](https://armstat.am/file/article/sv_12_21a_122.pdf), ՀՀ պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ (2010-2021 թթ.), [https://www.minfin.am/hy/page/petakan\\_byujei\\_hashvetvutyun](https://www.minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun) նյութերի հիման վրա:



գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալն ավելացել է 12 տոկոսով, աջակցության ծախսերը՝ գրեթե 2.4 անգամ, և որ դրանք գյուղատնտեսության դասի վրա կատարված ծախսերում 75 տոկոս են, ապա ակնհայտ է, որ, շնորհիվ գյուղատնտեսությանը տրված աջակցության, ապահովվել է համապատասխան արտադրանքի ծավալների ավելացում:

## 3.2

### **ՀՀ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի արդյունավետության գնահատումը՝ նպատակադրումներից շեղումների մոտեցմամբ**

Գյուղատնտեսության ոլորտում պետական քաղաքականության արդյունավետության դիտարկումը կարևոր է և անհրաժեշտ՝ դրանում առկա բացերի մատնանշման և առաջարկությունների ձևավորման տեսանկյունից: Անժխտելի է, որ այդ ծրագրերի արդյունավետության գնահատման հիմքերն են.

- աջակցության արդյունքում արտադրության ծավալների և ստացված եկամտի ավելացումը,
- արտադրված արտադրանքի ինքնարժեքի իջեցումը, շահույթի ավելացումը և աշխատանքի արտադրողականության բարձրացումը,
- գյուղատնտեսական տեխնիկայի նորացումը և շահագործման ծախսերի կրճատումը,
- գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի, ինչպես նաև կենդանիների առողջության ցուցանիշների բարելավումը,
- ոռոգվող տարածքների ավելացումը և միավոր տարածության հաշվով ոռոգման ջրի գերնորմատիվային ծախսերի կրճատումը,
- արտոնյալ վարկերի ներգրավումով ինտենսիվ այգիների տարածքի ավելացումը և նորամուծական տեխնոլոգիաներով անասնաշենքերի և այլ ենթակառուցվածքների հզորության մեծացումը:

Պետական աջակցության միջոցների և նշված արդյունքային ցուցանիշների համադրումը իրական հնարավորություն կընձեռի ըստ էության բացահայտելու ծախսված միջոցների արդյունավետությունն ու աջակցության ծրագրերի նպատակահարմարությունը: Սակայն, այս մեթոդից լիարժեքորեն օգտվել հնարավոր չէ, քանի որ անհրաժեշտ ելակետային տվյալները, հատկապես՝ շահառուների ծախսերը և արդյունքային ցուցանիշները վիճակագրական ծառայությունը չի հրապարակում: Մյուս կողմից, նկատի չի առնվում

ծրագրերի իրականացման լազի կամ ժամանակահատվածի գործոնը, որի ընթացքում արդյունքային ցուցանիշներն աստիճանաբար հասնում են առավելագույն մակարդակի: Հետևաբար, որպես օժանդակության ծրագրերի անուղղակի գնահատման հնարավորություն, օգտագործվել են ծրագրային նպատակադրումներից շեղումները և շահառուների շրջանում կատարված հարցումները:

Ներկայում ՀՀ-ում իրականացվող գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից հրապարակվող տարեկան հաշվետվությունների և պետական բյուջեի հաշվետվությունների համադրությամբ առանձնացրել ենք նպատակադրումներից շեղումները:

### **1. Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր:**

Կարծում ենք՝ անհրաժեշտ է ըստ ամենայնի մեկնաբանել յուրաքանչյուր ծրագրի նպատակը, խնդիրները, շահառուների շրջանակը, արտադրության վրա ներգործության լծակները և սպասվող արդյունքները: Ահավասիկ, այդ տրամաբանությամբ անդրադառնանք գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրին: Այս ծրագիրը շուրջ մեկ տասնամյակի պատմություն ունի: ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 12-ի N706-Ն որոշմամբ հաստատվել էր «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման փորձնական նախագիծը»: Նախագծի գործողության ժամկետը մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ն էր: Փորձնական նախագծով սուբսիդավորվել են Շիրակի մարզի Ամասիայի և Աշոցքի, Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանների 60 համայնքի գյուղատնտեսական գործունեություն իրականացնողներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքները: Այս պիլոտային ծրագիրը ներառում էր գյուղական համայնքների գրեթե 7 տոկոսը և գործեց մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը: Հիմք ընդունելով ծրագրի դրական արդյունքները՝ ՀՀ կառավարությունը 2011 թվականի մարտի 31-ի N349-Ն որոշմամբ հաստատեց «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգը», որի համաձայն՝ 2011 թվականի ապրիլի 1-ից իրականացվել է վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման առավել ընդգրկուն ծրագիր: Սուբսիդավորվող վարկերը տրամադրվել են հայկական դրամով՝ մինչև 3.0 մլն դրամ, 2 տարի ժամկետով և 14% տոկոսադրույքով: Սուբսիդավորվել է վարկերի տոկոսադրույքի 4, իսկ հանրապետության առավել կարիքավոր 225 համայնքների վարկառուների վարկերի տոկոսադրույքի 6 տոկոսային կետին համարժեք մասը: Այնուհետև 2015 թվականից ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N139-Ն որոշմամբ հանրապետության բոլոր համայնքների համար սահմանվել է տոկոսադրույքների 6 տոկոսային կետին համարժեք մասի սուբսիդավորում: Ինչպես

մայր գումարի մարման, այնպես էլ տոկոսադրույքի վճարման համար արտոնյալ ժամկետ է սահմանվել առնվազն 6 ամիսը: Ընդհանուր առմամբ, 2011 թվականի ապրիլի 1-ից մինչև 2017 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում տրամադրվել է շուրջ 127.5 հազար միավոր վարկ՝ 106.4 մլրդ դրամ գումարով, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 5.1 մլրդ դրամ:

ՀՀ կառավարության 2017 թ. սեպտեմբերի 14-ի նիստի N39 արձանագրային որոշմամբ ընդունվել է «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» նոր ծրագիր, որի հիմնադրույթները կտրուկ կերպով տարբերվում են նախորդից: Այս ծրագրով, որը գործողության մեջ էր մտել 2017 թ. երրորդ եռամսյակից և շարունակվելու էր մինչև 2021 թվականը, վարկերը տրամադրվում էին ՀՀ դրամով, առավելագույնը 14% անվանական տոկոսադրույքով, 3-10 մլն դրամ գումարի սահմաններում: Վարկավորման ժամկետը սահմանվում էր մինչև 5 տարի, ներդրումների կառուցվածքում շրջանառու միջոցների տեսակարար կշիռը 30%-ից ավելին կազմելու դեպքում վարկավորումն իրականացվելու էր մինչև 2 տարի ժամկետով, իսկ հիմնական միջոցների 70% և ավելին կազմելու դեպքում՝ մինչև 5 տարի ժամկետով:

Ի դեպ, սահմանամերձ բնակավայրերի և գյուղատնտեսական կոռպորատիվների համար վարկերի տոկոսադրույքը նախատեսվում է սուբսիդավորել այնպիսի չափաքանակով, որ վարկերը տնտեսավարողներին տրամադրվեն 3%, իսկ հանրապետության մնացած համայնքներին՝ 5% տոկոսադրույքով: Ինչպես տոկոսադրույքի, այնպես էլ մայր գումարի համար ֆինանսական կառույցը կարող է սահմանել արտոնյալ ժամկետ՝ առավելագույնը 12 ամիս:

Ինչպես նկատում ենք, այս ծրագրով գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման պայմանները նկատելիորեն բարելավվել են, բայց, դրա հետ մեկտեղ, փոխվել են շահառուները: Միանգամայն ակնհայտ է, որ այս ծրագրից հիմնականում կարող էին օգտվել խոշոր հողօգտագործողները և կոռպորատիվները: Ինչպես նշվում է ծրագրում. «...կարևորագույն խնդիր է վարկերի նպատակայնության մակարդակի բարձրացումը, վարկերի գումարի և վարկավորման ժամկետների ավելացման միջոցով դրանց նպատակաուղղումը տնտեսությունների խոշորացմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը և տնտեսավարողների գիտելիքների մակարդակի բարձրացմանը»<sup>102</sup>: Այսպիսի մոտեցումը հիմնովին արդարացված է, եթե այն չիրագործվի մնացած գյուղացիական տնտեսությունների հաշվին: Փաստորեն, եթե նախորդ ծրագրով աջակցություն էր ցուցաբերվում հատկապես գյուղացիական տնտեսություններին, ապա այս ծրագիրը նրանց զրկում է այդ

<sup>102</sup> Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր, <http://minagro.am/public/uploads/2015/02/QaxvackENX303.pdf>, էջ 3:

հնարավորությունից: Գիտակցելով, որ այս հետևությունը կարող է վիճահարույց լինել, փորձենք հիմնավորել փաստերով:

ՀՀ գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսությունները և նրանց բաժին ընկնող գյուղատնտեսական նշանակության հողերը<sup>103</sup>

Աղյուսակ 3.5

	Տարևա- թյուններ՝ ընդամենը (միավոր)	Որից՝		Գյուղատնտեսա- կան նշանակության հողերը, ընդամենը (հազ. հա)		Գյուղ. նշանակու- թյան հողերի միջինը մեկ տնտեսության հաշվով (հա)	
		Ֆիզիկա- կան անձ	Իրավա- բանա- կան անձ	Ֆիզիկա- կան անձ	Իրավա- բանա- կան անձ	Ֆիզիկա- կան անձ	Իրավա- բանա- կան անձ
ՀՀ ընդամենը այդ թվում՝	360611	345875	342	513.00	21.399	1.48	62.57
Արագածոտն	31795	30919	8	64.478	0.464	1.99	58.06
Արարատ	49116	48024	37	34.496	0.680	0.72	18.38
Արմավիր	41960	39491	43	56.946	7.836	1.44	182.23
Գեղարքունիք	53639	53356	10	90.233	0.366	1.69	36.70
Լոռի	37646	35712	29	59.830	2.519	1.68	86.86
Կոտայք	37764	36211	28	43.843	1.565	1.21	55.92
Շիրակ	31695	30926	47	78.423	1.210	2.54	25.76
Սյունիք	21361	20251	42	40.747	1.368	2.01	32.59
Վայոց ձոր	10384	9969	26	17.531	0.530	1.76	20.42
Տավուշ	35978	33755	48	29.147	4.241	0.86	88.37
ք. Երևան	9273	7262	24	0.321	0.614	0.04	25.61

Գյուղատնտեսության համատարած հաշվառման արդյունքները վկայում են, որ 2014 թ. դրությամբ ՀՀ-ում հաշվարկվել է գյուղատնտեսական գործունեություն իրականացնող 360611 տնտեսություն, որից ֆիզիկական անձի կարգավիճակ և գյուղատնտեսական նշանակության հողատարածություն ունի 345875, իսկ իրավաբանական անձի կարգավիճակ և գյուղատնտեսական հողեր՝ ընդամենը 342 տնտեսություն (աղյուսակ 3.5): Ի դեպ, մեկ տնտեսությանը համապատասխանաբար բաժին է ընկնում 1.48 և 62.57 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածություն, որից վարելահող, համապատասխանաբար՝ 1.0 և 15.5 հա:

2017 թ.-ին Գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) տվյալների հիման վրա հաշվարկվել են նաև հիմնական մշակաբույսերի 1 հա-ի հաշվով մշակության և բերքահավաքի ծախսերը (աղյուսակ 3.6): Եթե նկատի ունենանք, որ գյուղացիական տնտեսությունները վարկ են վերցնում հիմնականում շրջանառու միջոցների ձեռքբերման և ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու նպատակով, ապա նրանց հայտը չի

<sup>103</sup> Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները/ ՀՀ ԱՎԾ. – Եր.: Տիգրան Մեծ, 2016, էջ 31:

կարող բավարարել 3 մլն-ից ավելի գումարի և դրա ոչ պակաս 70 տոկոսը հիմնական միջոցներին ուղղորդելու սուբսիդավորվող տոկոսադրույքով վարկերի պահանջները: Այսինքն՝ վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման ծրագիրը բացառապես վերաբերում է խոշոր տնտեսություններին, որոնց թիվն ընդամենը հաշվառված տնտեսությունների 2%-ից էլ պակաս է, իսկ մնացած 98% կազմող գյուղացիական տնտեսությունները ոչ միայն զրկվում են արտոնյալ վարկերից, այլև հայտնվում անհավասար մրցակցային պայմաններում: Փաստորեն, հարուստներն ավելի են հարստանում, իսկ աղքատներն ավելի են աղքատանում՝ դրանից բխող սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական բացասական հետևանքներով հանդերձ:

### Աղյուսակ 3.6

*Հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության և բերքահավաքի հաշվարկային ծախսերն ըստ 1 հեկտարի<sup>104</sup>*

h/h	Մշակաբույսերը	Ծախսերը	h/h	Մշակաբույսերը	Ծախսերը
1.	Խաղող	1645	11.	Պղպեղ	1478
2.	Խնձոր	341	12.	Զմբուկ	1202
3.	Ծիրան	683	13.	Կաղամբ	1218
4.	Դեղձ	658	14.	Եգիպտացորեն հատիկի	434
5.	Տանձ	316	15.	Առվույտ	650
6.	Կեռաս	898	16.	Լոբի	496
7.	Սալոր	1166	17.	Աշնանացան ցորեն	320
8.	Սեխ	1016	18.	Գարնանացան գարի	280
9.	Գլուխ սոխ	462.9	19.	Լոլիկ	1500
10.	Սմբուկ	1478	20.	Վարունգ	1279

Պետք է խոստովանել, որ գործադիրը շեշտադրել է վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի պայմանների վերանայման հիմնական նպատակները, որոնք են՝ վարկերի նպատակայնության մակարդակի բարձրացում, վարկերի գումարի և վարկավորման ժամկետների ավելացման միջոցով դրանց նպատակաուղղում տնտեսությունների խոշորացմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը և տնտեսավարողների գիտելիքների մակարդակի բարձրացմանը<sup>105</sup>: Ինչ խոսք, կարևոր նպատակներ են, սակայն դրանց իրականացումը գյուղացիական տնտեսություններին արտոնյալ վարկերից զրկելու հաշվին, մեղմ ասած, անարդարացի է: Այստեղ ակնհայտ երևում է ինչպես ՀՀ պետական բյուջեի սուղ միջոցները խոշոր հողատերերին տրամադրելու միտումը, այնպես էլ առևտրային բանկերի լոբբինգը: Հատկապես վերջիններիս համար վերանայված պայմանները նպաստավոր են, քանի որ նվազեցնում են նրանց գործառնական ծախսերը:

<sup>104</sup> Հաշվարկները կատարվել են Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) տվյալների հիման վրա:

<sup>105</sup> Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր, <http://minagro.am/public/uploads/2015/02/QaxvackENX303.pdf>, էջ 3:


Ծրագրի հիմնական նպատակն է հանրապետության ագրոպարենային ոլորտում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման, վարկավորման պայմանների բարելավման միջոցով նպաստել կապիտալ ներդրումների ծավալների ավելացմանը, արտադրական հզորությունների ընդլայնմանը, տնտեսությունների խոշորացմանն ու զարգացմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, գյուղատնտեսության արտադրողականության մակարդակի բարձրացմանը և արտադրության ծավալների ավելացմանը<sup>106</sup>:

Բյուջեի հաշվետվությունները վկայում են, որ 2012-2021 թթ.-ի ընթացքում այս ծրագիրը հիմնականում չի թերակատարվել: Սա կապված է այն հանգամանքի հետ, որ առավել լայն շրջանակների է հասանելի (ինչի մասին հավաստում են նաև իրականացրած հարցումները) և ավելի իրազեկված են ծրագրի մասին, հետևաբար՝ շահառուների թիվն ավելի մեծ է:

### Աղյուսակ 3.7

ՀՀ պետական բյուջեով նախատեսված և փաստացի իրականացված  
ծրագրերի արդյունքային ցուցանիշները, հազ. դրամ<sup>107</sup>

	Տարեկան պլան	Տարեկան ճշգրտված պլան	Փաստ	Կատարման %
2018	2,030,865.80	1,230,865.80	1,230,865.80	100
2019	2,030,865.80	2,294,037.70	2,294,037.70	100
2020	2,151,037.70	4,941,047.70	4,941,047.0	100
2021	4,027,062.40	9,763,922.70	9,763,922.63	100



### Գծապատկեր 3.1

Աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի քանակը և ծավալը<sup>108</sup>


<sup>106</sup> Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2019 թվականի N184-Լ որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140713>

<sup>107</sup> ՀՀ պետական բյուջեի 2017-2021 թթ. հաշվետվություններ, [https://minfin.am/hy/page/petakan\\_byujei\\_hashvetvutyun/](https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/)

<sup>108</sup> ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Տարեկան հաշվետվություն, Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր 2020, Երևան, 2021, [https://mineconomy.am/media/18869/Programs\\_Arm4.pdf](https://mineconomy.am/media/18869/Programs_Arm4.pdf), ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի 2021 թ. տարեկան հաշվետվություն, Երևան, 2022, <https://mineconomy.am/media/18884/hashvet%202021.pdf>

2020 թ.-ի կորոնավիրուսի չեզոքացման ծրագրի շրջանակներում վարկերը հասանելի էին 0% տոկոսադրույքով, որը շարունակվել է նաև 2021 թ.-ին՝ հանգեցնելով վարկավորման քանակի և ծավալի կտրուկ աճի:

Դիտարկելով գյուղատնտեսության ոլորտի ընդհանուր վարկերի շարժընթացը՝ տեսնում ենք, որ եթե 2017 թ.-ին նույն չափով ավելացել՝ հասնելով 2016 թ.-ի մակարդակին: Նշվածից կարող ենք եզրակացնել, որ պետության կողմից ոլորտին ուղղված պետական օժանդակությամբ իրականացվող ծրագրերն արդեն իսկ դրական ազդեցություն են ունենում՝ վերականգնելով գյուղատնտեսական վարկերի նախկին մակարդակը:



### Գծապատկեր 3.2

Գյուղատնտեսության ոլորտի վարկեր, ընդհանուր, մլն դրամ  
(ժամանակահատվածի վերջի դրությամբ)<sup>109</sup>

Այս համատեքստում եթե դիտարկենք, ապա բանկերի վարկային պորտֆելում գյուղատնտեսության ոլորտի չաշխատող վարկերը մեծ կշիռ չունեն ընդհանուր չաշխատող վարկերի կառուցվածքում, և շարժընթացը հիմնականում կայուն է<sup>110</sup>: Սակայն, այստեղ խնդիրը առավելապես կապված է աջակցության ծրագրի թիրախայնության հետ: Հարցն այն է, որ աջակցություն տրամադրելուց հետո գրեթե հնարավոր չէ հետևել դրա ընթացքին և գնահատել արդյունավետությունը:

**2. Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր:**

<sup>109</sup> ՀՀ ԿԲ, Դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն,  
<https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

<sup>110</sup> ՀՀ ԿԲ, ՀՀ ԿԲ տեղեկագրեր,  
<https://www.cba.am/am/SitePages/pperiodicals.aspx?Category=%D5%80%D5%80%20%D4%BF%D4%B2%20%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80&pDate=0>

Ծրագիրը մեկնարկել է 2017 թ.-ի ապրիլին՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թ. մարտի 16-ի N11-31 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի»։ Այս ծրագրի կարևորությունը շատ մեծ է, ուստի նպատակահարմար ենք գտնում առավել հանգամանորեն անդրադառնալ այն իրավիճակին, որով պայմանավորված է դրա իրականացումը։

Մեր հաշվարկները ցույց են տալիս, որ ներկայում շահագործվող տրակտորների միայն 9%-ը և հացահատիկահավաք կոմբայնների 3.27%-ը ունեն մինչև 10 տարվա շահագործման ժամկետ։ Ավելին, տրակտորների 80%-ը և հացահատիկահավաք կոմբայնների 84%-ը շահագործվում են ավելի քան 26 տարի (աղյուսակ 3.8)։

ՀՀ-ում առկա գյուղատնտեսական տեխնիկայի խմբավորումն ըստ օգտագործման տարիների<sup>111</sup>

Աղյուսակ 3.8

Խմբերն ըստ օգտագործման տարիների	Տրակտոր				Ընդամենը՝ տրակտոր		Հացահատիկահավաք կոմբայն	
	Թրթուրավոր		Անիվավոր					
	հար	%՝ ընդ. նկատմամբ	հար	%՝ ընդ. նկատմամբ	հար	%՝ ընդ. նկատմամբ	հար	%՝ ընդ. նկատմամբ
1	2	3	4	5	6	7	8	9
1-ին խումբ՝ 1-5 տարի	5	0.10	879	8.26	884	5.78	21	1.45
2-րդ խումբ՝ 6-10 տարի	4	0.08	493	4.63	497	3.25	26	1.82
3-րդ խումբ՝ 11-15 տարի	-	-	474	4.45	474	3.10	58	4.05
4-րդ խումբ՝ 16-20 տարի	-	-	276	2.59	276	1.80	46	3.22
5-րդ խումբ՝ 21-25 տարի	3	0.06	12	0.11	15	0.09	-	-
6-րդ խումբ՝ 26-30 տարի	1414	30.46	2852	26.79	4266	27.91	108	7.55
7-րդ խումբ՝ 30-35 տարի	1455	31.35	2850	26.78	4305	28.16	531	37.15
8-րդ խումբ՝ 36 տարուց ավելի	1769	38.11	2806	26.36	4575	29.93	561	39.25
Ընդամենը	4641	100	10642	100	15283	100	1429	100

<sup>111</sup> Աղյուսակը կազմել են հեղինակները՝ ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության տեխնիկայի պետական տեսչության տվյալների (2017 թ. օգոստոսի 1-ի դրությամբ)։



Որպես կանոն, գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման օպտիմալ ժամկետը 8-12 տարի է, ուստի գերնորմատիվային ժամկետում շահագործումը հանգեցնում է կատարված աշխատանքի միավորի հաշվով շահագործման ծախսերի ավելացման, տեխնիկայի արտադրողականության նվազման և վերջին հաշվով մեքենայացման մակարդակի իջեցման ու արտադրվող արտադրանքի ինքնարժեքի բարձրացման: Մեր ուսումնասիրությունների արդյունքում կատարված խմբավորման տվյալները ցույց են տալիս, որ անիվավոր և թրթուրավոր տրակտորների 20-30 տարի շահագործման դեպքում շահագործման ծախսերն ավելանում են 32%-ով, ժամային արտադրողականությունն իջնում է 33 %-ով, իսկ վառելիքի ծախսն ավելանում է մոտ 78%-ով, իսկ 30 տարուց ավելի շահագործելու դեպքում այդ ցուցանիշները կազմում են համապատասխանաբար՝ 57, 40 և 94% (աղյուսակ 3.9):

*Անիվավոր և թրթուրավոր տրակտորների խմբավորումն ըստ շահագործման ժամկետների (2017 թ. օգոստոսի 1-ի դրությամբ)*

**Աղյուսակ 3.9**

Խմբերը	Շահագործման ժամկետը, տարի	Տրակտորների թիվը, հար	Տեսակարար կշիռը, %	Շահագործման ծախսի փոփոխությունը, %	Ժամային արտադրողականության փոփոխությունը, %	1 էտարնային հա-ի հաշվով վառելիքի ծախսը, կգ
I	1-10	1370	8.96	100	100	18
II	11-20	761	4.98	118	85	25
III	21-30	3267	21.37	132	77	32
IV	30 տարուց ավելի	9885	64.68	157	60	35
	Ընդամենը	15283	100.0	x	x	27,5

Դժվար չէ հաշվարկել, թե զուտ մեքենատրակտորային հավաքակալանի անբավարար համալրման և ծայրաստիճան մաշվածության պատճառով հանրապետության գյուղատնտեսությունն ինչ ծավալի կորուստ ու գերաժախս է ունենում: Ուստի պետք արձանագրել, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 16-ի՝ «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրին հավանություն տալու մասին» N11 արձանագրային որոշումը կարևոր քայլ է գյուղատնտեսության ամենահրատապ խնդիրներից մեկի՝ մեքենատրակտորային հավաքակալանի նորացման ու հագեցման համար: Այդ ծրագրի ամենագնահատելի միջոցառումը գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգատուներին՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց ցուցաբերվող պետական աջակցությունն է: Այդ աջակցությունը դրսևորվում է գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի հետևյալ պայմաններով<sup>112</sup>.

<sup>112</sup> <http://www.irtek.am/views/act.aspx?aid=89131>

- ա. կոմբայնների համար՝ 10 տարի մարման ժամկետ, լիզինգի տարեկան մինչև 9% տոկոսադրույք, որի 7 տոկոսային կետը սուբսիդավորում է,
- բ. տրակտորների համար՝ 6 տարի մարման ժամկետ, լիզինգի տարեկան մինչև 9% տոկոսադրույք, որի 7 տոկոսային կետը սուբսիդավորում է,
- գ. հավաքիչ-մամլիչների, շարքացանների համար՝ 3-6 տարի մարման ժամկետ, լիզինգի տարեկան մինչև 9% տոկոսադրույք, որի 7 տոկոսային կետը սուբսիդավորում է,
- դ. այլ գյուղատնտեսական տեխնիկայի համար՝ 3 տարի մարման ժամկետ, տարեկան մինչև 9% տոկոսադրույք, որի 7 տոկոսային կետը սուբսիդավորում է:

Ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալների՝ ծրագիրը գործողության մեջ մտնելուց հետո՝ ապրիլի 1-ից մինչև հուլիսի 30-ը, դրանից օգտվել է 43 շահառու, որը ձեռք է բերել 44 տրակտոր և 35 գյուղգործիչ: Իհարկե, ծրագիրը դեռևս նոր է, ակտիվությունն աստիճանաբար կարող է մեծանալ, բայց 2017 թ.-ի համար ծրագրավորված 120 մլն դրամ աջակցության շրջանակներում կնքված գործարքների տեմպը ցածր է:

Մեր կարծիքով, դրա հիմնական պատճառը դարձյալ հնարավոր լիզինգատուների ցածր վճարունակությունն է: Ուստի առաջարկում ենք կիրառել առավել մատչելի տարբերակ՝ լիզինգատուի ընտրությամբ սուբսիդավորել կա՛մ լիզինգի տոկոսադրույքը, կա՛մ 20% կանխավճարի գումարը:


Տրակտորների և հիմնական գյուղգործիքների համար կանխավճարի և 9% տոկոսադրույքի գումարի տարբերությունը չնչին է: Այսպես՝ ամենապահանջված՝ 85-ձիաուժանոց տրակտորի համար 20% կանխավճարը կազմում է 1.63 մլն դրամ, իսկ լիզինգի տոկոսադրույքի գումարը՝ 1,78 մլն դրամ, իսկ 50-ձիաուժանոց տրակտորի համար, համապատասխանաբար՝ 1.48 և 1.62 մլն դրամ: Իհարկե, տոկոսադրույքը հաշվարկված է լիզինգի ամբողջ ժամկետի (6 տարվա) համար, իսկ կանխավճարը պետք է սուբսիդավորել գործարքի սկզբում, որը կարող է սահմանափակել աջակցության տարեկան գումարի շրջանակում իրականացվող գործարքների թիվը: Այդուհանդերձ, նկատի ունենալով ծրագրի իրականացման տեմպի արագացման անհրաժեշտությունը, կարելի է լիզինգատուներին առաջարկել նաև երկրորդ տարբերակը: Այսինքն՝ պետական աջակցության գումարի շրջանակում լիզինգատուն կարող է ընտրել տոկոսադրույքի կամ կանխավճարի սուբսիդավորման տարբերակը:

Ինչ վերաբերում է հացահատիկահավաք կոմբայնին, ապա այստեղ կանխավճարի գումարը (6,55 մլն) մոտ 2 անգամ փոքր է 7% սուբսիդավորման գումարից, ուստի այս դեպքում կարող է կիրառվել միաժամանակ երկու ցուցանիշով սուբսիդավորման տարբերակը:

Կարծում ենք՝ անգամ լիզինգի աջակցության գործող կառուցակարգի պայմաններում հատկապես ֆիզիկական անձանց համար դժվար է վճարել

լիզինգի առարկայի արժեքի 20% կանխավճարի գումարը, որն արգելակում է ծրագրի ցանկալի տեմպերով իրականացումը: Պետության օժանդակությամբ կանխավճարի արգելքը հաղթահարելուց հետո ձեռք բերված գյուղատնտեսական տեխնիկան լիզինգատուին լրացուցիչ եկամուտ կբերի, որի շնորհիվ՝ առավել դյուրին կլինի փակել լիզինգի մայր գումարը և տոկոսը:

Այդուհանդերձ, անդրադառնանք ծրագրի իրականացման ընթացքին: Ինչպես երևում է գծապատկեր 3.3-ից, 2019 թ. 2018 թ.-ի նկատմամբ լիզինգի գումարն աճել է 800 մլն դրամով, լիզինգատուների թիվն ավելացել է 84-ով՝ 63%-ով, սակայն տեխնիկայի քանակը՝ ընդամենը 3 հատով: Մինչդեռ 2020 թ. լիզինգի գումարն աճել է 700 մլն դրամով, լիզինգատուների թիվը՝ 173-ով, իսկ տեխնիկան՝ 281 հատով:



**Գծապատկեր 3.3**

2017-2021 թթ. ձեռք բերված գյուղատնտեսական տեխնիկայի քանակը, լիզինգի գումարը և լիզինգատուների թիվը<sup>113</sup>

Պետական բյուջեի հաշվետվություններում լիզինգատուների թվի աճը հիմնականում պայմանավորվում է իրազեկման մակարդակի բարձրացմամբ և 2020 թ.-ին տրամադրվող 0% տոկոսադրույքով լիզինգի արտոնությամբ:

Ինչպես տեսնում ենք, պետական բյուջեի հաշվետվությունների համաձայն, ծրագիրը լիարժեքորեն իրականացվել է միայն 2021 թվականին: Առա-

<sup>113</sup> Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության N105-Լ որոշում, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159858>, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման արդյունքների մասին ՀՀ գյուղատնտեսության նախարարության հաշվետվությունը, <http://old.minagro.am/public/uploads/2018/01/05Hashvetvutyun2017.pdf>, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Տարեկան հաշվետվություն, Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր 2020, Երևան, 2021, [https://mineconomy.am/media/18869/Programs\\_Arm4.pdf](https://mineconomy.am/media/18869/Programs_Arm4.pdf), ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի 2021 թ. տարեկան հաշվետվություն, Երևան, 2022, <https://mineconomy.am/media/18884/hashvet%202021.pdf>

ջին տարում 89.8% թերակատարումը կարող է կապված լինել այն հանգամանքների հետ, որ ծրագիրը սկսել են ուշ՝ տարվա երկրորդ եռամսյակում, ինչպես նաև հասարակությանը բավարար չափով չեն իրազեկել դրա մասին:

*ՀՀ պետական բյուջեով նախատեսված և փաստացի իրականացված ծրագրերի արդյունքային ցուցանիշները, հազ. դրամ<sup>114</sup>*

Աղյուսակ 3.10

	Տարեկան պլան	Տարեկան ճշգրիտ պլան	Փաստ	Կատարման %
2017	-	120,000.0	12,245.26	10.20
2018	270,000.0	80,000.0	67,702.68	84.63
2019	192,500.00	192,500.0	146,448.02	76.08
2020	192,500.00	267,500.0	254,451.5	95.1
2021	285,118.4	497,936.8	497,936.8	100

ՀՀ պետական բյուջեի հաշվետվությունների մեջ 2019 թ.-ի և 2020 թ.-ի թերակատարումը հիմնավորվում է վարկերի արտոնյալ ժամկետով, ինչպես նաև որպես 2020 թ. թերակատարման պատճառ նշվում է այն, որ հիմնականում ձեռք է բերվել առավել մատչելի գներով տեխնիկական և գյուղատնտեսական գործիքներ, որոնց արժեքը բավական ցածր է ինքնագնաց տեխնիկայի նկատմամբ: Սակայն, այստեղ հարց է ծագում. արդյո՞ք գնված գործիքներն այն արդյունավետությունը կարող են ապահովել, ինչը որ կապահովվեր համապատասխան տեխնիկայի ձեռքբերմամբ:

**3. Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր:**

Աղյուսակ 3.11-ից նկատում ենք, որ 2018-2021 թթ. ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի պետական աջակցության ծրագրի գծով բոլոր տարիներին առկա են թերակատարումներ: Մասնավորապես՝ 2019-2021 թթ. ծրագիրը թերակատարվել է 67.7, 20.8 և 1.8 տոկոսով, մինչդեռ բյուջեի հաշվետվություններում ներկայացված վարկառուների վերաբերյալ արդյունքային ցուցանիշները գերակատարվել են: Հաշվետվության մեջ թերակատարման վերաբերյալ մեկնաբանվում է նաև, որ դա հիմնականում պայմանավորված է եղել ծրագրով ձեռք բերվող սարքավորումների արժեքի միջինացված գներով հաշվարկով, մինչդեռ տնտեսավարողները դրանք ձեռք են բերել նախատեսված միջինից ավելի ցածր գներով:

<sup>114</sup> ՀՀ պետական բյուջեի 2017-2021 թթ. հաշվետվություններ, [https://minfin.am/hy/page/petakan\\_byujei\\_hashvetvutyun/](https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/)

Աղյուսակ 3.11

ՀՀ պետական բյուջեով նախատեսված և փաստացի իրականացված  
ծրագրերի արդյունքային ցուցանիշները, հազ. դրամ<sup>115</sup>

	Տարեկան պլան	Տարեկան ճշգրտված պլան	Փաստ	Կատարման %
2018	-	9,360.8	147.81	1.58
2019	450,352.60	150,352.60	48,607.39	32.33
2020	450,352.60	275,000.0	217,863.5	79.2
2021	550,635.8	985,118.2	967,462.9	98.2

**4. Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր:**

Ծրագրի նպատակը հանրապետության տարածքում գործող գյուղատնտեսական հումք մթերող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումն է<sup>116</sup>:

Հնայած նրան, որ ծրագիրը գործում է 2017 թվականից, առաջին շահառուները գրանցվել են միայն 2018 թվականին: 2017 թ.-ին ծրագրի շրջանակներում տրամադրվել է 19 վարկ՝ 1310.9 մլն դրամ գումարով, կնքվել է բերքի գնման 919 պայմանագիր<sup>117</sup>: 2018-2021 թթ. ծրագրի շահառուների թիվը կազմել է համապատասխանաբար՝ 7, 100, 186 և 342: Հետաքրքրաշարժ է, որ, չնայած շահառուների կտրուկ աճին, նվազել է ընդհանուր տրամադրված վարկերի գումարը: Սակայն, փոքր-ինչ աճել է տրամադրված սուբսիդավորման գումարը: Եթե 2020 թվականին այն կազմել է 22.3 մլրդ դրամ՝ 703.4 մլն դրամ սուբսիդավորման գումարով, ապա 2021 թվականին՝ 10.6 մլրդ դրամ՝ 2.7 մլրդ դրամ սուբսիդավորման գումարով<sup>118</sup>:

Բացի դրանից, շահառուների թվի կտրուկ աճը պայմանավորված է կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառման շրջանակ-

<sup>115</sup> ՀՀ պետական բյուջեի 2017-2021 թթ. հաշվետվություններ,  
[https://minfin.am/hy/page/petakan\\_byujei\\_hashvetvutyun/](https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/)

<sup>116</sup> Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2019 թվականի N201-Լ որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=153951>

<sup>117</sup> ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման արդյունքների մասին ՀՀ գյուղատնտեսության նախարարության հաշվետվություն,  
<http://old.minagro.am/public/uploads/2018/01/05Hashvetvutyun2017.pdf>

<sup>118</sup> ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Տարեկան հաշվետվություն, Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր 2020, Երևան, 2021, [https://mineconomy.am/media/18869/Programs\\_Arm4.pdf](https://mineconomy.am/media/18869/Programs_Arm4.pdf),  
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի 2021 թ. տարեկան հաշվետվություն, Երևան, 2022,  
<https://mineconomy.am/media/18884/hashvet%202021.pdf>

ներում զրոյական տոկոսադրույքով տրամադրված վարկերով՝ արդյունքում հանգեցնելով նախատեսվածից շատ շահառուների:

*ՀՀ պետական բյուջեով նախատեսված և փաստացի իրականացված  
ծրագրերի արդյունքային ցուցանիշները, հազ. դրամ<sup>119</sup>*

Աղյուսակ 3.12

	Տարեկան պլան	Տարեկան ճշգրիտ պլան	Փաստ	Կատարման %
2017	-	70,422.00	7,226.20	10.26
2018	998,901.40	345,637.20	162,157.10	46.92
2019	998,901.40	598,901.40	367,044.13	61.29
2020	998,901.40	703,401.4	703,401.4	100
2021	1,633,031.2	2,684,594.7	2,684,594.5	100

Եթե դիտարկենք բյուջեի կատարման հաշվետվություններում ներկայացված ցուցանիշները, ապա կտեսնենք, որ միայն 2020-2021 թթ. է ծրագիրը լիարժեքորեն կատարվել, մինչդեռ նախորդ տարիներին առկա են մեծ չափով թերակատարումներ:

##### 5. Ռոտզման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագիր:

Ըստ ծրագրի՝ պլանավորվել էր 2018-2023 թվականներին տեղադրել կաթիլային ռոտզման համակարգեր 1600 հա հողատարածքներում, անձրևացման համակարգեր՝ 200 հա, այսինքն՝ ընդհանուր 1800 հա հողատարածքում ներդնել ռոտզման արդիական համակարգեր<sup>120</sup>: Սակայն, 2018-2021 թվականներին, ընդհանուր առմամբ, տարեկան տեղադրվել է համապատասխանաբար՝ 160.9 հա (8 շահառու), 276.7 հա (26 շահառու), 239.4 հա (14 շահառու) և 377.2 հա (16 շահառու)<sup>121</sup>: Երեք տարիների ընթացքում (2019-2021 թթ.) ծրագրի փաստացի կատարողականը կազմել է 16.5%, նախատեսված 5400 հա-ի փոխարեն՝ 893.8 հա: Հետևաբար՝ կարող ենք արձանագրել, որ այնքան էլ իրատեսական չէ մինչև 2023 թ.-ը հասնել նպատակային 9000 հա ցուցանիշին:

*ՀՀ պետական բյուջեով նախատեսված և փաստացի իրականացված  
ծրագրերի արդյունքային ցուցանիշները, հազ. դրամ<sup>122</sup>*

Աղյուսակ 3.13

	Տարեկան պլան	Տարեկան ճշգրիտ պլան	Փաստ	Կատարման %
2019	-	70,160.00	8,983.56	12.80
2020	140,160.0	8,000.0	2,412.8	30.2
2021	50,000.0	244.70	244.66	100

<sup>119</sup> ՀՀ պետական բյուջեի 2017-2021 թթ. հաշվետվություններ,

[https://minfin.am/hy/page/petakan\\_byujei\\_hashvetvutyun/](https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/)

<sup>120</sup> Ռոտզման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2019 թվականի N 212-Լ որոշում,

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=128905>

<sup>121</sup> <https://mineconomy.am/media/18884/hashvet%202021.pdf>, էջ 19

<sup>122</sup> ՀՀ պետական բյուջեի 2017-2021 թթ. հաշվետվություններ,

[https://minfin.am/hy/page/petakan\\_byujei\\_hashvetvutyun/](https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/)

Դիտարկելով փաստացի գրանցված ոչ այնքան զոհացուցիչ արդյունքները և բյուջեի կատարման հաշվետվությունը՝ 2019 և 2020 թվականների թերակատարման պատճառը հիմնականում ոռոգման արդիական համակարգերի ներդրման ծախսատարությունն է և տնտեսվարողների կողմից ծախսերի փոխհատուցումը ոչ գրավիչ տոկոսով:

**6. Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագիր:**

Այս աջակցության ծրագրի իրականացման նպատակն է այգետնկումների խթանմամբ հանրապետությունում պտղաբուծության և խաղողագործության զարգացումը, խաղողի, պտղի և հատապտղի արտադրության ծավալների ավելացումը և պտուղների ու հատապտուղների ներմուծման փոխարինումը և արտահանման ծավալների ավելացումը<sup>123</sup>: Ծրագրի 26-րդ կետում նշվում է, որ 2019-2030 թթ.-ի համար նախատեսված է տրամադրել 6.0 մլրդ դրամ, որից 241.14 մլն դրամը՝ 2019 թ.-ին: Սակայն, նույնիսկ 2019 և 2020 թվականներին հանրագումարային այդչափ գումար չի տրամադրվել՝ կազմելով 114.7 մլն դրամ. 2 տարվա համար 2 անգամ պակաս՝ ի համեմատ մեկ տարվա համար նպատակադրված ցուցանիշի: Բյուջեի հաշվետվությունների համաձայն՝ շեղման պատճառը ծրագրի ուշ մեկնարկն է:

Ինչպես նկատում ենք, բոլոր տարիներին առկա են թերակատարումներ:

*ՀՀ պետական բյուջեով նախատեսված և փաստացի իրականացված ծրագրերի արդյունքային ցուցանիշները, հազ. դրամ<sup>124</sup>*

Աղյուսակ 3.14

	Տարեկան պլան	Տարեկան ճշրված պլան	Փասար	Կատարման %
2019	-	67,117.70	9,039.64	13.47
2020	67,117.70	449,117.70	104,669.59	23.3
2021	67,117.70	903,898.5	899,790.0	95.5

Ներկայում առավել կարևորվում է այս ծրագիրը, ընդ որում, հատկապես ինտենսիվ պտղատու այգիների հիմնումը: Վերջին երեք տարիների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ պտղի և հատապտղի արտադրության ծավալները և արտահանվող քանակը նկատելիորեն ավելացել են (աղյուսակ 3.15): Անկասկած, դրանում իրենց լուրման ունեն ոլորտի զարգացման խթանմանը նպատակաուղղված աջակցության ծրագրերը: Այս նկատառումով անհրաժեշտ է ավելացնել ինտենսիվ այգեգործության զարգացման ծրագրին տրամադրվող հատկացումները և, միաժամանակ, առավել գործնական ու

<sup>123</sup> Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2019 թվականի N 361-Լ որոշում:

<sup>124</sup> ՀՀ պետական բյուջեի 2017-2021 թթ. հաշվետվություններ, [https://minfin.am/hy/page/petakan\\_byujei\\_hashvetvutyun/](https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/)

օպերատիվ դարձնել ծրագրի մշտադիտարկման համակարգը: Ավելին, ըստ շահառուների ծրագրի, շարունակություն կարելի է ապահովել նախատեսված յուրաքանչյուր փուլի արդյունքային ցուցանիշների կատարման դեպքում: Հա-կատակ դեպքում անհրաժեշտ է կիրառել տնտեսական պատժամիջոցներ:

ՀՀ պորտի, հաբապորտի և խաղողի արտադրությունը և արտահանումը | Աղյուսակ 3.15

Ցուցանիշ	Տարի	Ընդամենը միջոց և հարկում	Այդ թվում*						Ընդամենը
			խնձոր <sup>125</sup>	ծխախոտ <sup>126</sup>	դեղձ	կեռաս	սևիտ	խաղող	
տարածությունը, հազ. հա	2019	43,41	13,05	24,08				1,861	16,50
	2020	43,75	13,87	24,25				1,797	16,68
	2021	44,70	13,85	25,02				1,825	16,52
բերքատվությունը, ցնտ/հա	2019	76,2	73,3	83,2				69,3	146,1
	2020	71,4	76,3	70,8				83,1	189,3
	2021	82,5	79,5	89,4				83,0	157,9
համախառն բերքը, հազ. տ	2019	290,6	95,7	170,7				0,125,6	217,5
	2020	274,3	99,9	146,3				0,145,7	283,2
	2021	328,9	105,1	190,5				0,147,0	237,0
ապրանքային արտադրանքը, հազ. տ	2019	290,6	81,7	68,1	62,7	12,8	23,2	12,6	217,5
	2020	274,3	84,7	53,2	53,5	10,9	30,0	14,6	283,2
	2021	323,0	87,9	86,9	65,7	9,6	25,0	14,8	237,1
օգտագործվել է սննդի համար, հազ. տ	2019	269,7	75,1	40,1	48,6	6,7	16,1	16,9	11,5
	2020	261,8	74,3	30,9	45,8	5,4	16,6	179	12,5
	2021	323,0	87,9	86,9	65,7	9,6	25,0	14,8	12,1
արտահանվել է	2019	101,7	14,4	31,0	10,8	6,5	4,7	8,2	15,7
	2020	98,6	20,2	21,9	15,3	5,8	7,8	8,0	25,5
	2021	146,2	14,1	36,1	20,0	5,1	7,4	8,2	18,1

Դրա հետ մեկտեղ, պետք է արձանագրել, որ արդեն իսկ 2022 թվականին նկատվում է խաղողի այգիների քանդելու դեպքեր, որը հիմնականում պատ-ճառաբանվում է այգիների ոռոգման և բերքի իրացման դժվարություններով: Բավական է հետևել վերջին տարիներին խաղողի բերքի իրացման գործըն-թացին և միանգամայն բացատրելի կլինի խաղողագործների դժգոհություն-ները և այգիները քանդելու պատճառները: Ուստի, նոր ինտենսիվ այգիների հիմնադրման պետական օժանդակության պարտադիր նախապայմաններ պետք է դիտարկել:

<sup>125</sup> Տարածության, բերքատվության և համախառն բերքի ցուցանիշները վերաբերում են հնդավորնե-րին:

<sup>126</sup> Նույն տեղում:



1. ագրոտեխնիկական միջոցառումների իրականացման բավարար պայմանները,
2. վերամշակող և արտահանող սուբյեկտների հետ բերքի գնման առնվազն միջնաժամկետ պայմանագրի առկայությունը,
3. մասնագիտական սպասարկման նպատակով, աուքտրսինգի կամ սեփական մասնագետների միջոցով բարձրակարգ ծառայությունների մատուցումը:

**7. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման ծրագիր:**

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի N362-Լ որոշման՝ 2019-2025 թվականներին ծրագրի իրականացման համար նախատեսվել է տրամադրել 969.48 մլն դրամ, որից 141.67-ը՝ 2019 թվականին<sup>127</sup>: Ծրագրով նախատեսվում է սուբսիդավորել 250 հա մակերեսով պտղատու այգիների կարկտապաշտպան ցանցերի տեղակայման նպատակով տրամադրված վարկերի տոկոսադրույքը: 2019-2021 թվականներին կարկտապաշտպան ցանցերի մակերեսը կազմել է համապատասխանաբար՝ 0.8, 14.5 և 5.2 հա: 2020 թվականին շահառուները երկուսն են եղել, իսկ 2021 թվականին՝ 3-ը (23.4 մլն դրամ սուբսիդավորմամբ):

*ՀՀ պետական բյուջեով նախատեսված և փաստացի իրականացված ծրագրերի արդյունքային ցուցանիշները, հազ. դրամ<sup>128</sup>*

Աղյուսակ 3.16

	Տարեկան պլան	Տարեկան ճշգրիտ պլան	Փաստ	Կատարման %
2019	199,600.0	50,113.1	27,747.0	55.37
2020	229,845.60	25,000	24,229.40	96.9
2021	65,510.70	23,508.83	23,423.28	99.6

Կարևոր է նշել, որ 2018 թ.-ին կարկտապաշտպան ցանցերի մակերեսը կազմել է 86.9 հա: Փաստացի և՛ ծրագրի շահառուները, և՛ ցանցերի մակերեսը բավական փոքր են եղել: Նախատեսված 250 հա-ից սուբսիդավորվել է ընդամենը 20.5 հա:

Ինչ վերաբերում է պետական բյուջեի կատարողականին, ապա այս ծրագրի գծով ևս առկա են թերակատարումներ:

**8. Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագիր:**

<sup>127</sup> Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2019 թվականի N 362-Լ որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=129659>

<sup>128</sup> ՀՀ պետական բյուջեի 2017-2021 թթ. հաշվետվություններ, [https://minfin.am/hy/page/petakan\\_byujei\\_hashvetvutyun/](https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/)

Ծրագրի շրջանակներում նախատեսվել է կառուցել 180 ջերմատուն՝ 3.38 մլրդ դրամ փոխհատուցման գումարով: Սակայն, 2020-2021 թվականներին կառուցվել է ընդամենը 10 ջերմատուն՝ 284.3 մլն դրամ ընդհանուր փոխհատուցման գումարով<sup>129</sup>: 2020 թ.-ին բյուջեի նախագծով նախատեսվածի նկատմամբ թերակատարումը պայմանավորված է համավարակի պատճառով շինարարական աշխատանքի սահմանափակմամբ:

*ՀՀ պետական բյուջեով նախատեսված և փաստացի իրականացված ծրագրերի արդյունքային ցուցանիշները, հազ. դրամ<sup>130</sup>*

Աղյուսակ 3.17

	Տարեկան պլան	Տարեկան ճշրված պլան	Փասար	Կատարման %
2020	1,125,000.0	150,000.0	56,970.0	38.0
2021	450,000	227,847.20	227,347.20	99.8

### 9. Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիր:

Ծրագրի նպատակը ՀՀ-ում տավարաբուծությամբ զբաղվող տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ վարկերի տոկոսադրույքի մասնակի տուրսի դավորմամբ տոհմային ԽԵԿ-ի մատակարարումն է, ինչը հնարավորություն կընձեռի անհայտ ծագումնաբանությամբ, վերարտադրության համար ոչ պիտանի, ցածր մթերատու կենդանիների փոխարեն նախիրները համալրելու արտադրատնտեսական արժեքավոր հատկանիշներով օժտված տոհմային ԽԵԿ-ով, զարգացնելու տոհմային գործը, միջցենդային տրամախաչումների միջոցով բարելավելու տեղական կենդանիների մթերատվությունը, ավելացնելու կաթի և մսի արտադրության ծավալները, նվազեցնելու արտադրվող կաթի և մսի ինքնարժեքը՝ ներկրվող համանման արտադրանքի նկատմամբ այն դարձնելով առավել մրցունակ<sup>131</sup>:

*ՀՀ պետական բյուջեով նախատեսված և փաստացի իրականացված ծրագրերի արդյունքային ցուցանիշները, հազ. դրամ<sup>132</sup>*

Աղյուսակ 3.18

	Տարեկան պլան	Տարեկան ճշրված պլան	Փասար	Կատարման %
2019	-	19,984.0	14,000	70.6
2020	200,490.7	51,500.7	51,500.7	100
2021	151,677.80	114,113.57	114,113.57	100

<sup>129</sup> Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2019 թվականի N 1612-Լ որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=136328>

<sup>130</sup> ՀՀ պետական բյուջեի 2017-2021 թթ. հաշվետվություններ, [https://minfin.am/hy/page/petakan\\_byujei\\_hashvetvutyun/](https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/)

<sup>131</sup> Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2019 թվականի N327-Լ որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=130071>

<sup>132</sup> ՀՀ պետական բյուջեի 2017-2021 թթ. հաշվետվություններ, [https://minfin.am/hy/page/petakan\\_byujei\\_hashvetvutyun/](https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/)

Ծրագրի համաձայն՝ ընդհանուր բյուջեն 2019-2024 թթ. համար նախատեսված էր շուրջ 2.447 մլրդ դրամ, իսկ 2019-2028 թթ. Համար՝ մոտ 3.102 մլրդ դրամ: Վարկերի ընդհանուր մեծությունը գնահատվել էր 9.960 մլրդ դրամ: Համեմատության համար նշենք, որ ծրագրի շրջանակում 2019-2021 թթ.-ին սուբսիդավորման գումարը կազմել է 71.5 մլն դրամ: Սուբսիդավորման կտրուկ աճն (շուրջ 5.7 անգամ) ուղեկցվել է կենդանիների գլխաքանակի աճով՝ 2.3 անգամ:

#### **10. Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացմանը պետական աջակցության ծրագիր:**

Ծրագիրը նպատակ է հետապնդում պետական աջակցության կառուցակարգերի, մասնավորապես՝ մատչելի վարկավորման պայմանների կիրառմամբ և ծախսերի փոխհատուցմամբ հանրապետությունում ոչխարաբուծության և այծաբուծության ճյուղերի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, բարձրարժեք տոհմային ոչխարների և այծերի ձեռքբերման (ներկրման) և բարձր մթերատու հոտերի ձևավորման խրախուսումը, բուծվող ցեղերի կատարելագործումը, տոհմային գործի զարգացումը, արտադրատնտեսական արժեքավոր հատկանիշներով օժտված մաքրացել և տրամախաչումների միջոցով ստացված խառնացել կենդանիների գլխաքանակի ավելացումը, ինչպես նաև ոչխարաբուծական և այծաբուծական արտադրանքի արտադրության և արտահանման ծավալների ավելացումը<sup>133</sup>:

ՀՀ պետական բյուջեով նախատեսված և փաստացի իրականացված ծրագրերի արդյունքային ցուցանիշները, հազ. դրամ<sup>134</sup>

Աղյուսակ 3.19

	Տարեկան պլան	Տարեկան ճշգրիտ պլան	Փասք	Կատարման %
2020	364,125.0	24,853.31	22,192.76	89.3
2021	172,311.3	30,994.4	30,994.4	100

Էկոնոմիկայի նախարարության հաշվետվություններից պարզ է դառնում, որ 2020 թ. գրանցվել է շահառուների և ձեռք բերված կենդանիների գլխաքանակի առավելագույն մակարդակը՝ 5 շահառու և 672 գլուխ:

Ինչպես տեսնում ենք, ճշտված պլանի թվերը էականորեն տարբերվում են տարեկան նախնական պլանից:

#### **11. Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագիր:**

<sup>133</sup> Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացմանը աջակցության ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2019 թ.-ի N68-Լ որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159810>

<sup>134</sup> ՀՀ պետական բյուջեի 2017-2021 թթ. հաշվետվություններ, [https://minfin.am/hy/page/petakan\\_byujei\\_hashvetvutyun/](https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/)

Ըստ ծրագրի՝<sup>135</sup> 2019-2021 թթ. կառուցվել կամ վերակառուցվել է 230 անասնաշենք, ընդ որում, հետևյալ տարեկան բաշխվածությամբ. 2019 թ.՝ 30, 2020 թ.՝ 100, 2021 թ.՝ 100: Իսկ փոխհատուցման չափը, ըստ ծրագրի, պետք է կազմեր 3.2 մլրդ դրամ: Սակայն, փաստացի ցուցանիշներով ունենք այլ պատկեր. մասնավորապես՝ փոխհատուցումը 2019-2021 թթ.-ին կազմել է 593.1 մլն դրամ, և շահագործման է հանձնվել 36 անասնաշենք:

*ՀՀ պետական բյուջեով նախատեսված և փաստացի իրականացված  
ծրագրերի արդյունքային ցուցանիշները, հազ. դրամ*<sup>136</sup>

Աղյուսակ 3.20

	Տարեկան պլան	Տարեկան ճշգրիտ պլան	Փաստ	Կատարման %
2019	-	164,000.0	14,500.0	8.84
2020	630,000.0	331,030.0	230,850.0	69.7
2021	453,600.0	351,300.0	347,800.0	99.0

## 12. Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիր:

Ըստ ծրագրի՝<sup>137</sup> նախատեսված է 2019-2023 թթ. ՀՀ 6 մարզերում կարկտի և հրդեհի, զարնանային ցրտահարության ռիսկերից ապահովագրել ավելի քան 30 հազար հա հողատարածք: Ընդ որում, ամբողջ ժամանակահատվածի համար կանխատեսված սուբսիդավորման գումարը 5.2 մլրդ դրամ է: Նշենք, որ 2020-2021 թթ. ապահովագրավճարի հատուցումը փաստացի կազմել է 344.9 մլն դրամ, մինչդեռ, ծրագրում ներառված կանխատեսումների համաձայն, 2020-2021 թթ. դա պետք է կազմեր 1.7 մլրդ դրամ:

*ՀՀ պետական բյուջեով նախատեսված և փաստացի իրականացված  
ծրագրերի արդյունքային ցուցանիշները, հազ. դրամ*<sup>138</sup>

Աղյուսակ 3.21

	Տարեկան պլան	Տարեկան ճշգրիտ պլան	Փաստ	Կատարման %
2020	600,000.0	410,000.0	68,972.09	16.8
2021	499,995.40	277,997.70	275,945.60	99.3

Նման պատկերի պատճառը արդյունքի (պրոդուկտի) նորությունն է, քանի որ գյուղացիները չունեն գյուղատնտեսական ապահովագրության

<sup>135</sup> Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության N369-Լ որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=130342>

<sup>136</sup> ՀՀ պետական բյուջեի 2017-2021 թթ. հաշվետվություններ, [https://minfin.am/hy/page/petakan\\_byujei\\_hashvetvutyun/](https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/)

<sup>137</sup> Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2019 թվականի N1485-Լ որոշում:


<sup>138</sup> ՀՀ պետական բյուջեի 2017-2021 թթ. հաշվետվություններ, [https://minfin.am/hy/page/petakan\\_byujei\\_hashvetvutyun/](https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/)

փորձ, հետևաբար՝ առավել զգուշավոր են մոտենում առաջարկներին: Սակայն, մյուս կողմից, կատարված հարցման շրջանակներում, որպես ամենացանկալի և արդյունավետ, մատնանշվում էր հենց այս ծրագիրը:

Գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցությունն իրականացվում է բազմաթիվ ծրագրերի միջոցով, որոնք հաճախ կարող են իրենց տեսակով և տրամաբանությամբ բավական նման լինել: Հետևաբար՝ դրանց արդյունավետության վերաբերյալ դատողություններ կատարելու նպատակով պետական ծրագրերը դասակարգվել են ըստ դրանց հիմնական նպատակների՝ հետևյալ խմբերում.

- ընդհանուր գյուղատնտեսության զարգացման ծրագրեր,
- տեխնիկական հագեցվածության բարելավման ծրագրեր,
- ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրեր,
- խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման նպատակով տրամադրվող աջակցություն,
- անասնապահության զարգացման ծրագրեր:

Այնուհետև վերոնշյալ դասակարգմամբ ծրագրերի ծավալների փոփոխությունը համեմատվել է համապատասխան մակրոտնտեսական ցուցանիշների հետ, որոնց արդյունքները ներկայացված են գծապատկեր 3.4-ից 3.17-ում:




**Գծապատկեր 3.4**

*Պետական բյուջեի ծախսերը գյուղատնտեսության ոլորտում (ներառյալ՝ անարատային փնտրությունը և ոռոգումը), մլն դրամ<sup>139</sup>*

Գյուղատնտեսության ոլորտի ընդհանուր զարգացմանը միտված ծրագրերի ծավալները համեմատվել են գյուղատնտեսության ոլորտի համախառն թողարկման ծավալների հետ: Գծապատկեր 3.4-ի, 3.5-ի, 3.6-ի տվյալները ցույց են տալիս, որ, պետական ծախսերի աճին զուգահեռ, տեղի է ունեցել գյուղատնտեսության ոլորտի անկում: Միայն առևտրային կազմակերպությունների թողարկած արդյունքի գծով է նկատվում աճի միտում, սակայն


<sup>139</sup> Աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջեի համապատասխան տարվա հաշվետվություններ:

այդ դեպքում աճի տեմպն արագացել է՝ 2018 թ.-ից սկսած, այն դեպքում, երբ այդ տարի պետական ծախսերը նվազել են: Հետևաբար՝ այս մասով պետական ծախսերի աճը չի արտացոլվում վիճակագրական տվյալներում:



Գծապատկեր 3.5

Գյուղատնտեսության համայնաժողովրդային ծախսեր, մլրդ դրամ<sup>140</sup>




Գծապատկեր 3.6

Պետական բյուջեի ծախսերի և համայնաժողովրդային ծախսերի աճը, %<sup>141</sup>

Գյուղատնտեսության ոլորտում տեխնիկական հագեցվածության բարելավմանն ուղղված պետական աջակցության ծրագրի չափը նույնպես աճել է վերջին 5 տարիների ընթացքում: Այդ ծրագրերի հիմնական նպատակը գյուղատնտեսությունում արտադրողականության աճն է, հետևաբար՝ դրանց արդյունավետությունը պետք է արտացոլվի բերքատվության աճի տեսքով: Այդ իսկ պատճառով, տեխնիկական հագեցվածության բարելավմանն ուղղված պետական աջակցության ծրագրերին զուգահեռ, գծապատկեր 3.8-ում ներկայացվել են տարբեր մշակաբույսերի բերքատվության ցուցանիշները, որոնք, սակայն, հիմնականում էական աճ չեն գրանցել: Ավելին, բացի ծխախոտից, մնացած բոլորն ունեն վարընթաց միտում 2016-2021 թվականներին: Իհարկե, գյուղատնտեսության ոլորտում իրականացված ծախսերը կարող են մեծ ժամանակային լագով ազդել տնտեսական ցուցանիշների վրա, հետևաբար՝ հետագա տարիների ցուցանիշների վերլուծությունը ևս կարևոր կլինի, մասնավորապես՝ 2020 և 2021 թվականների ծրագրերի արդյունավետության ուսումնասիրության առումով:


<sup>140</sup> Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, հեղինակների հաշվարկներ:

<sup>141</sup> Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, հեղինակների հաշվարկներ:



Գծապատկեր 3.7

Տեխնիկական հազեցվածության բարելավման պերական աջակցության ծրագրի չափը, մլն դրամ<sup>142</sup>




Գծապատկեր 3.8

Քերթարվությունը, 1 ց՝ հա-ից<sup>143</sup>

Ոռոգման համակարգի բարելավման ծրագրերը մի կողմից միտված են առկա ցանքատարածություններում ավելի արդյունավետ կերպով ոռոգում կազմակերպելուն, մյուս կողմից՝ նոր, նախկինում չոռոգվող ցանքատարածությունները գյուղատնտեսության համար պիտանի դարձնելուն: Հետևաբար՝ եթե այս ծրագրերը արդյունավետ լինեն, ապա պետք է նկատվի ցանքատարածությունների աճի միտում: Մինչդեռ գծապատկեր 3.9-ի, 3.10-ի, 3.11-ի տվյալները ցույց են տալիս, որ պետական բյուջեից, ծախսերի աճին զուգահեռ, նվազել է ինչպես մշակվող ցանքատարածությունների, այնպես էլ բուսաբուծության համախառն արտադրանքը:


<sup>142</sup> Աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջեի համապատասխան տարվա հաշվետվություններ:

<sup>143</sup> Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, հեղինակների հաշվարկներ:



**Գծապատկեր 3.9**


*Ոռոգման համակարգերի արդիականացման պետական աջակցության ծրագրի չափը, մլն դրամ*



**Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, հեղինակների հաշվարկներ:**

**Գծապատկեր 3.10**

*Ցանքաբուծության ծրագրի չափը, հազ. հեկտար*




**Գծապատկեր 3.11**

*Բուսաբուծության համախառն արտադրանքը, մլրդ դրամ*

Պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնմանն ու զարգացմանն ուղղված պետական աջակցության ծրագրի գծով պետական բյուջեից ծախսվող գումարների չափն աճել է 2018-2020 թվականներին, սակայն առավել կտրուկ աճ է գրանցվել 2021 թ.-ին՝ նախորդ տարվա 187 մլն դրամից հասնելով շուրջ 1.1 մլրդ դրամի: Այս ծրագրի արդյունքները պտղատու այգիների և հատապտղանոցների վերաբերյալ վիճակագրական տվյալներում, մասնավորապես՝ ցանքատարածությունների, բերքատվության և համախառն բերքի ցուցանիշներում դեռևս չեն արտացոլվում, սակայն ավելի ճիշտ կլինի ուսում-




նասիրել հետագա տարիների ցուցանիշները՝ 2021 թ. իրականացված մեծ ծավալով ծրագրերի արդյունավետությունը գնահատելու համար: Միաժամանակ, վերջին տարիներին նկատելի է խաղողի այգիների բերքատվության, հետևաբար նաև համախառն բերքի ծավալների աճի միտում, ինչը կարող է պայմանավորված լինել պետական ծրագրերի ծավալների աճով:



**Գծապատկեր 3.12**

*Պորտաբու այգիների և հալսպորտանոցների հիմնման ու զարգացմանն պետական աջակցության ծրագրի չափը, մլն դրամ*



**Աղբյուրը՝** ՀՀ վիճակագրական կոմիտե, հեղինակների հաշվարկներ:

**Գծապատկեր 3.13**

*Ցանքարարարությունները, հազ. հեկտար*

**Գծապատկեր 3.14**


*Բերքարվությունը, ց' 1 հա-ից*

**Գծապատկեր 3.15**

*Համախառն բերքը, հազ. տ.*

Անասնապահության զարգացմանն ուղղված պետական աջակցության ծրագրերն էական ծավալ են ունեցել 2020 և 2021 թվականներին և կազմել համապատասխանաբար՝ 307 և 500 մլն դրամ: Անասնապահության արտադրանքի ծավալը 2016-2018 թվականներին ունեցել է աճի միտում, իսկ 2019-2020

թվականներին սկսել է անկում ապրել: 2021 թ.-ին անասնաբուծության արտադրանքն աճել է նախորդ տարվա համեմատ. աճել է թե՛ բնակչության տնտեսությունների, թե՛ առևտրային կազմակերպությունների կողմից արտադրվող արտադրանքը: Սակայն, այս ոլորտի ծրագրերն առավել մանրամասն ուսումնասիրել հնարավոր կլինի հաջորդ ժամանակահատվածների ցուցանիշների հրապարակումից հետո:



**Աղբյուրը՝** ՀՀ վիճակագրական կոմիտե, հեղինակների հաշվարկներ:

**Գծապատկեր 3.16**

*Անասնապահության զարգացման պետական աջակցության ծրագրի չափը, մլն դրամ*

**Գծապատկեր 3.17**

*Անասնապահության արտադրանքը, մլրդ դրամ*

Ամփոփելով կարող ենք նշել, որ, ընդհանուր առմամբ, պետական բյուջեից գյուղատնտեսության աջակցության ուղղությամբ ծախսերի աճին զուգընթաց, ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշները շարունակել են վատթարանալ: Բացառություն են կազմում որոշ ոլորտներ, օրինակ՝ ծխախոտի արտադրությունը և խաղողագործությունը, որոնք վերջին տարիներին դրսևորել են աճի միտում: Դա նշանակում է, որ թեև գյուղատնտեսության աջակցության պետական ծրագրերը նպաստում են առանձին տնտեսությունների զարգացմանը, սակայն մակրոմակարդակում, պայմանավորված նաև ժամանակային լագով, դրանք դեռևս չեն հանգեցնում ոլորտի ցուցանիշների էական բարելավմանը:

### 3.3

## **ՀՀ գյուղատնտեսության պետական օժանդակության ծրագրերի արդյունավետության գնահատումը՝ ոլորտի տնտեսավարողների և փորձագետների շրջանում հարցման միջոցով**

ՀՀ գյուղատնտեսության ոլորտում իրականացված պետական օժանդակության ծրագրերի արդյունավետության գնահատման նպատակով իրականացվել է ոլորտի հիմնական շահառուների շրջանում հարցում, որի միջոցով հավաքագրել է ՀՀ-ում ոլորտի վերաբերյալ որակական և քանակական զգալի տեղեկատվություն: Մասնավորապես՝ առանձին հարցումներ են անցկացվել գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողների (և՛ բնակչության տնտեսությունների, և՛ առևտրային կազմակերպությունների համար) և գյուղատնտեսության ոլորտի փորձագետների շրջանում: Հարցումների արդյունքները հնարավորություն են տվել մատնանշելու պետական օժանդակության ծրագրերի հիմնական թերությունները և առավելությունները, ինչպես նաև բացահայտելու դրանց բարելավման ուղիները:

Գյուղացիական տնտեսությունների շրջանում դեռևս 2017 թ. հետազոտական խմբի անդամ, պրոֆեսոր Սամվել Ավետիսյանի և տնտեսագիտության թեկնածու Լուիզա Հունանյանի իրականացրած հարցումները ցույց են տվել, որ բյուջետային ծրագրերի արդյունավետությունը ցածր է և չի համապատասխանում այն ակնկալվող արդյունքներին, որոնք ներկայացված են դրանք հիմնավորող տեխնիկական առաջադրանքում: Այսպես՝ ՀՀ երեք մարզերի 210 գյուղացիական տնտեսություններում կատարված հարցումների արդյունքները հնարավորություն են տվել գնահատելու գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի արդյունավետությունը:

Հարցումների համար ընտրվել են՝ ՀՀ Արարատի մարզի Խարբերդ, Արևշատ, Քաղցրաշեն, Շահումյան, Փոքր Վեդի, Դարակերտ և Ռանչպար, ՀՀ Շիրակի մարզի Ագատան, Արևիկ, Կամո, Մեղրաշեն, Փանիկ, Ողջի և Մեծ Մեպասար, ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն, Լճաշեն, Նորատուս, Սարուխան, Ներքին Գետաշեն, Զուլաքար և Մեծ Մասրիկ համայնքների 10-ական գյուղացիական տնտեսություններ: Հարցվողներին առաջադրվել է 100 բալային համակարգով կամ տոկոսով գնահատել գյուղատնտեսության պետական աջակցության 13 ծրագրից յուրաքանչյուրի անհրաժեշտությունն ու արդյունավետությունը:

Դիտարկումները հիմք են տվել եզրակացնելու, որ շահառուները համեմատաբար մեծ կարևորություն են տալիս և արդյունավետ են գնահատում «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» և «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրերը: «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտա-

գործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար» և «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» ծրագրերը կարևորվում են, սակայն արդյունավետության գնահատականները ցածր են: Թերևս, ճիշտ էր, որ 2018 թվականին դադարեցվեցին «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար» և «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման համար» սուբսիդավորվող ծրագրերը: Առավել ևս, որ դիզավառելիքի ծրագիրն արդյունավետ են գնահատել հարցվողների 20-30%-ը: Այդ ծրագրերի համար նախատեսված սուբսիդավորման գումարները վերաբաշխվեց «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրին: Բարեբախտաբար, մոտեցումը վերանայվել է, և 2019 թվականից իրականացվում է նաև «Փոքր գյուղացիական տնտեսությունների վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր»:

Ընդհանուր առմամբ, ուսումնասիրվող բոլոր մարզերում հարցվողները գյուղատնտեսության աջակցության բյուջետային ծրագրերի կարևորությունը գնահատել են 53.8-56.1, իսկ արդյունավետությունը՝ 36.1-39.6%: Այս ցուցանիշները բավական ցածր են, ուստի պահանջվում է պարբերաբար վերանայել ծրագրերի իրականացման կառուցակարգերը<sup>144</sup>:

Ահա այս նկատառումներով էլ՝ 2022 թ. ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Գյուղատնտեսության ոլորտում 2010-2021 թթ. պետական օժանդակության ծրագրերի արդյունավետության գնահատում» թեմայի շրջանակում գյուղատնտեսությամբ զբաղվողների (բնակչության տնտեսությունների և առևտրային կազմակերպությունների) և ոլորտի փորձագետների շրջանում կատարվել է նոր հարցում: Վերջինիս նպատակն է եղել բացահայտել մի կողմից գյուղատնտեսության ոլորտի տնտեսավարողների ընդհանուր ընկալումը միջոցառումների արդյունավետության և իրենց տնտեսությունների հիմնական ցուցանիշների վրա ազդեցության, մյուս կողմից՝ ոլորտի փորձագետների կարծիքը՝ վարվող քաղաքականության արդյունավետության վերաբերյալ:

Գյուղատնտեսության ոլորտի տնտեսությունների համար կազմված հարցաթերթիկը բաղկացած է չորս բաժնից (առավել մանրամասն տե՛ս հավելված 8-ում)։

1. Հարցեր գյուղացիական տնտեսության վերաբերյալ. փորձ է արվել պարզելու կազմակերպության կամ բնակչության տնտեսության չափի, գործունեության տարիների, արդյունքային ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ, որոնք հնարավորություն են տվել ավելի լավ պատկերացում կազ-

<sup>144</sup> Ավետիսյան Ս., ՀՀ գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի գնահատումը, <https://asue.am/amberd/publications/analysis/assessment-of-the-ra-state-support-to-agriculture-programs>

մեկու հարցման մասնակիցների վերաբերյալ, ինչպես նաև ստուգելու ընտրանքի համապատասխանությունը:

2. Հարցեր պետական ծրագրերի վերաբերյալ (որևէ ծրագրից օգտված տնտեսավարողների համար). ներառվել են հարցեր ծրագրերի արդյունավետության և տնտեսությունների վրա այդ ծրագրերի ազդեցությունների վերաբերյալ:

3. Հարցեր պետական ծրագրերի վերաբերյալ (ծրագրերից չօգտված տնտեսավարողների համար). փորձ է արվել բացահայտելու ծրագրերից չօգտվելու հիմնական պատճառները:

4. Հարցեր գյուղատնտեսության ոլորտի ընդհանուր զարգացման գործոնների վերաբերյալ. նպատակ ունեն բացահայտել գյուղատնտեսության զարգացման այն խոչընդոտները, որոնք չեն թիրախավորվում կամ թերի են թիրախավորվում գործող պետական աջակցության ծրագրերով:

Փորձագետների համար կազմված հարցաթերթիկը բաղկացած է երեք բաժնից (առավել մանրամասն տե՛ս հավելված 9-ում)।

1. Հարցեր փորձագետի վերաբերյալ՝ գործունեության ոլորտը, փորձառությունը և այլ տվյալները պարզելու համար:

2. Հարցեր գործող պետական աջակցության ծրագրերի արդյունավետության վերաբերյալ, որոնց միջոցով փորձ է արվել պարզելու փորձագետի կարծիքն այդ ուղղությամբ:

3. Պետական քաղաքականության բարելավման և գյուղատնտեսության զարգացման հնարավորությունների վերաբերյալ հարցեր:

Հարցմանը մասնակցել են գյուղատնտեսության ոլորտում գործող 86 տնտեսավարող և 58 փորձագետ: Հարցման ընտրանքն իրականացվել է շերտավորված ընտրանքի (stratified sampling<sup>145</sup>) մեթոդով, որի համար օգտագործվել է ՀՀ գյուղատնտեսության ոլորտի վերաբերյալ ՀՀ ՎԿ-ի կողմից հրապարակվող տեղեկությունները: Նույն կերպ՝ վիճակագրական տվյալների հիման վրա որոշվել է, թե ինչ բաշխվածություն պետք է ունենան բնակչության տնտեսությունները և առևտրային կազմակերպությունները ընտրանքում: Փաստացի հարցման ընտրանքը փոքր-ինչ տարբերվել է վիճակագրական տվյալներում արտացոլված կշիռներից, սակայն շեղումը էական չափերի չէ, հետևաբար՝ կարող ենք նշել, որ շերտավորված ընտրանքի մեթոդաբանությունը պահպանվել է:

<sup>145</sup> Thomas, L. (2022, July 21). Stratified Sampling | Definition, Guide & Examples. Scribbr. Retrieved November 10, 2022, from <https://www.scribbr.com/methodology/stratified-sampling/>

**Գյուղատնտեսության ոլորտում պետական աջակցության ծրագրերի արդյունավետության վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծությունը:**

Հարցման ընտրանքի որոշման համար կիրառված վիճակագրական տեղեկությունները ներկայացված են աղյուսակ 3.22-ում և 3.23-ում: Ըստ ՀՀ ՎԿ տվյալների՝ ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում խոշոր կշիռ ունեն Արմավիրի, Արարատի և Գեղարքունիքի մարզերը, 2021 թ.-ին համապատասխանաբար՝ 22.8, 15.3 և 12.3 տոկոս կշիռներով: Այնուհետև Արագածոտնի, Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերից յուրաքանչյուրն ունի շուրջ 8-9 տոկոս կշիռ, իսկ մնացած մարզերը՝ ավելի փոքր:

*Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքն ըստ մարզերի, %՝ ընդհանուրի նկատմամբ*

**Աղյուսակ 3. 22**

	2019	2020	2021
Արագածոտն	9.5	9.3	9.4
Արարատ	15.2	15.4	15.3
Արմավիր	21.3	21.4	22.8
Գեղարքունիք	13.3	12.4	12.3
Լոռի	8.1	8.0	8.5
Կոտայք	8.4	9.1	8.5
Շիրակ	10.3	10.5	9.4
Սյունիք	7.0	6.7	6.4
Վայոց ձոր	2.5	2.6	2.4
Տավուշ	4.4	4.5	4.9


*Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրողների տեսակի, %՝ ընդհանուրի նկատմամբ*

**Աղյուսակ 3. 23**

	2019	2020	2021
Առևտրային կազմակերպություններ	6.2	5.9	5.8
Բնակչության տնտեսություններ	93.8	94.1	94.2

Կշիռները հաշվարկել են հեղինակները՝ ՀՀ ՎԿ-ի կողմից հրապարակվող սոցիալ-տնտեսական վիճակի մասին տեղեկագրերում ամփոփված տվյալների հիման վրա: Կշիռները հաշվարկվել են միայն մարզերի տվյալների հիման վրա, իսկ Երևան քաղաքի տվյալները հաշվի չեն առնվել:


Հարցման փաստացի ընտրանքը հիմնականում համապատասխանում է վիճակագրական տվյալներին: Մասնավորապես՝ հարցված 86 տնտեսավարողների շարքում մեծ կշիռ ունեն Արմավիրի, Արարատի և Գեղարքունիքի մարզում գործողները, համապատասխանաբար՝ 25, 18 և 12 տոկոս կշիռներով: Մյուս մարզերում հարցված տնտեսավարողների կշիռներն ընդհանուր հարցվածների թվաքանակի մեջ նույնպես համապատասխանում են վերոնշյալ վիճակագրական տվյալներին (գծապատկեր 3.18):



Գծապատկեր 3.18

Հարցմանը մասնակցած տնտեսությունների գտնվելու վայրը՝ ըստ ՀՀ մարզերի<sup>146</sup>

Հարցման մասնակիցների շուրջ 77%-ը բնակչության տնտեսություն է, 7%-ը՝ առևտրային կազմակերպություններ, իսկ մնացած 16%-ը՝ քաղաքաբնակների անհատական տնտեսություններ (գծապատկեր 3.19): Այս ցուցանիշները նույնպես համապատասխանում են վիճակագրական տվյալներին, որոնք ներկայացված են աղյուսակ 3.23-ում:




Գծապատկեր 3.19

Հարցմանը մասնակցած տնտեսությունների տեսակը

Հարցման մասնակիցների շուրջ 32%-ն աճեցնում է ոչ բազմամյա մշակաբույսեր, իսկ ևս 32%-ը զբաղվում է անասնապահությամբ: Խստոր գյուղատնտեսության ոլորտում գործող տնտեսավարողների կշիռն ընդհանուր հարցվածների շարքում կազմել է 16%, իսկ բազմամյա մշակաբույսերի ոլորտում գործողների կշիռը՝ 14%: Մնացած 6%-ը զբաղված է տնկիների և այլ տնկանյութերի աճեցմամբ: Այս տվյալները ցույց են տալիս, որ հարցման մասնակիցների շարքում գյուղատնտեսության հիմնական ուղղություններում զբաղված տնտեսավարողներն էական կշիռ ունեն, ինչը դրական գործոն է հարցման արդյունքների արժանահավատության տեսանկյունից:


<sup>146</sup> Այս և հաջորդիվ գծապատկերների աղբյուրը՝ հեղինակների կողմից անցկացված հարցման արդյունքներ:



Գծապատկեր 3.20


Հարցմանը մասնակցած փնտրությունների ոլորտը

Հարցման մասնակիցների մեծամասնության տարեկան շրջանառությունը մինչև 5 մլն դրամ է, ինչը նշանակում է, որ դրանք փոքր տնտեսություններ են (գծապատկեր 3.22): Հաշվի առնելով այն, որ պետական աջակցության ծրագրերը հիմնականում թիրախավորում են փոքր և միջին տնտեսությունները, մեծ թվով փոքրերի առկայությունը կրարձրացնի հարցման արդյունավետությունը:



Գծապատկեր 3.21

Հարցմանը մասնակցած փնտրությունների գործունեության ժամկետը




Գծապատկեր 3.22

Հարցմանը մասնակցած փնտրությունների տարեկան շրջանառությունը

Մյուս կողմից, հարցվածների մեծ մասը՝ 55%-ը, գործում է ավելի քան 10 տարի, իսկ 25%-ը՝ 4-10 տարի, ինչը ևս դրականորեն կանդրադառնա հարցման արդյունքների վրա, քանի որ երկար տարիներ գյուղատնտեսությամբ զբաղվողները ավելի լավ պատկերացում ունեն ոլորտի հիմնական խնդիրների և դրանց հաղթահարման հնարավոր ուղիների վերաբերյալ (գծապատկեր 3.21):






Գծապատկեր 3.23

Հարցմանը մասնակցած փնտրությունների աշխատողների թվաքանակը


Բացի այդ, ընտրանքում առկա են նաև նոր հիմնված տնտեսությունների ներկայացուցիչներ, որոնք գյուղատնտեսությամբ սկսել են զբաղվել վերջին մեկ տարվա ընթացքում, ինչը ևս կարևոր է, քանի որ շուկայի նոր մասնակիցները հիմնականում ավելի նորարարական մոտեցումներ են ցուցաբերում, ինչը բնականաբար դրականորեն կազդի հարցման արդյունքների վրա:

Հարցմանը մասնակցած կազմակերպությունների շուրջ 52%-ում աշխատողների միջին տարեկան թիվը մինչև 3 է, իսկ 30%-ում՝ 4-ից 10: 10-ից ավելի աշխատող ունի հարցվածների շուրջ 16%-ը, իսկ 100-ից ավելի՝ ընդամենը 2%-ը (գծապատկեր 3.23):



Գծապատկեր 3.24


Հարցմանը մասնակցած փնտրությունների արտահանման կշիռը



Գծապատկեր 3.25


Հարցմանը մասնակցած փնտրությունների արտահանման ուղղությունները

Հարցվածների շրջանում իրենց արտադրանքի արտահանմամբ զբաղվում է շուրջ 26%-ը, իսկ մյուսներն արտադրանքն իրացնում են կա՛մ ներքին շուկայում, կա՛մ արտահանող կազմակերպություններին: Արտահանողների շուրջ 59%-ի հիմնական շուկան Ռուսաստանի Դաշնությունն է, իսկ 18%-ինը՝ Վրաստանը: Հատկանշանական է, որ հարցվածների շուրջ 12%-ը արտադրանքն արտահանում է ԵՄ անդամ երկրներ:



Գծապատկեր 3.26

Արտադրանքի  
գին/ինքնարժեք  
հարաբերակցությունը  
ներքին շուկայում



Գծապատկեր 3.27

Արտադրանքի  
գին/ինքնարժեք  
հարաբերակցությունը  
արտաքին շուկայում


Հետաքրքրական պատկեր է արձանագրվել արտադրանքի գին/ինքնարժեք հարաբերակցության վերաբերյալ տնտեսավարողների պատասխաններում (գծապատկեր 3.26, 3.27): Ներքին շուկայում արտադրանքի իրացման պարագայում գին/ինքնարժեք հարաբերակցությունը հարցվածների մեծամասնության՝ 44%-ի դեպքում կազմել է շուրջ 1.2, այսինքն՝ վաճառքի գինը շուրջ 20%-ով գերազանցել է ինքնարժեքը, իսկ 19%-ի դեպքում՝ 1.4: Արտաքին շուկայում իրացման պարագայում պատկերն այլ է: Մասնավորապես՝ հարցվածների շուրջ 60%-ի դեպքում գին/ինքնարժեք հարաբերակցությունը կազմել է ավելի քան 1.5, այսինքն՝ տնտեսավարողներն արտաքին շուկաներում արտադրանքը վաճառել են շուրջ 50%-ով ավելի գնով, քան արտադրանքի ինքնարժեքն է: Ընդ որում, այդ 60%-ից շուրջ 30%-ի դեպքում գին/ինքնարժեք հարաբերակցությունը կազմել է շուրջ 3: Այս արդյունքները ցույց են տալիս, որ տնտեսավարողների համար արտահանումը շատ ավելի շահութաբեր է, քան ներքին շուկաներում վաճառելը:

Հարցմանը մասնակցած տնտեսավարողների շուրջ 61%-ն օգտվում է պետական աջակցության ծրագրերից: Ինչպես արդեն նշել ենք, այս խմբի համար հարցաթերթիկում ներառվել են առանձին հարցեր աջակցության ծրագրերի արդյունավետության և իրենց տնտեսությունների վրա դրանց ազդեցության վերաբերյալ:

**Աղյուսակ 3.24**  
**Գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերից օգտվողների կշիռները**


Ծրագիր	Ծրագրերից օգտվողների թվաքանակի կշիռն ընդհանուր հարցվածների նկատմամբ
Ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում	58%
Գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալություն՝ լիզինգ	19%
Ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալություն՝ լիզինգ	3%
Ռոտման հմակարգերի արդիականացում	6%
Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրում	6%
Փոքր ու միջին ջերմատների կառուցում և դրանց տեխնոլոգիական ապահովում	3%
Խելացի անասնազոմեր	3%

Աղյուսակ 3.24-ում ներկայացված տեղեկությունները թույլ են տալիս պատկերացում կազմել, թե հիմնականում որ տեսակի աջակցության ծրագրերից են օգտվել տնտեսավարողները: Ակնհայտ մեծամասնություն են կազմում գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրերից օգտվածները, որոնց կշիռը շուրջ 58% է: Հաջորդը գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի ծրագրերից օգտված տնտեսավարողներն են:




**Գծապատկեր 3.28**  
**Սրացված պետական աջակցության չափը**

Քանի որ հարցվածների մեծամասնությունը փոքր (մինչև 5 մլն դրամ շրջանառությամբ) տնտեսություն է, ապա աջակցության ձևով ստացված գումարները նույնպես փոքր են: Հարցվածների շուրջ 78%-ի աջակցության չափը կազմել է մինչև 5 մլն դրամ:



Գծապատկեր 3.29

Արդյո՞ք պետական աջակցությունը նպաստել է արտադրության ընդլայնմանը



Գծապատկեր 3.30

Արդյո՞ք պետական աջակցությունը նպաստել է արտադրության ընդլայնմանը

Սակայն, ըստ տնտեսավարողների, այդ աջակցությունը էական դրական ազդեցություն է թողել իրենց գործունեության ցուցանիշների վրա: Մասնավորապես՝ ծրագրերից օգտվողների շրջանում շուրջ 62%-ը դրական է պատասխանել պետական աջակցության ծրագրերի՝ իրենց արտադրության ծավալների մեծացմանը նպաստելու վերաբերյալ հարցին, իսկ 39%-ը դրական է պատասխանել պետական աջակցության ծրագրերի՝ արտահանման ծավալների մեծացմանը նպաստելու վերաբերյալ հարցին (գծապատկեր 3.29, 3.30): Այնուամենայնիվ, հարցվածների շուրջ 29%-ը նշել է, որ պետական աջակցության ծրագրերը չեն նպաստել արտադրության ծավալների, իսկ 61%-ը՝ արտահանման ընդլայնմանը: Սա բավական բարձր ցուցանիշ է, և այս արդյունքը անհրաժեշտություն է առաջացնում ծրագրերում կատարելու որոշակի շտկումներ:

Գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ո՞ր միջոցառումներն են համարում ամենաարդյունավետը | Աղյուսակ 3.25

Ծրագիրը	Ծրագրերից օգտվողների թվաքանակի կշիռն ընդհանուր հարցվածների նկատմամբ	
	Ծրագրերից օգտվողներ	Ծրագրերից չօգտվողներ
Ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում	45%	32%
Գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալություն՝ լիզինգ	15%	9%
Ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալություն՝ լիզինգ	5%	9%
Ռոտզման համակարգերի արդիականացում	0%	27%
Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրում	24%	14%
Փոքր ու միջին ջերմատների կառուցում և դրանց տեխնոլոգիական ապահովում	11%	9%


Հարցաթերթիկում ներառված է եղել նաև միջոցառումների արդյունավետության վերաբերյալ հարցվողների կարծիքը ճշտող հարց (աղյուսակ 3.25), որի պատասխանն էապես տարբերվել է ծրագրերից օգտված և չօգտված տնտեսավարողների շրջանում: Մասնավորապես՝ ծրագրերից օգտվողների շուրջ 45%-ը կարծում է, որ ամենաարդյունավետ միջոցառումը ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումն է, ապա գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրումը: Մինչդեռ ծրագրերից չօգտվողների համար երկրորդ ամենաարդյունավետ միջոցառումը ոռոգման համակարգերի արդիականացումն է: Հատկանշական է, որ ոռոգման համակարգերի արդիականացումն ընդհանրապես արդյունավետ չեն համարում ծրագրերից օգտված տնտեսավարողները, ինչը վկայում է այն մասին, որ այդ ոլորտում ծրագրերի իրականացումը չի հանգեցնում սպասված արդյունքին:

**Աղյուսակ 3.26**

*Պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ  
որոշ պնդումների մասով հարցվածների կարծիքը  
(1՝ ընդհանրապես համաձայն չեմ, 5՝ լիովին համաձայն եմ)*

	Պնդումը	Որքանով է հարցման մասնակիցը համաձայն պնդման հետ				
		1	2	3	4	5
21.1.	Պետական աջակցության ծրագրերը համապատասխանում են գյուղացիական տնտեսությունների կարիքներին:	13.8%	3.4%	17.2%	17.2%	48.3%
21.2.	Պետական աջակցության ծրագրերի մասին տեղեկությունները հեշտհասանելի են գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչներին:	31.0%	10.3%	13.8%	17.2%	27.6%
21.3.	Պետական աջակցության ծրագրերին դիմելու ընթացակարգը պարզ է և լավ մշակված	44.8%	17.2%	17.2%	6.9%	13.8%
21.4.	Պետական աջակցության ծրագրերին դիմելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը խելամիտ է և հնարավոր է պատրաստել խելամիտ ժամանակահատվածում:	37.9%	10.3%	13.8%	24.1%	13.8%
21.5.	Պետական աջակցության ծրագրերով նախատեսված աջակցության (գումարի) չափը համապատասխանում է կարիքներին և շուկայական գներին:	48.0%	4.0%	8.0%	28.0%	12.0%
21.6.	Պետական աջակցության ծրագրերը թիրախային են (օգտվում են նրանք, ովքեր իրականում դրա կարիքն ունեն):	44.4%	3.7%	11.1%	14.8%	25.9%
21.7.	Պետական մարմինների աշխատակիցները բավականաչափ բանիմաց և արդյունավետ են գյուղատնտեսության ոլորտի տնտեսություններին աջակցելիս:	51.7%	3.4%	17.2%	10.3%	17.2%
21.8.	Ոլորտի կազմակերպությունների համար պետական բյուրոկրատիայի, կանոնակարգերի, այդ թվում՝ տնտեսական գործունեության տեսակների, լիցենզավորման պահանջների հաղթահարումն անտեղի բարդացված չէ:	59.3%	7.4%	11.1%	18.5%	3.7%

Պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ որոշ պնդումների մատուցվածքների կարծիքը ստուգող հարցի միջոցով բացահայտվել է, որ տնտեսավարողների մեծամասնությունն ընդհանրապես համաձայն չէ այն մտքին, որ ոլորտի կազմակերպությունների համար պետական բյուրոկրատիայի, կանոնակարգերի, այդ թվում՝ տնտեսական գործունեության տեսակների, լիցենզավորման պահանջների հաղթահարումը անտեղի բարդացված չէ: Այսինքն՝ բյուրոկրատիայի և ընթացակարգերի վերաբերյալ տնտեսավարողները մտահոգված են: Հաջորդ խնդրահարույց դրույթը, ըստ հարցվածների մեծամասնության, պետական մարմինների՝ ոլորտի աջակցությամբ զբաղվող աշխատակիցների բանիմացության մակարդակն է: Խնդրահարույց են համարվել նաև աջակցության ծրագրերի թիրախային լինելը և աջակցության չափի համապատասխանությունը իրական կարիքներին:



Գծապատկեր 3.31

*Ծրագրերից չօգտվելու հիմնական պատճառները*

Որն է ծրագրից չօգտված տնտեսավարողների մեծ մասը՝ շուրջ 37%, որպես պատճառ նշել է ծրագրերի մասին տեղեկություն չունենալը (գծապատկեր 3.31): Զգալի է նաև աջակցության չափի փոքր լինելու պատճառով ծրագրերից չօգտված տնտեսավարողների կշիռը՝ շուրջ 11%: Այս պատկերը նշանակում է, որ գյուղատնտեսությամբ զբաղվողների շրջանում անհրաժեշտ է բարձրացնել տեղեկացվածության մակարդակը:


Աջակցության նոր միջոցառումների վերաբերյալ հարցին գյուղատնտեսությամբ զբաղվողներն առաջարկել են.

- արտադրանքի սպառման հարցում աջակցություն,
- գյուղատնտեսական արտադրանքի իրացման շուկայի ապահովման միջոցառումներ,

- գյուղատնտեսությանն աջակցող և նպաստող բոլոր միջոցների (սարքավորումների և ՀՀ տարածաշրջանում չգրանցված նոր թունաքիմիկատների) ներմուծման ընթացակարգի պարզեցում և հստակեցում,
- արտահանման աջակցություն,
- փաթեթավորման սարքավորումների ձեռքբերման աջակցություն,
- պարարտանյութերի տրամադրում,
- անհատական ոռոգման հնարավորության ստեղծում,
- ապահովագրություն:

### Փորձագետների շրջանում անցկացված հարցման արդյունքների վերլուծությունը:

Փորձագետների շրջանում հարցման համար ընտրանքը կատարվել է այնպես, որ ներառվեն տարբեր մասնագիտական մակարդակ ունեցող փորձագետներ, որոնք զգալի փորձ ունեն գյուղատնտեսության ոլորտում: Մասնավորապես՝ հարցվածների շուրջ 64%-ն ունի ավելի քան 10, իսկ նրանց կազմից 36%-ը՝ ավելի քան 20 տարվա փորձ գյուղատնտեսության ոլորտում (գծապատկեր 3.33):




Գծապատկեր 3.32

Հարցմանը մասնակցած փորձագետների կրթության աստիճանը

Գծապատկեր 3.33


Հարցմանը մասնակցած փորձագետների մասնագիտական սրածր



Գծապատկեր 3.34

Հարցմանը մասնակցած փորձագետների գործունեության ոլորտը

Հարցմանը ներառվել են փորձագետներ ինչպես պետական քաղաքականություն մշակման ոլորտից, այնպես էլ ՏԻՄ ներկայացուցիչներ, դասավանդողներ և հետազոտողներ, ինչպես նաև բիզնես ծառայություններ մատուցողներ:



**Գծապատկեր 3.35**

*Փորձագետների կողմից գյուղատնտեսության ինստիտուցիոնալ պայմանների արդյունավետության գնահատումը (1՝ չափազանց վատ պայմաններ, 5՝ չափազանց լավ պայմաններ)*

Փորձագետների կողմից գյուղատնտեսության ինստիտուցիոնալ պայմանների արդյունավետությունը գնահատվել է միջին մակարդակում: Մեծամասնությունը՝ շուրջ 96%-ը, այդ ինստիտուցիոնալ պայմանների արդյունավետությունը գնահատել է 2-5 միավորով՝ ըստ 5-բալանոց սանդղակի:

Գյուղատնտեսության ոլորտում պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ որոշ պնդումների առումով, փորձագետների համաձայնությունը ստուգող հարցի արդյունքները ցույց են տալիս, որ վերջիններս հիմնականում համաձայն են, որ գյուղատնտեսության ոլորտին աջակցությունը բարձր առաջնահերթություն է: Սակայն, փորձագետների կարծիքն էապես տարբերվում է տնտեսավարողների կարծիքից՝ ծրագրերի թիրախայնության և բյուրոկրատական համակարգի բարդ լինելու տեսանկյունից: Կարծում ենք՝ այս հարցերը բավական կարևոր են, և փորձագետների (հատկապես՝ պետական քաղաքականություն մշակողների) ու տնտեսավարողների կարծիքների տարբերությունները կարող են հանգեցնել աջակցության ծրագրերի արդյունավետության անկմանը: Հետևաբար՝ անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ վերլուծություն պատճառները բացահայտելու համար:



Աղյուսակ 3.27

*Փորձագետների կարծիքը պետական աջակցության  
